

# ԷՋՄՐԱԾԻՆ



1963

ՌՆԺԳ

Ի ՏԱՐԻ

Ստալյուսքեր - Հոկտեմբեր

9-10


# ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Թ-Ժ

1963





## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	Էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնգրեսը Հյուսիսային Ամերիկայի հայոց արևմտյան բնակչությանը և հայաստանյայց եկեղեցվա երիտասարդաց միության տարեկան տասնչորսերորդ համագումարին . . . . .	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Մայր-նովա . . . . .	4
Հ. ՄՈՒՐԱԿԱՆ—Մայր-նովայի կյանքը . . . . .	8
Սուրբ Էջմիածնի Հոգևոր ձեմարանի վերաբացումը . . . . .	13
Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ո Ւ Մ . . . . .	15
Բնեւնու-Այրեսի հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ֆանդիեզմայկը . . . . .	17
ԹՂԹԱԿԻՑ—Ռումանահայ բնական պատգամավորական ժողովի գումարումը և եկեղեցական վարչություններու ընտրությունները . . . . .	19
ԹՂԹԱԿԻՑ—Բուլղարահայ բնական պատգամավորական ժողովի գումարումը և եկեղեցական վարչություններու ընտրությունները . . . . .	22
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Պոլիս և իր դերը . . . . .	24
Գ. ՍԱՐԳՍՅԱՆ—Խոսում են տապաւնաբերը . . . . .	34
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ—Բջենի վանքը և Բջենի գյուղի մյուս հուշարձանները . . . . .	43
Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ—Գրիգոր Տաքեացու «Գիրք հարցմանց»-ի առաջին հրատարակությունը . . . . .	51
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ . . . . .	56
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի . . . . .	59




ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝  
 ՀԱՅԿԱԿԱՆ ՄՍՌ, ԷԶՄԻԱԾԻՆ  
 «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»  
 Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1963 թ.

Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. Վ Ա Ջ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Ջ Ն Ո Ց  
Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ե Ի Ս Ր Բ Ա Ջ Ն Ա Գ Ո Ց Ն Վ Ա Յ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի  
Ա Մ Ե Ն Ա Ց Ն Հ Ա Յ Ո Ց



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԵԿԱՆ ՏԱՄՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Վ Ա Ջ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Զ Ր Ի Ս Տ Ո Ս Ի,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԾԱՅՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ  
ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԶՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՈՑ, ՀԱՐԱՋԱՏ  
ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՑՆ  
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Ուրախ է բազմադարեան Սուրբ Էջմիածինը, որ Դուք, հայ երիտասարդներ, սուրբ հավատքի լոյսով լեցուած, Ձեր բարեջան թեմակալ առաջնորդ Տ. Թորգոմ սրբազան եպիսկոպոսի հովանիին ներքև, կը հաւաքուիք Եղեմ հայաքաղաքի Սուրբ Աստուածածին Եկեղեցիին սեղանին առաջ, նորոգելու Ձեր հաւատարմութեան ու ծառայութեան ուխտը Զրիստոսի Սուրբ Աւետարանին և Հայ Եկեղեցիին:

Դուք հաւաքուած էք Եղեմ, վերանորոգուած ոգեկան ուժերով, նոր ծրագիրներով խանդավառ, նոր տեսիլքներով և յոյսերով պայծառացած:

Թող Տէրը քաղցրութեամբ ընդունի Ձեր աղօթքը և Ձեր աշխատանքի վկայութիւնը, և ըլլայ Ձեզի ամենուղ զօրաւիզ ու մխիթարիչ:

Հաւատացէ՛ք Աստուծոյ Հոգիին և Անոր կենարար զօրութեան:

Հաւատացէ՛ք առաքելահիմն Հայ Եկեղեցիին և քրիստոսակերտ Սուրբ Էջմիածինին:

Հաւատացէ՛ք հայ ժողովուրդին և Ձեր երիտասարդական ուժերուն:

Արևշատութիւն և աշխատանքի անսպառ եռանդ Ձեզի բոլորիդ՝ ի շինութիւն և ի ծաղկում մեր Սուրբ Եկեղեցիին:

Եւ յաջողութիւն Ձեր շինարար բարի գործերուն:

Այսուհետև, սիրելիք Մեր, «Ջամենայն ինչ գործեցէք առանց տրտնջելոյ և քրթմնջելոյ, զի եղիջիք անբիծք և անարատք, որոհիք Աստուծոյ, անմեղք ի մէջ կամակոր և խեղաթիւր ազգին, յորոց միջի երևիցիք իբրև լուսաւորք աշխարհի (Փիլիպ. Բ 14—15):

Վ Ա Ջ Գ Է Ն Ա  
ԾԱՅՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐԶ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10-ն օգոստոսի  
1963 Փրկչական ամի,  
և ի տումարիս Հայոց ՌՆԺԳ,  
ի մաղիավանս Սրբոյ Էջմիածնի:



## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Ս Ա Յ Ա Թ - Ն Ո Վ Ա

(Ծննդյան 250-ամյակի առթիվ)

Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ, հոկտեմբեր ամսին նշվում է հայ ժողովրդի տաղանդավոր վավակ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը:

Դա մի սրտառուչ առիթ է, որ քաղաքակիրթ աշխարհը իր հարգանքի և երախտագիտության սրտագին տուրքը բերի հայ մշակույթի արժանավոր ներկայացուցչի, գուսան և երգիչ Սայաթ-Նովայի անթառամ հիշատակին, որը երգել է սերն ու բարեկամությունը, արդարությունն ու իրավունքը, հավասարությունն ու ժողովուրդների եղբայրությունը:

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը սեփականությունն է առաջավոր մարդկության: Նրա անկրկնելի Տաղարանը հայ ժողովրդի հանձարի սրբական ավանդն է համաշխարհային մշակույթի զանձարանին:

Անցյալի մշուշից, ժամանակի խորքից մեզ է նայում Սայաթ-Նովան, իր ողջ հերոսական կյանքով ու տխուր ճակատագրով, իր ազնիվ հոգու, պայծառ մտքի բովանդակ գրավչությամբ:

1963 թվականը, հայրենի կառավարության որոշմամբ, հայտարարվել է հոբելյանական տարի:

Հոկտեմբերի 20—22-ին, համաժողովրդական խանդավառությամբ, Երևանում, պետականորեն կնշվի մեծ գուսանի ծննդյան 250-ամյակը:

Հայ հասարակայնությունը, մեր մտավորականությունը, հայ մամուլը մեծ հանդիսավորությամբ և խոր երախտագիտությամբ նշել են և շարունակում են նշել մեծատաղանդ երգիչ-գուսանի, փիլիսոփա բարոյախոսի, հայրենասեր և հավատավոր Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը:

Մեծ բանաստեղծի հոբելյանը հայ ժողովրդի հետ սրտագին մասնակցությամբ նշում են ոչ միայն Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները, որոնց լեզվով նա ստեղծագործել է ավելի քան 25 տարի, այլ նաև Սովետական Միության համարյա բոլոր ժողովուրդները, որոնց համար նույնպես թանկագին ու նվիրական են Սայաթ-Նովայի անունն ու անմահ գործը, որոնք նվիրված են եղել միաժամանակ ժողովուրդների եղբայրության, ազգերի համագործակցության և նրանց պայծառ ապագայի վեհ իդեալներին և ձգտումներին:

Սայաթ-Նովան, դուրս գալով հայ իրականության սահմաններից, դարձել է միջազգային առումով սիրո, բարեկամության, ապատության խորհրդանիշը և ճշմարտության բաջամարտի բարոյիչը:

Երբեք պատահականություն չէր որ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը այսպես վերածվեր միջազգային հարգանքի ցնծատոնի և հայ մշակույթի հաղթանակի:

Բայց Սայաթ-Նովայի անունը ամենից ավելի նվիրական ու սիրելի է ամեն մի հայ մարդու համար: Նա իր պայծառ ողջ կյանքը, առանց մնացորդի, նվիրել է իր ժողովրդին, որպես «խալխի նոքար», որը «համով ղուլուղ պիտի անի» ժողովրդին:

Սայաթ-Նովան, որպես բանաստեղծ և մտածող, որպես երաժիշտ և երգիչ, որպես հայ հավատավոր մարդ, մի ոսկեծուլ ամբողջություն է:

Սայաթ-Նովայի ստեղծագործությունը հանդիսացավ այն հիմնաքարերից մեկը, որի վրա հետագայում վարգացավ մեր նոր քնարերգությունը:

Սայաթ-Նովան ինքնատիպ երգիչ է և բանաստեղծ: Նա իր ստեղծագործությունների թեմատիկայի բազմապատկանությամբ և ձևի կատարելությամբ, բացառիկ և ուրույն տեղ է գրավում մեր միջնադարյան քնարերգուների՝ Կոստանդին Երզնկացու, Գրիգոր Աղթամարցու և ուրիշների համաստեղծության մեջ: «Սայաթ-Նովան հայ բազմադարյան քնարերգության այն եզակի վարպետներից է, որի բանաստեղծություններն առանձնապես աչքի են ընկնում իրենց արտակարգ մեղեդիությամբ, խորը երաժշտականությամբ, բազմապատկան և ներդաշնակ չափերով, որի ստեղծած գեղարվեստական պատկերները հիացնում են իրենց բացառիկ թարմությամբ և գունագեղությամբ» (Երևան, «Գրական թերթ», 1963 թ., ապրիլ 26, № 17):

Հովհաննես Թումանյանը գրում է. Սայաթ-Նովան «մոդա չի, որ ժամանակի ընթացքում ծանծրացնի և փոխվի... գեղեցիկ ձևի մեջ մի մշտական հուր հոգի է նա, մի ապնիվ և լիքը սիրտ, մի հարապատ հպոր շունչ, որ մեր աշխարհի հարապատ շնչի նման միշտ խաղալու է Կովկասի ժողովուրդների վրա...»:

Սայաթ-Նովայի կյանքով և ստեղծագործության վերլուծմամբ կբաղվել են հայ և օտար բազմաթիվ գրականագետներ, բանասերներ, սկսած 1852 թվականից մինչև մեր օրերը:

Այստեղ երախտագիտությամբ անտը է հիշել անունը թիֆլիսեցի հանրածանոթ բժիշկ և բանասեր Գ. Ախվերդյանի, որն առաջինը 1852 թվականին իր «լոյս գցած աշխատասիրութենով» (Մոսկվա) հրապարակի վրա դրեց Սայաթ-Նովայի կյանքով և ստեղծագործությամբ կբաղվելու հարցը:

Նույն թվականին, ռուս բանաստեղծ Յա. Պոլոնսկին, «Կավկաս» ռուսատառ թերթում, «առաջին գրավոր և ջերմ խոսքն ասաց երգչի մասին, իր բարեկամ Գ. Ախվերդյանի դեռևս անտիպ ժողովածուից վերցնելով և հրապարակ հանելով երգչի մի քանի տաղերը: Նա գրում է այնտեղ, որ Սայաթ-Նովայի երգերը «բնավ նման չեն ոչ հարևան ցեղերի երգերին և ոչ էլ այլ երգերի, որ եկել են Արևելքից», որ «չափազանց անհատական» այդ հեղինակի երգերում «կա քիչ երևակայություն, բայց շատ կգացմունք» (Մ. Հասրաթյան, «Սայաթ-Նովա», Երևան, 1959 թ., էջ 311):

Այնուհետև մեծ երգչի երգերով կբաղվել են գրականության և գիտության մեջ ճանաչված խոշոր դեմքեր՝ Գ. Պատկանյան, Մինաս-Չերապ, Գ. Ասատուր, Ա. Չոպանյան, Գ. Այվազովսկի, Ն. Մառ, Ա. Խախանով, Ա. Լայստ, Հ. Թումանյան, Գ. Բաշինջաղյան, Ի. Գրիշչևիչի, Գ. Լևոնյան, Գ. Լեոնիժե, Լեո, Լ. Մելիքսեթ-Քեկ, Կ. Կեկելիժե, Մ. Աբեղյան և ուրիշներ:

Ռուս գրականագետ, բանասեր և հայ մշակույթի քաջահմուտ Վալերի Բրյուսովը 1916 թվականին «Հայկական պոեզիայի անթոլոգիա»-ն պատրաստելիս, թարգմանեց Սայաթ-Նովայի երգերից մի քանիսը, նրան դասելով «առաջնակարգ այն պոետների շարքին, որոնք իրենց հանճարի պորությամբ դադարում են մեկ ժողովրդի սեփականություն լինելուց, բայց դառնում են ողջ մարդկության սիրելին»:

Վ. Բրյուսովը Սայաթ-Նովային համարում էր «երկնային այն հազվագյուտ պարզներից... որոնք օրհնանք են թողնում իրենց դարին և իրենց ժողովրդին» (Մ. Հասրաթյան, «Սայաթ-Նովա», էջ 311):

Մեր օրերին, 1945 և 1959 թվականներին, Սայաթ-Նովայի կյանքով և ստեղծագործությամբ գիտական մոտեցումով և ձեռնհասորեն կբաղվել է հայտնի բանասեր և պատմաբան Մ. Հասրաթյանը, որն «առաջին անգամ հայերենի թարգմանելով Սայաթ-Նովայի մի քանի տասնյակ այլալեզու խաղերը և ճշտելով ու խմբագրելով նրա մյուս խաղերի խաթարված ու խանգարված հարյուրավոր բառերն ու տողերը, դրանց դարձրեց մասնագետների ու ժողովրդի անկապտելի սեփականությունը» (Ա. Ղանալանյան. «Գրական թերթ», 1963 թ., № 17):

Սայաթ-Նովան ծնվել է 1717 թվականին Սանահին գյուղում: Մկրտության անունը եղել է Հարություն (Արուֆին): Նա իր մասին գրել է.

**«Սայաթ-Նովու վաթանիցըն հարց կուտան.  
Մեկը կուտ Հինդն է, մեկը՝ Համդան...  
Վաթանս Թիֆլիսն է, կողմը՝ Վրաստան,  
Մերս հավաբարցի, հերս հալաբցի»:**

Սայաթ-Նովայի կյանքն ու գործունեությունը ընդգրկում են երկու տարբեր շրջաններ, առաջինը ծննդյան թվականից մինչև 1765 թվականը, երկրորդը 1765—1795 թվականները:

Սայաթ-Նովան իր նախնական կրթությունն ստացել է Սանահին վանքում, ուր ծանոթացել է հայ մատենագրության, գրաբարի, «Հարանց վարք»-ին, ժամասացության: Նա անգիր մեջբերումներ է կատարում հայերեն Աստվածաշնչից:

Այնուհետև, 12 տարեկան հասակում, Սայաթ-Նովան եղել է արհեստավոր, կթաղվել է ջուլհակությամբ կամ դերձակությամբ. նա այդ մասին գրում է.

**«Տասնըրկու տարեկանում ինձ հանձնեցին  
ուստաքարին»:**

Սայաթ-Նովան «պստուց» օժտված է եղել բացառիկ ընդունակություններով, «անլուգական նվագողի, գերող ձայնով օժտված երգչի, ստեղծագործող երաժշտի» շնորհներով:

**«Գլուխ դրի ամենան խաղի.**

**Յիս չիմացա վունց փաթաթվեց աշըղութինն  
իմ գլխին.**

**Լուս դառնա իմ մոր հոբին,  
Բալբամ կաթի հիդ իմ ծըծի...»:**

1737 թվականին, Սայաթ-Նովան որպես աշուղ ուխտի է գնում Մշո Ա. Կարաատես վանքին: Հետագայում նա գեղեցիկ ծոն է նվիրում Մշո Ա. Կարապետին՝ որպես երգի, արվեստի հովանավոր մեծ սրբի և իր միակ մուսայի (տե՛ս Մ. Հարաթյան, «Սայաթ-Նովա», էջ 235):

**«Մշու սուլթան սուրփ Կարապիտ, երկինք է  
հասլալ գովքըն քո.**

**Գլուխ վարդապիտ ճշմարտության, չկար  
հավասարըն քո...»:**

Այնուհետև Սայաթ-Նովան ամուսնանում է սանահնեցի Շահվերդյան ընտանիքից Մարիամ անունով մի աղջկա հետ և ունենում 4 պավակ:

Ապա մեծ երգչի առաջ բացվում է նախ հաջողության, փառքի և միաժամանակ խորունկ վշտի և հուսահատության մռայլ ուղին:

1744 թվականին նա վրաց արքունիքում «սա-  
վանդար» է, նվագող և երգիչ:

1753 թվականին շնորհապրկվում է և հեռա-  
նում պալատից:

1759 թվականին նա քահանա է Տ. Ստեփա-  
նոս անունով, Ջաբաթալայի Կախի կոչվող հա-  
լաբենակ փոքրիկ ավանում:

Սայաթ-Նովայի պալատից հեռացման և շնոր-  
հապրկման իսկական պատճառը դեռևս մնում է  
չլուսաբանված:

1770 թվականին, կնոջ մահից հետո, մոտա-  
վորապես 60 տարեկան հասակում, Սայաթ-  
Նովային հանդիպում ենք Հաղբատի վանքում,  
որպես միաբան և եկեղեցու լուսարար.

**«Կու հաքնիմ մազեղեն, կու հաքնիմ չալըն,  
Կերթամ ման գու քամ վանքիրըն մե մեկ»:**

**«Հաղպատու լուսարար Սայաթ-Նովեն իմ,  
Մե կանթեղըս վառելու ձեթ չունիմ...»:**

Մինչև իր մահվան կամ նահատակության  
թվականը՝ 1795, Սայաթ-Նովան մնում է որպես  
միաբան Հաղբատի վանքում, ուր գրի է առնում  
առավելաբար իր փիլիսոփայական-խոհական  
երգերը:

1795 թվականին, ներքինի Աղա-Մահմադ  
խանի արշավանքների ժամանակ, Թիֆլիսում,  
Ս. Գևորգ եկեղեցում նահատակվում է «խալիսի  
նոքար» Սայաթ-Նովան, որպես «ճառալ Աստու-  
ծոյ».

**«Չըխմանամ քլիսադան, դոնմանամ  
Իսադան»:**

Թիֆլիսեցիք Սայաթ-Նովայի և մյուս նահա-  
տակների մարմինները ամփոփում են Մեյդանի  
Ս. Գևորգ եկեղեցում:

Մեյդանի Ս. Գևորգ եկեղեցին Թիֆլիսում  
համարվում էր Հաղբատի վանքի վանատունը,  
ուր իջևանում էր նաև Սայաթ-Նովան, երբ գա-  
լիս էր Թիֆլիս, իր պավակների տեսության:  
Երբ՝ 1751 թվականին վերանորոգվում էր Մեյ-  
դանի Ս. Գևորգ եկեղեցին, Սայաթ-Նովան մեծ  
խանդավառությամբ մի գեղեցիկ ներբող է նվի-  
րել Ս. Գևորգին.

**«Հիմքըտ վերջստին նուրեցին, չաղ արին  
Մողնու սուրփ Գևորք,**

**Քար ու կիրքտ ոչխարի կաթ շաղ արին**

**Մողնու սուրփ Գևորք,**

**Յիրգնուց լուսըն վըրետ կամար-թաղ արին**

**Մողնու սուրփ Գևորք»:**

1914 թվականին, Հովհաննես Թումանյանի և նկարիչ Գ. Բաշինջաղյանի նախածեռնությամբ, հուշարձան կանգնեցվեց Սայաթ-Նովայի գերեզմանի վրա:

Սայաթ-Նովան ճշմարիտ հայ մարդ էր և սիրում էր մեր հայրենի ավանդություններն ու սրբությունները.

**«Սայաթ-Նովեն ինքը հայ է,  
Իր հավատքին ամուր կանգնած»:**

Նա ջատագովում էր ազգային-եկեղեցական միությունը: Նա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը համարում էր որպես դրոշ ազգության և խորհրդանիշ միության.

**«Հոքիտ իստակ ու պինդ պահե, վուր արթար  
հախը մերն է.**

**Հուրը մերն է, ջուրը մերն է, հողմըն ու հողը  
մերն է:**

**Փառք արարիչ-ըստիղծողին՝ մեծ պահպանը  
մերն է.**

**Կինքը մերն է, մահը մերն է, դըրախտի բաղը  
մերն է:**

**Երեք հարուր վաթսուն ու վեց սուրփի  
աղոթքը մերն է.**

**Հիսուսին մեզ Տերն է դրգիլ՝ լուսն ու շափաղը  
մերն է:**

**Սիոնի սուրբ գերեզմանը, ապրելու տեղը  
մերն է.**

**Էջմիածնա Մայր Աթոռը և ապիպ ցեղը  
մերն է»:**

Սայաթ-Նովային սակայն խորթ էին ազգային սահմանափակվածությունն ու սնապարծությունը: «Իր ժամանակակիցներից մի ամբողջ գլխով բարձր կանգնած Սայաթ-Նովան իրավամբ համարվել ու համարվում է անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամության մի անթառամ սիմվոլ» (Մ. Հասրաթյան, «Սայաթ-Նովա», էջ 308):

**«Երեք լեզվով է Սայաթը գրել,  
Երեք ձայնով է Սայաթը երգել.  
Երեք ձայներն այն սրտիս մեջ պահել,**

**Տասնհինգ ձայնով երգել եմ ուլում»:**

գրում է վրաց բանաստեղծ Չիքովանին:

Սայաթ-Նովայի կյանքն ու ստեղծագործությունը սերտորեն կապված են Վրաստանի և Ադրբեջանի մշակույթի և գրականության պատմության պարզացման հետ:

Սայաթ-Նովան գրել է նաև վրացերեն և ադրբեջաներեն:

Նրանից մեզ հասել են շուրջ 220—225 խաղեր, որոնց մեջ ադրբեջաներեն և վրացերեն լեզուներով գրվածները կազմում են պատկառելի մի մասը նրա ստեղծագործության:

Սայաթ-Նովայի քնարերգության ազդեցությունը վրաց և ադրբեջանական եղբայրական ժողովուրդների գրականության պարզացման վրա անուրանալի է.

**«Այն սուրը, որ մեծ Սայաթին խոցեց,  
Ինձ էլ է դիպել իր բիրտ հարվածով»:**

գրում է վրացի բանաստեղծ Չիքովանին, «հայ հանճարեղ երգչի կերպարի միջոցով արտահայտելով հայ և վրացի ժողովուրդների հոգեհարապատությունը»:

Սայաթ-Նովայի քնարը հավասար չափով հույլ է և՛ վրացուն, և՛ հայուն, և՛ ադրբեջանցուն, «մեր աշխարհքի հարապատ շնչի նման»:


Սայաթ-Նովան իսկական ժողովրդական բանաստեղծ է, սիրո և մարդկային վշտի, վեհ իդեալների, ազատության ջերմ երգիչը:

Նա երեքլեզվյան իր քնարերգության մեջ մարմնավորել է Անդրկովկասի երեք եղբայրական ժողովուրդների՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների հոգեկան եղբայրությունն ու անքակտելի բարեկամությունը:

Սայաթ-Նովան այսօր էլ մեզ հետ է, մեր որոնումների մեջ, մեր աշխատանքների մեջ, մեր պայքարի մեջ: Նա քայլում է մեր շարքերում և առաջնորդում դեպի անձնվեր ծառայություն «խախ»-ին:

Ինչքան հեռանում է նա, այնքան սիրելի է դառնում մեր սրտին և հարապատ մեր խոհերին:





## Հ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

### Ս Ա Յ Ա Թ-Ն Ո Վ Ա Յ Ի Կ Յ Ա Ն Զ Ը

Հանձարներով հարուստ հայ հողը ծնեց Սայաթ-Նովային: Այն հողը, որ ծնեց Մեսրոպ Մաշտոցին, Խորենացուն, Եղիշեին, Նարեկացուն, Քուչակին: Այն հողը, որ Սայաթ-Նովայից հետո ծնեց Արովյանին և Թումանյանին... Հարկ կա՞ թվարկելու ողջ հայ պանթեոնը: Մի ձեռքը տված միջնադարի իր գրչակից եղբայրներին, մյուս ձեռքը պարզած դեպի Արովյան և Թումանյան, Իսահակյան և Չարենց՝ մեծ գուսանը կամրջում է մեր միջնադարն ու մեր կուլտուրայի նոր ժամանակաշրջանը, մի տեսակ խորհրդանշում հայ բազմադարյան կուլտուրայի էպոխաների ներքին կապը: Սայաթ-Նովան միջնադարի վերջին և նոր դարաշրջանի առաջին բանաստեղծն է: Միջնադարն է խոսում նրա ստեղծագործություններում, երբ նա «հարանց վարքի» գովքն է անում, երբ նա հոգու համար հանդերձյալ կյանքի ուղին է հարթում: Նոր, վերածնության ժամանակաշրջանն է բանաստեղծն ազդարարում, երբ իր ստեղծագործության համար իրրև բարոյական-կուլտուրական խնդիր և նպատակ՝ վերցնում է հասարակ ժողովրդին, երբ նա իրեն խալխի նոքար է անվանում, խալխի լեզվով և նրա համար խոսում ու գրում, նրա ջինջ հոգու խոսքն ասում, նրա շահերն է դարձնում իր համար կյանքի երևույթների դիտակետ:

Սայաթ-Նովան իր երգերի մեջ է: Այդ երգերի մեջ են ամփոփված նաև նրա կյանքի արտաքին փաստերը: Մնացածը հուշ է, գրույց, լեզենդ: Իրապատումն էլ շատ է նման

լեզենդի: Լեզենդ, որ հյուսված է երգչի ու բախտություններից ու վշտերից, նրա ապրած տառապանքներից ու վայելքներից, երազանքներից ու հուսախաբություններից, լեզենդ, որի վերջը ցողված է երգչի արյունով: Սայաթնովագետները նրա երգերից հանել են նրա ծննդյան թվականը 1710—12—17, նույնիսկ 1722: Հակասական, սակայն հաստատ ու որոշակի, թե ծնվել է մեծ երգիչը, պոեզիայի կախարհը՝ մի քանի տարի առաջ կամ հետ... Կամենում ենք իմանալ ովքե՞ր են նրա ծնողները, ո՞րտեղացի՞ դարձյալ պիտի դիմենք նրա երգերին:

Սայաթ-Նովու վաքանիցքը հարց կու տան. Մեկը կօսե Հինդն է, մեկը՝ Համադան... Վաքանս Թիփլիսն է, կողմը՝ Վրաստան, Մեքս հավլաբարցի, հեքս հավլաբարցի:

Բանաստեղծի հիշատակումներից իմանում ենք, որ նրա հոր անունը Կարապետ է, մորը՝ Սառա: Վրաստանի վերջին թագավորի որդի Թեյմուրազի հուշերը հիմք են տալիս ասելու, որ Հալիպից գաղթած և Հավլաբարից կին առած Կարապետը միառժամանակ հիմնվել է Սանահին գյուղում, եղել է արքայազն Գիորգի 13-րդի գլխին՝ կիսանկախ ճորտը: Այնուհետև միահյուսվում են հուշերն, ավանդություններն ու ենթադրությունները: Արդյոք ո՞րտեղ կրթություն ստացավ ապագա մեծ պոետը: Հավանական ենթադրությամբ՝ նույն Սանահնի վանքի դպրոցում, որը մեծ տրա-

դիցիա ունեցող դպրոցներից էր միջնադարյան Հայաստանում: Այդ դպրոցում, անշուշտ, նրա առջև իր գանձերը բացեց հայ հին դասական լեզուն, այդտեղ նա ծանոթացավ հայ մատենագրութեանը, պոեզիայի այն ժամանակ տակավին նոր-նոր հայտնագործվող նմուշներին, լցվեց հպարտութեամբ ու ակնածանքով դեպի հարազատ ժողովրդի պատմական անցյալը:

Պատանի Հարությունը փոխադրվում է Քիֆլիս, զբաղվում ջուլհակութեամբ: Սակայն ավանդութուն հյուսուողները չեն կամենում, որ իրենց սիրած երգիչ-բանաստեղծը մի սովորական ջուլհակ կամ ջուլհակի սովորական աշակերտ եղած լինի, ուստի պատմում են, որ նա իր արհեստակիցների մեջ աչքի ընկավ առանձին շնորհքով, կատարելագործեց իր արհեստի գործիքները, հնչուացրեց աշխատանքը՝ գործվածքը դարձնելով նուրբ ու գեղեցիկ:

Երկա՞ր զբաղվեց արդյոք նա այդ արհեստով: Հագիվ թե՛ Երգի և երաժշտության սիրահար Քիֆլիսը, ուր շատ էին անվանի աշուղները, ուր մեջլիսներն ու աշուղական մրցութունները բաղաբի առօրյայի անբաժան մասն էին կազմում, հագիվ թե Հարությունի մեջ երկար նիրհած թողներ նրա ստեղծագործական գարմանահրաշ տաղանդը: Մանավանդ որ հենց արհեստավորների շրջանում էին լինում աշուղները, այդ միջավայրում գտնում իրենց ունկնդիրներին ու երկըրպագուներին, և շատ անգամ էլ այդ աշուղները, միաժամանակ, այլևայլ արհեստների տեղ մարդիկ էին: Գեղեցիկ ու պատկերավոր էր ասել բանաստեղծը՝ շատ վաղ հասակից իր արվեստին նվիրվելու մասին.

Յիս չիմացա վունց փաթաքվից աշրղութինն  
 իմ գլխին,  
 Ինձ դիվանա Մեջլում շինից, յիդ դրից իմ  
 կրակին,  
 Ինձրն ամիս անեցրիլ է, լուս դառնա իմ մոր  
 հոգին,  
 Բալբամ կաթի հիդ իմ ծրծի, էն շիրիս իմ  
 ման գալի:

Հավանաբար շատ ժամանակ պետք չեղավ, որպեսզի երգչի համբավը տարածվեր բաղաբում և նրա սահմաններից հեռու: Նրան կանչում ու գերում են նոր, անծանոթ վայրեր, նոր, անծանոթ ունկնդիրներ: Արևելքում հուշակված աշուղների հետ չափվելու տենչն էր արթնանում նրա մեջ: Արևելքի և Արևմուտքի խաչողիներում ընկած, տակավին անծանոթ հայրենիքում՝ Հայաստանում լինելու երազանքը դադար չի տալիս նրան... Եվ ավանդութունը նրան տանում է հայրենի երկիր

Հայաստան: Ինչը երազ էր թվում՝ դարձավ իրականություն, ինչը անհասանելի էր համարվում՝ տեսավ ու շոշափեց: Դրանից հետո անշուշտ, թուրքերեն իր մի տաղում նա գրեց պարծանքով. «Էջմիածնա Մայր Աթոռը և ազիզ ցեղը մերն է»: Դրանից հետո անշուշտ, նա իր մի բանաստեղծության մեջ օգտագործեց զարնանը վարարած Արագի պատկերը՝ բացահայտելու համար իր խոռվքոտ վիճակը. «Գծվիլ իմ Արագի նման...»:

Արդյոք գրերի հայր Մաշտոցի շիրիմը չէ՞ր որ մեծ երգչին հուշեց «Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե» անմահ տողը: Եվ նույն սուրբ շիրիմը չէ՞ր դարձյալ, որ նրա հոգում խոսեց—«Գրիր ինչ լեզվով որ կամենում ես, ինչ լեզվով որ կարող ես՝ թուրքերեն, ֆարսերեն, վրացերեն, սակայն իմացիր, որ մայրենի լեզվով գրելիք քո երգերի մեջ է քո անմահությունը նախ և առաջ...»:

Ավանդութունը նրան տանում է ավելի հեռուները՝ Տաճկաստան, Պարսկաստան, Նազիր շահի զորքերի հետ, իբրև շահի երաժշտանոցի երաժիշտ և Հերակլ թագաժամանգին ուղեկցող ու բարեկամ, տանում մինչև Հնդկաստան... Անշուշտ պատահական չպիտի համարել նազանու գովքն անող բանաստեղծության հայտնի տողը—«Թամամ աշխար պաուտ էկա, շքողի Հաբաշ, նազանի...»: Անհնարին չէ, որ նա եղած լինի նաև Արևմուտքի որոշ երկրներում:

Տարիներ տևող շրջագայութունից Հարություն—Սայաթ-Նովան վերադարձավ արվեստով հասունացած ու ճոխացած, վերադարձավ հաղթանակներ տարած... Տակավին մինչև Քիֆլիսից բացակայությունը նրան գիտեին վրացական արքունիքում, այժմ Հերակլ երկրորդ արքան ցանկացավ մեծ երգչին ընդմիշտ կապել արքունիքի հետ: Վաղեմի տրագիցիա էր, երբ հայ գուսանները, գիտուններն ու արվեստի մարդիկ պատվավոր տեղ էին գտնում այդ արքունիքում: Սայաթ-Նովայից առաջ, վրաց արքունի երգիչն էր նշանավոր հայ աշուղ-բանաստեղծ և նկարիչ Նաղաշ Հովնաթանը: Սայաթ-Նովայի օրոք արքունի նկարիչն էր Նաղաշ Հովնաթանի թոր՝ Հովնաթան Հովնաթանյանը:

Տասնութերորդ դարում Քիֆլիսի հայ ազգաբնակչությունը մեծ թիվ էր կազմում: Հայ վաճառականները սերտ կապեր ունեին արքունիքի հետ, ուր, ի դեպ, վրացերենին զուգահեռ, գործածական էր նաև հայերենը:

Ինչ դերով էր հանդես գալիս Սայաթ-Նովան արքունիքում: Նա սովորական սազանդա՞ր էր արդյոք կամ աղեկիկնադաներ կազմակերպող սովորաբար ուրախացնող-զվարճաբան, որը կոչված էր պարապությունից ձանձրացող արքունի վերնախավի ձանձրույ-

թը փարատել իր երգերով ու կատակներով: Ինչ խոսք, որ նա արթունիքում հաճախ էր մեջլիսների զարդը դառնում և իր զմայելի երգերով ու նվագով գերագույն հաճույք պատճառում ունեցողներին: Սուր խոսքն ու կատակը ևս իրենց տեղն ունեին այդ մեջլիսներում, ինչպես նաև վարպետ աշուղների հետ հաղթական մրցույթունները: Սակայն իրականում շատ ավելի մեծ էր Սայաթ-Նովայի դերը արթունիքում և անձամբ Հերակլ Երկդերը արթունիքում և անձամբ Հերակլ Երկդերի համար, քան տրադիցիայով այն պատկերացվում է: Նա Հերակլի վրա ազդեցություն ունեցող դեմք էր, արքայի համակրելին: Հերակլը հաշվի էր առնում վերջինիս կարծիքները: Ավանդույթունն ասում է, որ մեկ անգամ պարսից ղեսպանի հետ բանակցելիս արքան նեղ կացություն մեջ է ընկնում և ստիպված՝ օգնության կանչում իմաստուն և մարտաբարան բանաստեղծին: Վերջինս իր մտածված ու սրամիտ հարց և պատասխաններով ստիպում է թշնամական երկրի ղեսպանին վրացական արթունիքից հեռանալ պարտված ու ամոթահար:

Անհավանական չէ այն ենթադրությունը, թե Սայաթ-Նովան գործուն մասնակցություն է ունեցել Հերակլ Երկրորդի և հայազգի քաղաքական նշանավոր գործիչ Հովսեփ Էմինի հայտնի բանակցություններին, ուր քննարկվում էր արևելյան երկու բռնակալ տերությունների՝ Իրանի և Թուրքիայի դեմ միացյալ հայ-վրացական պետություն և բանակ ստեղծելու հարցը—երկու եղբայրակից ժողովուրդների համար շահագանց կենսական մի հարց:

Սայաթ-Նովան իր կողմից բարձր է գնահատել Հերակլ Երկրորդին և ջանացել անկեղծ նվիրվածությամբ ծառայել նրան: Նրան անվանել է իր հոգևոր հայրը: Պարծանքով գրել՝ «Սայաթ-Նովու բախավուրին Շահբազ—Երեկլե ին ասում»:

Եվ, սակայն, խաղաղ չընթացավ Սայաթ-Նովայի կյանքն արթունիքում: Ավելին. բանաստեղծի կյանքի այդ ժամանակահատվածը լարված գոտեմարտի մի պատկեր է ներկայացնում, գոտեմարտ, ուր հաղթանակ էր տանելու ոչ թե արդարն ու ազնիվը, լուսավորն ու բանականը, այլ կոպիտ ուժը, բռնությունը, կամայականությունը՝ որոնց աջակիցներն էին դավն ու խարդավանքը:

Իր շանթարձակ քնարով, տարիների ընթացքում, Սայաթ-Նովան վաստակեց թավադներից շատերի գայրույթն ու ատելությունը: Իրենից ներթողներ ակնկալող վերնախավի մարդկանց նա մատուցեց իր թունալի երգիծանքը: Մարդկային կերպարանքը կորցրած Ժամանակի իշխողների հետ աշխատա-

վորության ծոցից դուրս եկած բանաստեղծը այլ լեզվով չէր կարող խոսել: Որքան կարող էր արքան երգչի նկատմամբ պահպանել մեկենասի և հովանավորի դերը՝ հաճախ իր վրա կրելով նրա հակառակորդների հարվածները: Վերջիվերջո թանկեղենի արքան պիտի տեղի տար: Եվ այդ վաղների արքան պիտի տեղի տար, քան կարելի բանը կատարվեց ավելի վաղ, քան կարելի էր սպասել: Վճռական դեր խաղաց բանաստեղծի ողբերգական սիրավեպը:

Ավանդույթունն ասում է, և բանաստեղծի սքանչելի տաղերն էլ հաստատում են, որ արթունիքում նա ունեցել է նվիրական սիրո մի գաղտնիք, որ միայն վաստահել է իր զմայելի երգերի դավթարին: Սիրո առարկան եղել է Թեյմուրազ արքայի դուստր և Հերակլ արքայի բույր շքանք Աննան: Երգչի հակառակորդների խարդավանքները անհետևանք չեն անցել: Բացվել է նվիրական գաղտնիքը: Երգչի դեմ գլուխ են բարձրացրել նրա թշնամիները: Այլ պարագաներում արքայից սաստված, երգչին շարախոսող լեզուները այս դեպքում բացվել են, դարձել լկտի և համարձակ:

Մեկն ինձ կօսե՝ «գրեա՛, մաշված շուր իս դուն»,

Մեկն էլ կօսե՝ «մե հոտած ջրհուր իս դուն»...

գանգատվում է բանաստեղծը արքային: Եվ ապա՝

Մեջլիսումն էլ նուր խաղ՛ արիև, ծաղրեցին,  
Յիս ոսմիկ իմ, ինձի վուխը—վուխը  
բաղեցին.

Ում առաջ էլ ստիս ցավը մաղեցի,  
Վուխը ինձ ասիև՝ «մե անպատիվ հուր իս դուն»:

Նույն բանաստեղծությունից իմանում ենք, որ երբ երգիչը փորձ է արել, ըստ սովորության, «սազը բոբած» ինքն էլ «զարթըրված» արքայի մոտ գնալ՝ կոպիտ խոսքերով իրեն հետ են տվել և նա վերադարձել է «վունց որ փուռը կոտրված»:

Բանաստեղծի գանգատների հանդեպ արքան արդեն անտարբեր էր դարձել: Երկրի ներքին և արտաքին կյանքի հարցերում պրոգրեսիվ հայացքներ դավանող Հերակլ Երկրորդը, տոհմային արժանապատվության հարցում նախապաշարմունքների նույնպիսի գերի էր, ինչպիսին որ նրա շրջապատն էր: Սայաթ-Նովայի սերը Աննայի հանդեպ նա անկարող եղավ այլ կերպ դիտել, քան խոստագույն պատժի արժանի մի հանդուգն քայլ երգչի կողմից: Եվ արքան վրեժխնդիր եղավ, ստիպողաբար դարձնելով նրան կրոնավոր:

Արբունիքից վտարվելը ցավազին ապրումների պատճառ դարձավ երգչի համար: Եվ դա հասկանալի է: Տեղի էր ունենում երգչի կյանքի մեծ դրամայի ողբերգական հանգուցալուծումը: Անհույս սիրահարը ոչ միայն առհավետ անջատվում էր իր սիրո առարկայից, այլև հարկադրաբար հագնելով կրոնավորի սև սքեմը, մի տեսակ կենդանի գերեզման էր իջնում: Մեղչիսների դարդը, մուսաների ընտրյալը, արվեստների սպասավորը, իր անձով կենդանի կյանքն ու աշխարհը ներկայացնող մեծ անհատը կողոպտվում, մերկանում էր այդ բոլորից, կալանքի և արգելքի տակ դրվում, որպեսզի այնուհետև լուր նրա ազատասիրտ լեզուն, ընդմիջտ պապանձվեր մարդկանց անբավ ուրախություն պարզևող նրա քամանչան, որպեսզի այլևս չբացվեր նրա խաղերի դավթարը՝ սիրո և իմաստության հավերժող գիրքը: Մեծ էր երգչի կորուստը: Խոցվեց բանաստեղծը մինչև հոգու խորքը, դառնացավ, ծառս եղավ ըմբոստ ոգին և իր մեծ հոգու և մեծ բանականության խորք գիտակցությամբ թելադրված այս խոսքերն ուղղեց արքային.

Ամեն մարք չի՛ կանա խրմի՛ իմ ջուրն  
 ուրիշ ջրեմ է,  
 Ամեն մարք չի՛ կանա կարթա՛ իմ գիրքն  
 ուրիշ գրեմ է:  
 Բունիաթըս ավագ շիմանա՛ս՝ ֆարափ է,  
 ֆարուկըրեմ է՛  
 Սելավի պես, առանց ցամփիլ, դուն ջուտով  
 խարաք մի՛ անի:

\* \*  
 \*

Խոտվահույզ, փոթորկոտ կյանքը պարփակվեց Հաղբատի վանքի սառը խցում: Մեծ երգչի ապրած մեծ դրաման մտավ իր ողբերգական փուլը: Բունակալությունը կարող էր խալխին այնքան զոդ ու սափա շանց տվող երգչին հագցնել սև կապա և ուղարկել եկեղեցի ու վանք: Սակայն կարո՞ղ էր նրան դարձնել կրոնավոր՝ էությամբ: Կարո՞ղ էր փշրել ու խորտակել հույզերի այնքան զեղեցիկ, այնքան մարդկային աշխարհը, սիրառատ ու կենսասեր, մարդամոտ ու մարդասեր սիրտը դատարկել ու ամալացնել... Ո՛չ, «Հեթանոս» երգիչը վանքի մոլթ կամարների տակ չդավաճանեց հին աստվածներին, չդարձավ հուր ծառա Քրիստոսի: Վանքում նա հազար-հազար անգամ պիտի կրկներ տարիներ առաջ գրած տողերը.

Թե վուր հոգուս կամփն իս անում,  
 մարմինս բեղամաղ է ըլում՝  
 Վո՛ւր մե դարդիե կու դիմանաս, դուն  
 ջրատար Սայաթ-Նովա:

Հազար-հազար անգամ պիտի մրմնջար՝  
 Ումբըս էրազի պես գրեաց,  
 ծառս շխեքած գիտենափ:

Հավաստի աղբյուրները վկայում են, որ չլուսեց երգչի քամանչան, չփակվեց երգերի գիրքը: Վանքում գրած տխուր տաղերում նա բողոքեց իրեն «սիվ ու սուր լիբաս» հաքցնողների դեմ, ողբաց, ո՞ր լայն ու ծով աշխարհի մեջ իր տունը Վանքի նիզ խուցը էլավ:

Սայաթ-Նովայի կյանքի Հաղբատի տարիների մասին ևս ժողովրդական ավանդություններ հետաքրքրական վկայություններ է պահել: Հիշենք դրանցից մեկը: Արևելքում հուշակված մի աշուղ լսած լինելով Սայաթ-Նովայի համբավը՝ Քիֆլիս է գալիս նրա հետ մրցելու Աշուղ Քիֆլիսում ամենուրեք նրան է որոնում, բայց չի գտնում: Բայց ահա պատահում է մի կրոնավորի: «Որտե՞ղ է այս քաղաքում աշուղ Սայաթ-Նովան» — հարցնում է սա հոգևորականին: Վերջինս պարսիկ աշուղին պատասխանում է այսպիսի երկիմաստ խոսքով.

— Բիլմանամ, գյուրմանամ, քանմանամ —  
 չգիտեմ, չեմ տեսել, չեմ ճանաչում: Սակայն  
 շեշտադրությունը փոխելու դեպքում դա կարող է հասկացվել այսպես.

Ի՛ր՝ մանամ, գյու՛ր մանամ, քա՛ն մանամ —  
 իմացի՛ր՝ ես եմ, տե՛ս՝ ես եմ, ճանաչի՛ր՝ ես եմ:

Եկվոր աշուղը չի հասկանում սրամիտ պատասխանի իմաստը: Հոգևորականին մնում էր ասել, որ Սայաթ-Նովան հենց ինքն է, և քանի որ դիմացինը չի հասկացել իր պատասխանի իմաստը, ուստի արդեն նա պարտված է: Օտարական աշուղը ամոթահար թողնում է Քիֆլիսը:

Ավանդություններում պատմվող դեպքերը հենց այդպե՛ս են եղել, ինչպես որ հասել են մեզ կամ իրո՞ք եղել են, դժվար է պնդել: Բայց որ պատմվող դեպքերի միջից մեր առջև բարձրանում է սիրելի երգչի ծանոթ, հարազատ կերպարը, կյանքի սիրով այրված ու վառված Սայաթ-Նովան՝ դա աներկբայելի է: Գեղեցիկ կյանքից է հյուսվում գեղեցիկ լեզունը:

Ժողովրդական ավանդությունը, սակայն, ազդեց կանգ չի առնում: Նա հետևում է մեծ երգչին մինչև նրա կյանքի վախճանը: Սովորական չեղավ երգչի կյանքը: Սովորական չեղավ նաև նրա մահը: Այս միտքն է մեզ հուշում ժողովրդական զրույցը: Ավանդությունը Սայաթ-Նովայի մահը կապում է Աղա Մահ-Խանի՝ դեպի Քիֆլիս կատարած արշավանքի հետ: Համաժողովրդական այդ աղետը տեղի ունեցավ 1795 թվականի սեպտեմբերին:

Այդ մեծ աղետի օրերին իր կյանքի ապահովությունը շատ հոգեց բանաստեղծին, այլ երկրի ու ժողովրդի վիճակը: Առնելով օրհասական դեպքերի լուրը, Սայաթ-Նովան անմիջապես թողնում է վանքը, շտապում թիֆլիս: Հոգ տանելով զավակներին Մոզղոկ փոխադրելու մասին՝ ինքը մնում է թիֆլիսում, ժողովրդի հետ կիսելու ճակատագրի հարվածները: Մնալով թիֆլիսում, պատմում է զրույցը, Սայաթ-Նովան գնում է Հերակլ արքայի մոտ և ասում. «Ես ծնվել եմ այստեղ, այստեղ էլ պետք է մեռնեմ թշնամու դեմ մղած պայքարում»: Նա հավաքում է իր շուրջը քաղաքի բոլոր սազ ու քամանչա նվագողներին և երգով ու նվագածությամբ առաջնորդում զորքին ու ժողովրդին դեպի կռիվ: Մի որոշ շրջան քաղաքի պաշտպանները հաջողություն են ունենում, սակայն հետո հաջողությունն անցնում է թշնամու բանակի կողմը: Նարեղալի բերդի մոտ, շատերի հետ զոհվում է նաև Սայաթ-Նովան:

Մեկ այլ պատում մի փոքր այլ կերպ է ներկայացնում Սայաթ-Նովայի նահատակությունը: Տեսնելով թշնամու կողմից նվաճված քաղաքի բնակչության անելանելի վիճակը, երգիչը որոշում է դեսպան գնալ շահի մոտ, համոզված, որ աշուղին արտոնված է մուտք գործել մահն տեղ: Սակայն նախքան կգտներ շահին՝ նա սպանվում է պարսից հրոսակների կողմից:

Եվ, վերջապես, երրորդ, ամենատարածված պատումն ասում է. Սայաթ-Նովան մի ահագին բազմության հետ ապաստան է գտնում Մեծ բերդի եկեղեցում: Պարսիկները շրջապատում են եկեղեցին և միառմի դուրս բերելով պաշարյալներին՝ ստիպում են դավանափոխ լինել, իսկ հրաժարվողներին տեղնուտեղը սպանում են: Հերթը հասնում է երգչին: Նրան ևս առաջարկում են հրաժարվել իր հավատից: Դրան Սայաթ-Նովան պատասխանում է.

Զրխմաճամ Բլխաղան,  
Դոնմաճամ Խաղան...  
(Զեմ դուրս գա եկեղեցուց,  
Զեմ հրածարվի քրիստոսից):

Եվ նրան սրախողխող են անում: Թիֆլիսի ժերունիներից լսած այս ավանդությունը պատմելով, Գ. Ախվերդյանն այնուհետև ավելացնում է. «Մե քանի օրից, պարսից թիֆլիսեն դուրս գնալուց հետո, վեր են առնում նրա մարմինն ու թաղում Մեծ բերդի եկեղեցու հյուսիսային փոքր դռան առաջին»:

Ըստ էության, երեք պատումներն էլ նույն բանն են ասում: Մեծ երգիչն ապրեց և մեռավ ժողովրդի համար:

(Երևան, «Գրական թերթ», 1 ապրիլի 1963 թ.)





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Հուլիսի 28-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց և բարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը «Եթէ ոք կամիցի զկնի իմ գալ» բնաբանով:

\* \* \*

Օգոստոսի 4-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը: Սուրբ պատարագին ներկա էր Ֆրանսիայից եկած հայ ուխտավորների խումբը:

\* \* \*

Օգոստոսի 11-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:

\* \* \*

Օգոստոսի 18-ին, կիրակի, «Վերափոխումն Ս. Աստուածածնի»: Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և բարոզեց «Հրեշտակ ի մարդկանէ մարմնատեսիլ բերովել» բնաբանով: Պատարագիչ սրբազանը, հավարտ սուրբ պատարագի, նախադահեց խաղողօրհնեթի հանդիսությանը:

\* \* \*

Օգոստոսի 20-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ ժամանեց Ռումինիայի հատուց թեմական խորհրդի անդամ պր. Մովսես Շվուկյանը:

\* \* \*

Օգոստոսի 25-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Արսեն արեղա Բերբերյանը:

\* \* \*

Օգոստոսի 29-ին, հինգշաբթի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերդարձավ Վեհափառ Հայրապետը Կարլովի Վարիում (Չեխոսլովակիա) մի ամիս հանգստանալուց հետո: Վեհափառ

Հայրապետին ընկերանում էր հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը:

Երևանի օդանավակայում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռի միաբանութունն ու պաշտոնեությունը:

Նորին Ս. Օծության դիմավորեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

\* \* \*

Սեպտեմբերի 1-ին, կիրակի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

Սեպտեմբերի 8-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ի ժամ սուրբ պատարագի, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը սարկավագ ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի սաներից Հակոբ Պարոնյանին և Ժիրայր Գայփաբյանին:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի նախազահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն, Աղեքսանդրիայում նոր վախճանված արժանապատիվ Տ. Հայկազուն ավագ քահանա Ոսկերչյանի հոգու խաղաղության համար:

\* \* \*

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի, առափոստյան ժամը 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանում հյուրընկալվող սփյուռոահայ ուսուցիչների խումբը: Հյուրերը Մայր Տաճար այցելուց հետո ոնդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից: Նորին Ս. Օծությունը, ողջունելով սփյուռոահայ ուսուցիչներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Իր

նան այսօրվան օղակները հավերժական այն աշակերտության, որ ծունկ դրավ, տարբեր ժամանակներու մեջ, Հայ Եկեղեցվո եռամեծ վարդապետներուն և հայ մշակույթի պայծառ երախտավորներուն առջև, հոգիի և մտքի մշակներ, որոնց հոգիները կհավատամ որ միշտ կսավառնին այս սրբազան հարկի վրա:

Սիրելի՛ աշակերտներ, այսօր նորեն ուխտի օր է, մանավանդ ձեզ համար, որպեսզի անշեղորեն և հաստատուն քայլերով քալեք մեր նախնիքներու կողմն զծված այն լուսավոր ճանապարհեն, որ կտանի դեպի ժառանգությունը նախ Աստուծո Ս. Սեղանին, ապա մեր Եկեղեցիին, և հուսկ ուրեմն հավատացյալ մեր ժողովուրդին:

Ուխտի այս պահուն, ես ալ կհայցեմ Ամենակալի Աջի հովանին և ազգիս սիրելի Վեհափառ Հայրապետի օրհնությունները կրթական այս հաստատության վրա, անոր վերաբացման 18-րդ տարեդարձի առիթով:

Թող Տերը անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և կրթական այս օջախը իր փառքին համար, մեր ժողովուրդի հոգևոր և բարոյական դաստիարակության համար, անմիջական հսկողության և ղեկավարության տակ մեր սիրելի Վեհափառ Հայրապետի:

«Նմանեալ Մովսէսի» շարականի կատարումից հետո, հանդես եկավ գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոսը հանուն Վեհափառ Հայրապետի, ուսանողության ուղղված խրատական խոսքերով:

Հանդիսությունը վերջացավ խմբովին երգված Տերունական աղոթքով և սրբազան հոր «Պահպանիչ»-ով:


Սեպտեմբերի 10-ին, երեքշաբթի օր, ժամը 9-ին, նորից հնչեց զանգը Հոգևոր Ճեմարանում և սկսվեցին դասավանդությունները:


Ուսումնական այս տարում Հոգևոր Ճեմարանում սովորում են 35 ուսանողներ, բաշխված երեք դասարանների (Ա, Բ, Գ) և երկու լսարանների (Ա, Բ) վրա:

Սեպտեմբերի 13-ին, ուրբաթ օր, երկուշաբթի ժամը 6-ին, Վեհափառ Ս. Օծուխյան բարձր նախագահության տակ գումարովեց մանկավարժական առաջին ժողովը, որին ներկա էին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հոգևոր Ճեմարանի վերատեսչական և դասախոսական լրիվ կազմը:

Ժողովում հանգամանորեն վերանայվեց Հոգևոր Ճեմարանի ուսումնական ծրագիրը, Այս առթիվ Վեհափառ Հայրապետը արեց մի շարք գործնական և օգտակար թելադրություններ, իր հայրական օրհնությունները ևս բաշխելով վերատեսուչ սրբազան հոր, դասախոսական կազմին և ուսանողության, ուսումնական նոր տարվա վերամուտի բարեբախտիկ առիթով:

Վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը երախտագիտության և շնորհակալության ջերմ խոսք ասաց Վեհափառ Հայրապետին՝ հանուն Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմի և ուսանողության:





## ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 12-ին, կատարվեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի 1963—1964 ուսումնական տարվա պաշտոնական բացումը:

Հանդիսության նախագահում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը:

Հանդիսության ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և Մայր Աթոռի միաբանությունը:

Հանդեսն սկսվեց Հոգևոր Ճեմարանի ուսանողության «Աշակերտք Քրիստոսի» շարականի երգեցողությամբ, որից հետո ընթերցվեց Սերմնացանի առակը (Մատթ. ԺԳ 4—9):

«Որք զարդարեցին» Թարգմանչաց շարականի կատարումից հետո, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը հանդես եկավ Ճեմարանի վերարացման առթիվ հետևյալ ճառով:

«Անցնող ամեն տարի բախտավորված է չորս եղանակներով՝ ձմեռը ձյունածածկ սպիտակ տեսարանով, գարունը իր վարդերով և ծաղիկներով, ամառը ջինջ երկնքով, իսկ ամառը իր համեղ պտուղներով: Այս բոլորը բնությունը պարզեցած է արարածներու վայելքին համար:

Աշնան առաջին ամիսն է սեպտեմբեր: Հայրենի անդաստանները ծանրաբեռնված են ամեն տեսակ քաղցր պտուղներով, ի վայելումն արարածներու մարմնավոր կարիքներուն: Բայց չէ՞ որ մարդ արարածը միայն մարմին չէ, այլ նաև հոգի և միտք: Անհրաժեշտ է որ հոգին և միտքը ևս սնունդ առնեն և աճին:

Ահա ասոր համար, այս ամիսը եղանակն է բանավոր հունձքի սերմանումին: Այսօր պիտի սկսինք սերմանել մեր ուսանողության հոգիի և մտքի անդաստանին մեջ այն բարի սերմերը, որոնք պիտի ուռճանան, ցողուն և հասկ կազմեն գալիք օրերու համար:

Սեպտեմբերի առաջին օրերուն, մեր հայրենի երկրին մեջ կվերաբացվին ուսումնարաններու դռները, ընդունելու համար իրենց մեջ միլիոնավոր աշակերտներ, որոնք իրենց միտքը պիտի բանան, կրթության և գիտության շնորհիվ, տիեզերքի գաղտնիքներուն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանն ալ այսօր, նման մեր բոլոր մյուս հայրենի դպրոցներուն, լայն կրանա իր դռները իր ուսանողներուն անոջև որոնք կհանդիսա-

ուրախութիւնը հայտնեց, մաղթելով նրանց լավագույն հաջողութիւններ հայ նոր սերնդի հայեցի դաստիարակութեան գործում:

\* \*

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի, ժամը 12-ին, Մայր Տաճար այցելեց ֆրանսիացի հայտնի փիլիսոփա Ժան-Պոլ Յարտրը: Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը ընդունեց մեծանուն հյուրին և ջերմ զրույց ունեցավ նրա հետ:

\* \*

Սեպտեմբերի 11-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Հնդկական Մալաբար եկեղեցու հոգևոր ձեմարանի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Փիլիպոս վարդապետ Տարան, ընկերակցութեամբ Մոսկվայի Պատրիարքարանի եկեղեցական արտաքին գործերի աշխատակից Զեյունիսելի: Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը:

Հարգելի հյուրը, իջման Ս. Սեղանի առաջ իր ուխտը կատարելուց հետո, ընդունվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից, որը ջերմորեն և օրհնութեամբ ողջունեց դավանակից քույր եկեղեցու ներկայացուցչի այցելութիւնը Մայր Աթոռ:

Հոգեշնորհ Տ. Փիլիպոսը Մայր Աթոռում մնաց երկու օր: Նա այցելեց Ս. Հովհաննիս, Ս. Գայանե և Զվարթնոց: Այնուհետև հարգելի հյուրը այցելեց Մեսրոպ Մաշտոցի անվան երևանի պետական մատենադարանը և մայրաքաղաքի տեսարժան վայրերը:

Հայր Փիլիպոսը լավագույն տպավորութիւններով հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից և ուրբաթ, սեպտեմբերի 13-ին, մեկնեց Մոսկվա:

\* \*

Սեպտեմբերի 15-ին, կիրակի, իրաւից, Մայր Տաճարում պատարագեց և խաչի խորհրդի մասին քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագին ներկա էր նաև Ամերիկայից եկած հայ ուխտավորների խումբը: Երեկոյան, ավանդական հանդիսութեամբ, կատարվեց իրաւիցի մեծ անդամտանը, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետի:

\* \*

Սեպտեմբերի 15-ին, կիրակի, առավոտյան ժամը 12-ին, Մայր Տաճար այցելեց

Անգլիայի առևտրի միջնորդ Յրեդերիկ Էտլը: Մեծահարգ հյուրին Վեհափառում ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

\* \*

Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի, իրաւիցի մեղեցից հիշատակի օրը, Մայր Տաճարում իր անդրանիկ պատարագը մատուցեց Հոգևոր ձեմարանի շրջանավարտ նորընծա Տ. Գրիգոր քահանա Տերտերյանը:

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն համորեն ննջեցյալների համար:

\* \*

Սեպտեմբերի 20-ին, ուրբաթ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց ֆրանսիացի հայտնի հայագետ և Փարիզի Էթոլ նորմալի արևելյան կենդանի լեզուների մաթիմիկ վարիչ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին: Հանուն Վեհափառ Հայրապետի, Երևանի օդանավակայանում, հարգելի պրոֆեսորին դիմավորեցին «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, հոգեշնորհ Տ. Արսեն արքեպիսկոպոսը և Հայկական ՍՍԻ Գիտութիւնների ակադեմիայի լեզվի ինստիտուտի կողմից՝ գիտաշխատող Սամվել Անթոնյանը:

Հաջորդ օրը պրոֆ. Ֆեյդին այցելեց Մայր Տաճար և ապա ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից: Ամենայն Հայոց Հայրապետի և հարգելի պրոֆեսորի միջև տեղի ունեցավ մտերիմ զրույց:

Հարգելի պրոֆեսորը, Հոգևոր ձեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ, այցելեց Հոգևոր ձեմարան, որտեղ սրտագին ծափերով ընդունվեց դասախոսական կազմի և ուսանողության կողմից:


Խոսք առնելով ձեմարանի ընթերցասրահում, մեծավաստակ գիտնականը անդրադարձավ հայագիտութեան բնագավառում ունեցած իր գործունեությանը և իր հիացմունքը հայտնեց հայ ժողովրդի մշակութի մասին:

Կիրակի, սեպտեմբերի 22-ին, հարգելի պրոֆեսորը Մայր Տաճարում ներկա եղավ սուրբ պատարագին:

\* \*

Սեպտեմբերի 22-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



Ս Փ Յ ՈՒ Ռ Բ ՈՒ Մ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ  
ԵԿԵՂԵՅՈՒ ԶՍԱՆՀԻՆԳԱՄՅԱԿԸ

Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Ապատյանի նախաձեռնությամբ և թեմի ազգային կենտրոնական վարչական խորհրդի որոշմամբ, հունիսի 16-ին, Կաթողիկե Ս. էջմիածնի տոնի օրը, հանդիսավոր իրադրության մեջ, նշվել է Բուենոս-Այրեսի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քսանհինգամյակը:

Բուենոս-Այրեսի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցին, որը կառուցվել է ազգային բարեբար հանգուցյալ Հրանտ Նիրոթյանի նվիրատվությամբ 1938 թվականին, «Տօն Կաթողիկե Ս. էջմիածնի» օրը օժվել է ձեռամբ երջանկահիշատակ Տ. Գարեգին արքեպիսկոպոս խաչատրյանի, որը Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակն էր այդ օրերին:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է հանգուցյալ ճարտարապետ Իսրայել Արսլանյանի նախագծով և նրա անմիջական հսկողության ներքո: Եկեղեցին ունի հետևյալ արձանագրությունը. «Ողորմութեամբն Աստուծոյ և ի հայրապետութեան Ամենայն Հայոց Տեառն Խորեհայ Առաքելոյ Սրբազան Կաթողիկոսի և առատաձեռն նուիրատուութեամբ բարեպաշտօն տիար Հրանդ Նիֆոթեանի և նարտարապետութեամբ տիար Իսրայել Արսլանեանի աւարտեցաւ շինութիւն Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցոյս ի 5-ն յունիսի 1938 ամի, յաւուր Պենտեկոստէի. որ և բարեգարդեցաւ օժանդակութեամբ հաւատացեալ մերազնէից: Օծումն սորա եղև ի ձեռն կաթողիկոսական պատուիրակին Հարաւային Ամերիկանայոց Տեառն Գարեգնի Ս. Արքեպիսկոպոսի խաչատուրեան ի 19 յունիսի 1938 ամի ի տօնի Կաթողիկե Ս. էջմիածնի: Տուն Տեառն տուն աղօթից եղիցի»:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման քսանհինգամյակի առթիվ, հունիսի 16-ին, հայրապետական պատվիրակ սրբազանը մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ և ընթերցում Վեհափառ Հայրապետի հետևյալ սրբատառ կոնդակը.

«Գերաշնորհ հայրապետական պատուիրակին Հարաւային Ամերիկայի հայոց Տ. Բարգենայ եպիսկոպոսի Ապատեան, հարազատի Մայր Աթոռոյ Սրբոյ էջմիածնի, ողջո՛ւյն և օրհնութի՛ւն հայրապետական ի Գահէն Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսավորչի և ի Գահակալէ Նորին:

Ողջո՛ւյն Բուենոս-Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին և հայրապետական օրհնութի՛ւն համայն հաւատացեալ ժողովուրդին, Մեր սիրեցեալ հարազատ զաւակներուն: Ողջո՛ւյն և օրհնութի՛ւն Ձերդ Սրբազնութեան, Ձեր հոգևոր դասուն, պատուաբժան կեդրոնական վարչության և օժանդակ եկեղեցասեր կազմակերպութիւններուն:

Այսօր, երբ բովանդակ հայ ժողովուրդը կը տօնէ մեծ յիշատակը ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. էջմիածնի հիմնադրության, Դուք երջանիկ եք տօնախմբելու նաև քսանհինգերորդ տարեդարձը Ձեր Մայր Եկեղեցիի կառուցման լու օծման, կատարուած 1938-ի յունիսի 19-ին, ի տօնի Կաթողիկե Ս. էջմիածնի:

Իբրև հայ հաւատքի սին և իբրև հայկական կեանքի վէմ, Ձեր եկեղեցին բարձրացաւ այդ հեռաւոր ափերուն վրայ, շնորհիւ հայ ժողովուրդի պանդուխտ զաւակներուն կրօնական վառ զգացումներուն և ազգային կենսունակ ոգիին, նիւթական միջոցներովը բարեպաշտ նուիրատու՝ լուսահոգի Հրանտ Նիրոթեանի, որ գիտցաւ իր արդար անունը յաւերժացնել սուրբ գործի մը իրականացումով:



«Երանի՛ եկեղեցի շինողաց»։ «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Եւ ահա այսօր, Դուք բոլորդ երջանիկ էք, և Ձեր սրտերը լեցուն են տօնական ուրախութեամբ։ Ձեզի հետ Մենք ևս կը հրճուինք և փառք կու տանք Ամենակալին, որ այս օրհնութեան գիրը Ձեզի յղելու բերկրալի պահը կ'ընծայէ Մեզի։

Յոյժ մխիթարուած և ուրախ ենք Ձեզմով։ Եւ Մեր աղօթքներով Ձեր մէջ ենք այսօր։

Տէ՛ր Աստուած Փրկիչ մեր, «Ուրախ լիցին ամենեքեան ոյք յուսացեալ են ի Քեզ, յաւիտեան ցնծասցեն և բնակեցցես Դու ի նոսա» (Սաղմ. Ե. 12)։

Միրելիներ Մեր, հպարտ եղէք Ձեր եկեղեցիով և Ձեր կրթական-բարեսիրական հաստատութիւններով, և անգամ մը ևս ուխտեցէք անասան և միշտ շէն ու ծաղկեալ պահել զանոնք։

Եկեղեցին Ձեր հոգիներու բնակարանն է, Ձեր հզօրիչը և Ձեր մխիթարիչը, Ձեր լուսաւորիչը և Ձեր մայր դաստիարակը։ Նաև գրաւականն է Ձեր հայկական հոգիի պահպանման և անոր վերջնական յաղթանակին։

Միասիրտ ու միակամ, սիրով անբաժան, ամուր կանգնած մնացէք մեր լոյս հաւատքի անյառաժիտ վրայ, Ձեր հայեացքը միշտ սեւեռած դէպի լուսոյ խորան Ս. Էջմիածին և դէպի մեր վերածնած Մայր Երկիրը Հայաստան, մշտապէս և անվարան կերպով մնալով նաև օրինապահ և հաւատարիմ քաղաքացիները Ձեր մեծ երկրին՝ բարեխնամ ու մարդասէր Արգենտինային։

«Այսուհետև եղբարք, ո՛ղջ լեռուք, հաստամուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լեռուք՝ խաղաղութիւն արարէք և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Թ Կորնթ. ԺԳ 11)։

Ողորմութիւն Աստուծոյ և շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, այժմ և յաւիտեանս։ Ամէն։

Տուա կոնդակս ի 16-ն մայիսի 1963 Փրկչական ամի, ի տօնի Կարոյիկէ Ս. Էջմիածնի, և ի տուամարիս Հայոց Ռեժիմ, ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի»։

Հորելյանական հանդիսութիւններէց հետո, իր 17 հուլիս թվակիր նամակում, գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոսը գրում էր Վեհափառ

Հայրապետին.

«Շնորհազա՛րդ Հայրապետ.

Մայրաքաղաքիս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցւո Մայր Տաճարին՝ Ս. Գրիգոր Լուսավորչի օծման արծաթյա յոբելյանական հանդիսութիւններին անմիջապէս վերջ, որդիական պարտականութիւն զգացինք մեր և Ձեր հավատացյալ հոտին երախտագիտութեան և շնորհակալութեան զգացումները ներկայացնել Ձեզ, այն բարեհաճ ուշադրութեան համար, որուն արժանացուցած էիք մեզ, ուղարկելով սրբատաա կոնդակը, ուր Ձերդ Սրբութեան շնորհավորութիւններուն հետ գտանք Ձեր հայրական հորդորները և հայրապետական օրհնութիւնները։

Ճշմարտապէս, Վեհափա՛ռ Տեր, Ձերդ Սրբութեան կոնդակը, որ հիշտ օրին հասավ և մենք կարող եղանք զայն ընթերցելու հունիս 16-ի «Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի» կիրակիին, օծման հիշատակի առիթը նաև մեր սուրբ եկեղեցւոյն, հավելյալ փայլ մը տվավ հորելյանական մեր ուրախութեանց։ Արդարև, կզգանք, թէ արժանացած ենք ամբողջ գաղութով Ձեր բացառիկ սիրոյն և հոգածութեան։ Ու վստահ եղեք, Վեհափա՛ռ Տեր, այս գաղութն ալ, ամբողջութեամբ գրեթե, կտածե որդիական սեր և հավատարմութիւն Ձեր և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հանդեպ։ Երջանիկ այն դեպքը, որ արձանագրվեցավ մեր գաղութի տարեգրութեանց էջերուն վրա և անջրնջելիորեն դրոշմվեցավ հայ սրտերու մեջ Ձեր Սրբութեան երեք տարի առաջ մեզ շնորհած հովվապետական այցելութեամբ, կամա թարմ հիշողութեանց մեջ, ու Ձեր սրբատաա կոնդակի ընթերցման մեջն կտեսնե ամեն հավատավոր հոգի Ձեր հրեշտակափայլ դեմքը և կհաղորդակցի Ձեր վճիտ հոգիին և սրբազան մտածումներուն հետ։

Շնորհակալութիւն դարձյալ, Վեհափա՛ռ Հայրապետ, Ձերդ Սրբութեան։ Կաղութենք ամենակալ Աստուծո, որ երկար, առողջ և խաղաղ կյանք շնորհե Ձեզ, որ հովվեք Ձեր հոտը բազում տարիներ ու առաջնորդեք զանոնք նավահանգիստը մեր բրիստոնեական սուրբ հավատքին ու վայելումին՝ հայրենի հողին և Ս. Էջմիածնի կենսահորոգ խնամքներուն։ Կխնարհինք որդիաբար ի համբույր Ձեր օժյալ Ս. Աջույնս։



ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ  
ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1963 թվականի մայիս 19-ին, ժամը 13-ին սկսյալ, Բուբրեշի հայ եկեղեցվո մեջ տեղի ունեցավ թեմական պատգամավորական ժողովը Ռումանիո ժողովրդական Հանրապետության հայ թեմին:

Քահանայական դասին ներկայացուցիչներ եկեղեցի առաջնորդեցին թեմակալ առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, որ գրավեց նախագահական աթոռը և ժողովը բացավ աղոթքով մը:

Թեմական ժողովի փոխ-նախագահ ղուկտ. Գրիգոր Բամբուրճյան կհավիրեք դավանութեան նախարարութեան ներկայացուցիչ պր. Պրոն Ռեդուլեսկուն տեղ առնել նախագահութեան կազմին մեջ, որմե հետո բացման խոսքը կարտասանե և առաջին հերթին կարտահայտվի, թեմական ժողովին կողմն իր գոհունակությունը և շնորհակալությունները հայտնելով և կառավարութեան ու դավանութեանց նախարարութեան այն բարոյական և նյութական օժանդակութեան համար, զոր ջլացան տալ հայ թեմին: Միաժամանակ բարի գալուստ կմաղթե թեմական պատգամավորներուն և հաջողություն կմաղթե ժողովի աշխատանքներուն:

Դուկտ. Բամբուրճյանի բացման խոսքին վերջ, խոսք կառնե դավանութեանց նախարարութեան ներկայացուցիչ պր. Ռեդուլեսկուն և օրինավոր կգտնե ժողովի կազմը:

Իր բացման խոսքին մեջ, թեմակալ առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյան կըսե, թե իր առաջին մտածումը կողովի ղեպի Ռումանիո ժողովրդական Հանրապետությունը և անոր կառավարությունը, որ անվերապահ կերպով իր հովանավորությունը ընծայեց բոլոր դավանութեանց, որոնց կարգին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին, տվավ նոր ապացույց մը՝ վավերացնելով իր պաշտոնը իբրև առաջնորդ հայ թեմին: Առաջնորդ հայր սուրբը իր մասնավոր գոհունակությունը կհայտնե նաև դավանու-

թեանց նախարարութեան ընդհանուր քարտուղար պր. Դումիտրու Դոգարուին, որ պետական օժանդակությամբ և ցուցմունքներով նպաստեց հարթելու ամեն դժվարություն: Շարունակելով իր խոսքը, թեմակալ առաջնորդը կհաղորդե Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի օրհնությունները և մաղթանքը ժողովի հաջողութեան համար:

Թեմական խորհուրդի քարտուղար պր. Պրոսպան կկատարե անվանական կոչը ներկայացուցիչներուն:

Նկատելով, որ ժողովի հրավիրված օրինական 26 ներկայացուցիչներեն ներկա են 25 հոգի, համաձայն թեմական կանոնադրութեան 22-րդ հոդվածին, ժողովը կհամարվի օրինական:

Նախքան ժողովին օրակարգին անցնիլը, կկարդացվին այս առթիվ ստացված հեռագիրները Վազգեն Ա Վեհափառ Հայրապետեն, Բուլղարիո թեմական խորհուրդին և Բիտեշտի թաղական խորհուրդին:

Համաձայն թեմական կանոնադրութեան 19-րդ հոդվածին, կկատարվի ժողովի դիվանի ընտրությունը: Ընթացք առլով Կոնստանցայի ներկայացուցիչ, փաստաբան պր. Արամ Հակոբի առաջարկին, միաձայնությամբ կընտրվին ղուկտ. Գրիգոր Բամբուրճյան՝ նախագահ, պր. Թեոդատ Թեոդորու՝ փոխ-նախագահ, պր. Տիգրան Պողոսյան և պր. Ստեփան Շահգեղտյան՝ քարտուղարներ: Պր. Հ. Պետիկյանի առաջարկով, մանդատային հանձնախմբի անդամ կընտրվին պր. Արշակ Նաղարյան և պր. Մկրտիչ Զեսլով, որոնք կկատարեն մանդատներու ստուգումը և կհաղորդեն ժողովին:

Ժողովին նախագահը կհաղորդե ժողովականներուն օրակարգը, որ միաձայնությամբ կընդունվի, առանց որևէ փոփոխություն մտցնելու անոր մեջ, հետևյալ կետերով:

1) Տեղեկատվություն թեմական խորհուրդի

գործունեություն՝ 17 մայիս 1959-են 19 մայիս 1963 ժամանակաշրջանին վերաբերյալ, 2) Հաշվետվություն 1959—1962 տարիներու նյութական գործառնություն, 3) Ընտրություն նոր թեմական խորհուրդի անդամներուն, փոխ-անդամներուն և վերստուգիչ հանձնախմբին, 4) Եկամտներու և ծախսերու բյուջեի վավերացում 1963 տարվան վերաբերյալ, 5) Զանազանք:

Անցնելով օրակարգի առաջին կետին, խոսք կտրվի փաստաբան պր. Պերճ Կարապետյանին, որ կկարդա տեղեկատվությունը և հաշվետվությունը թեմական խորհուրդին՝ 17 մայիս 1959-են 19 մայիս 1963 ժամանակաշրջանին վերաբերյալ:

Վերստուգիչ հանձնախումբին կողմեն պր. Արամ Խաչատրյան կկարդա տեղեկագիրը անցյալ շրջանին գործառնությանց մասին:

Այս առթիվ խոսք առնելով, Բրայիլայի ներկայացուցիչ պր. Բարթոլ Մեծատուրյան կհայտնե իր ներկայացուցած համայնքին նվազումը, որով անկարելի դարձած է բավարարել տեղական կարիքները և կիսնդրե ապագա թեմական խորհուրդին, որ ընե անհրաժեշտ նյութական օժանդակությունը, մասնավորապես կարենալ ապահովելու համար նորոգությունը գերեզմանատան ցանկապատին, որուն համար նախատեսված է 8 000 լեյի գումար մը:

Պր. Ստեֆան Քրիստիա, Դրրկու Օգնայի ներկայացուցիչը, կհայտնե ի միջի այլոց, թե հիշյալ քաղաքի եկեղեցին, որ կառուցված է 1825 թվականին, հայտարարված է պատմական հուշարձան և Տ. Սահակյան քահանայի վախճանումով առանց կրոնական ներկայացուցչի կամ հոտը: Միաժամանակ կհայտնե, թե եկեղեցին լուրջ նորոգության կկարոտի, որուն համար որևէ նյութական կարելիություն չունին և կիսնդրե ապագա թեմական խորհուրդին միջոցներ ձեռք առնել կարգադրելու համար այս խնդիրը:

Պր. Մկրտիչ Չեսով, ներկայացուցիչը Յոկղան քաղաքի, գրավոր երկար տեղեկատվություն կներկայացնե ժողովին, հայտնելով, որ այս քաղաքի համայնքը դժվարություններու մատնված է, չկարենալով գանձել իր ստացվածքներուն վարձքերը և թե եկամտները շատ ավելի փոքր են քան տուրքերը և կիսնդրե պետք եղած օժանդակությունը չզլանալ՝ նպաստավոր լուծումը տալու համար խնդրին:

Արժանապատիվ Տ. Իգնատիոս քահանա Քրիմյան ցավ կհայտնե, թե մեր թեմի քահանայական կազմը անբավարար է քաղաքատմամբ իր պետքերուն և թեյադրություններ կընեն նոր թեմական խորհուրդին՝ գրա-

դելու քահանայական հարցով, նկատի ունենալով իր ծերությունը:

Կոնստանցայի ներկայացուցիչ փաստաբան պր. Արամ Հակոբ կիսնդրե խոսք առնողներեն արտահայտվիլ միայն թեմական խորհուրդի քառամյա գործունեության շուրջ, որովհետև թեմական ժողովը հավաքված է քննելու այդ գործունեությունը, ինչպես նաև պակասությունները և դժվարությունները, որպեսզի ապագա թեմական խորհուրդը կարենա դարմանել զանոնք:

Խոսք կառնե Բուբրեշի ատենապետ պր. Գևորգ Գևորգյան, որ կժամանրանա այն հարցերուն շուրջ, որոնք ցարդ անլուծելի մնացած են թեմական խորհուրդին կողմ: Ինչ կվերաբերի թեմական խորհուրդի վարչական և տնտեսական գործունեության, խոսողը իր գոհունակությունը կհայտնե այս մասին:

Վերև հարուցված բոլոր խնդիրներուն կպատասխանե դոկտ. Բամբուբճյան, իսկ եկեղեցական հարցերուն՝ թեմակալ առաջնորդ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյան:

Ժողովի նախագահը հավանության կենթարկե թեմական խորհուրդի և հաշվեքննիչ հանձնախումբի տեղեկատվությունները, զորս ժողովը միաձայնությամբ կհաստատե:

Անցնելով օրակարգի երրորդ խնդրին՝ ընտրություն նոր թեմական խորհուրդի անդամներուն, փոխ-անդամներուն և հաշվեքննիչ հանձնախումբին, պր. Գևորգ Գևորգյան, ներկայացուցիչ Բուբրեշի թաղական խորհուրդի, ներբողականը ընել վերջ իր կողմն առաջարկված անձերուն, կներկայացնե ցանկը նոր թեմական ժողովուն:

Ժողովի դիվանը նմանապես առաջարկված թեմական ժողովուն զնահատականը կընե և զանոնք զատ-զատ կներկայացնե ժողովին: Առաջարկված ուրիշ ցանկ կամ թեմական ժողովը չլրացված պատգամավորական ժողովը միաձայնությամբ կվավերացնե պր. Գևորգ Գևորգյանի կողմն առաջարկված ցանկը, որմն հետո ընտրական թերթիկները կբաժնվին պատգամավորներուն, որպեսզի յուրաքանչյուր քվեարկող կարենա ցանկեն հայտնել որևէ թեմական և անոր տեղ նշանակել իր հարմար դատած անձը:

Քվեատուփը կկնքվի պատգամավորներուն ներկայությամբ: Քվեատուփեն հետո արդյունքը կհաստատվի: Առաջարկված ցուցակին բոլոր թեմական ժողովները ընտրված են միաձայնությամբ՝ յուրաքանչյուրը ստացած ըլլալով 25-ական քվե: Քվեարկության այս արդյունքին վրա, Ռուսմանիո հայ թեմի թեմական խորհուրդի և վերստուգիչ հանձնախումբի անդամ կհայտարարվին հետևյալները, 3 տարվան շրջանին համար:

Թեմական խորհուրդի անդամներ՝ ղոկտ. Գրիգոր Բամբուքճյան, դատախազ Ալեքսանդր Սիլվյան, փաստաբան Պերճ Կարապետյան, պր. Մովսես Շլուկյան, փաստաբան Արամ Հակոբ, պր. Արշակ Նազարյան, պր. Հրանտ Ավազյան, պր. Հովհաննես Պետիկյան, պր. Ստեփան Շահգեղյան:

Թեմական խորհուրդի փոխ-անդամներ՝ պր. Տիգրան Կարժարյան, պր. Զիկ Դամատյան, փաստաբան Տիգրան Մինաս:

Հաշվեհանդիշներ՝ պր. Սիմոն Սիմոն, պր. Արամ Խաշխաշյան, պր. Նուրհան Թաթարյան:

Օրակարգի չորրորդ խնդրին՝ 1963 տարվան եկամուտներու և ծախքերու բյուջեի վավերացման մասին թեմական խորհուրդի քարտուղար պր. Տիգրան Պողոսյան հարկ եղած բացատրությունները կուտա, հայտնելով, որ արդեն այս բյուջեի նախատեսությունները վավերացված են դավանությանց նախարարության 1000/1963 համար պաշտոնագրով: Ժողովը միաձայնությամբ կընդունի ներկայացված բյուջեն:

Հանուն թեմական խորհուրդի նորընտիր կազմի, ղոկտ. Բամբուքճյան շնորհակալություն կհայտնե այն վստահության համար, զոր ցուցուցած է ժողովը, ապահովցնելով որ, ինչպես անցյալին մեջ, նոր շրջանին ալ պիտի լինայվի որևէ ջանք՝ լավագույն կերպով լուծելու համար անկախ մնացած խնդիրները: Իրավ է, որ պակասներ ունեցավ թեմական խորհուրդը անցյալին մեջ, այնուամենայնիվ որևէ ջանք չէ խնայված այդ պակասները կարելի եղած չափով բավարարելու համար: Կառաջարկե այս առթիվ խմբագրել հեռագիրներ ուղղված Նորին Ս. Օծուխյուն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ռումեն Ուղղափառ Եկեղեցւո Պետ Նորին Սրբություն Նուստինիան Պատրիարքին, Ռումանիո ժողովրդական Հանրապետության դավանությանց նախարարության ընդհանուր քարտուղար պր. Դումիտրու Դոգարուին:

Կկարգացվին խմբագրված հեռագիրները:

Փակման խոսքը կարտասանե թեմակալ առաջնորդ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկյան, որ իր շնորհակալությունը կհայտնե թեմական պատգամավորներուն այն աջակցության համար, զոր անոնք չլլացան բերել ժողովի աշխատանքներուն, միաժամանակ կհայտնե, թե հարուցված բոլոր խնդիրները առանձին-առանձին պիտի քննվին թեմական խորհուրդին կողմե և դավանությանց նախարարության տեական օժանդակությամբ, ո՛չ մեկ ջանք պիտի խնայվի նպաստավոր լուծում մը տալու համար անոնց:

Ժողովը վերջացավ ժամը 16.30-ին փակման աղոթքով:


Բուրբեշի թաղական խորհուրդի նախաձեռնությամբ ներկայացուցիչ Հյուրերը, ինչպես նաև ներկաներեն ոմանք, հրավիրվեցան թաղականության ժողովասրահ և պատվասիրվեցան:

Հոգեշնորհ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկյան բաժակ առաջարկեց երկու քույր եկեղեցիներուն պետերուն՝ Նորին Ս. Օծուխյուն Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Ամենապատիվ Ս. Հուստինիան Պատրիարքի առողջության և արևշատության համար, ինչպես նաև կառավարության ներկայացուցիչ, դավանությանց ընդհանուր քարտուղար պր. Դումիտրու Դոգարուի և Կոնստանտին Գոմանի, որ ներկա էր սեղանին:

Համայնքներու ներկայացուցիչներեն շատեր խոսք առին, որոնք բաժակ առաջարկեցին Ռումանիո ժողովրդական Հանրապետության բարգավաճման համար, որ ասպնջականություն տված էր հայ ժողովուրդին:

Պր. Կոնստանտին Գոման իր շնորհակալությունը հայտնեց արտահայտված խոսքերուն համար, ապահովցնելով, որ Ռումանիո հայոց թեմական խորհուրդի հետ իր ունեցած պաշտոնական հանգամանքի բերումով պիտի ջանա օգտակար հանդիսանալ թեմական խորհուրդի կողմե հարուցված խնդիրներուն և կարիքներուն:

ԹՂԹԱԿԻՑ



ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ  
ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուլղարահայ թեմական պատգամավորական շորթորդ ժողովը տեղի ունեցավ 31 մարտ 1963-ին, կիրակի օրը, Պլովդիվի մեջ:

Պատգամավորական ժողովին ներկա էին թեմի բոլոր եկեղեցական վարչություններու ներկայացուցիչները թվով 20 հոգի և յոթը քահանա հայրեր, ինչպես նաև թեմական խորհուրդի անդամները:

Առավոտուն տեղվույն Ս. Գևորգ եկեղեցվույն մեջ հանդիսավոր հոգեհանգիստ կատարվեցավ, թեմակալ առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի նախագահությամբ, ի հիշատակ անցնող շորթորիներու ընթացքին վախճանած Տ. Կարապետ Մերոնյան (Սլիվեն), Տ. Հմայակ Զարդարյան և Տ. Աթանաս Խաչատուրյան քահանա հայրերու և թեմական խորհուրդի անդամ Լ. Մեծատուրյանի, ինչպես նաև Պլովդիվի եկեղեցական վարչության ատենապետ Գ. Կարապետյանի և Սոֆիայի եկեղեցական վարչության անդամ Ֆլորա Սարաֆյանի:

Արարողություններու ավադտումեն հետո, կարգացվեցավ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի սրբատառ կոնդակը, որով ավադության պատիվ և քահանայական լանջախաչ կրելու իրավունք կշնորհվեր Խասկովո քաղաքի հոգեվոր հովիվ արժանապատիվ Տ. Նահապետ քահանա Գարայանին:

Հետո եկեղեցական թափորը, պատգամավորները և հյուրերը ուղղվեցան եկեղեցվո շրջափակին մեջ գտնված հայ մշակույթի պատշաճորեն զարգարված սրահը, ուր տեղի

ունեցավ պատգամավորական ժողովի բացումը:

Թեմակալ բարեխնամ առաջնորդը իր բացման ճառին մեջ վեր հանեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո դերը խաղաղության պայքարին մեջ և Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոսի անխոնջ ջանքերը խաղաղության համաշխարհային խորհրդի բազմաթիվ ժողովներուն մեջ: Առաջնորդ հայր սուրբը շնորհակալություն հայտնեց Բուլղարիո ժողովրդական Հանրապետության կառավարության՝ Հայ եկեղեցվո հանդեպ ցույց տված բարյացակամ վերաբերմունքին համար ու մաղթանքներ ըրավ Բուլղարիո և Հայաստանի վերելքին համար:

Ժողովի դիվանի անդամ ընտրվեցան Ս. Ալթունյան (Պլովդիվ) և Հ. Աբելյան (Ռուսե) որպես նախագահներ, իսկ քարտուղարներ՝ արժանապատիվ Տ. Վահան Խաչակիր ավագ քահանա Փափազյան (Սոֆիա) և Ե. Հաճոյան (Վառնա): Ընտրվեցան նույնպես լիազորություններու ստուգման, բանաձևերու և ընտրական հանձնախմբեր:

Թեմական խորհուրդի ատենապետ պր. Ռ. Մեստուճյան հանդես եկավ խնամված ղեկուցյուլ մը, կանգ առնելով թեմական խորհուրդի ավելի քան շորթ տարվան գործունեության վրա: Ներկաներուն վրա խոր տպավորություն գործեց ղեկուցյի վերլուծական և կուռ բովանդակությունը:

Թեմական խորհուրդի ֆինանսական գործունեության մասին ղեկուցում տվավ քննիչ հանձնախմբի անդամ պր. Ե. Սարաֆյան:

Ձույզ գեկույցներու մասին ծավալուն արտահայտութիւններ ըրին պատգամավորները, շինիչ թելադրանքներ ընելով թեմի հետագա գործերուն շուրջ: Ժողովը ընդունեց բանաձև մը, որով իր գնահատանքը կհայտնե թեմական խորհուրդի աշխատանքներուն մասին:

Պատգամավորական ժողովի կողմն հեռագիրներ ուղղվեցան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Ս. Ս. Վաղգեն Ա Հայրապետին Իր հայրական հոգածութեան համար և թեմիս հավատացյալներուն ողորակական հավատարմութիւնը անգամ մը ևս շեշտելով հանդէպ էջմիածնի լուսավորչահմն Մայր Աթոռի արժանընտիր Գահակալին:

Քննիչ հանձնախմբի անդամ ընտրվեցան պր. պր. Մ. Մարթայան, Ե. Սարաֆյան և Կ. Մինասյան:

Երեկոյան, Պլովդիւի եկեղեցական վարչութիւնը, նույն սրահին մեջ, հացկերութ տվաւ ի պատիւ պատգամավորական ժողովի անդամներուն: Զերմ մթնոլորտի մեջ բաժակներ պարսկվեցան ի պատիւ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, առաջնորդ հայր սուրբին և թեմի հոգևոր դասուն:

Նորընտիր թեմական խորհուրդը, պատգամավորական ժողովի բանաձևը աչքի առաջ ունենալով, ձեռնարկեց աշխատանքի: Անոր կարեորագույն առաջադրանքն էր եկեղեցա-




Ռումինիայի և Բուլղարիայի առաջնորդ հոգեշնորհ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկանը Բուլղարիայի թեմի քահանայից դասի հետ:

Օրակարգի վերջին կետին անցնելով, ժողովը միաձայնութեամբ վերընտրեց առաջնորդ հոգեշնորհ Ս. Տիրայր վարդապետ Մարտիկանը: Միաձայնութեամբ թեմական խորհուրդի անդամ ընտրվեցան պր. պր. Ռ. Մեստուճյան (ատենապետ), Հ. Պալյան (փոխատենապետ), Մ. Ռեթեոսյան (ատենադպիր), Օ. Քյուրդյան (գանձապահ) և Ս. Հովհաննեսյան, ինժեներ Լ. Քելիշյան, Գ. Ասլանյան (Սոֆիա), ինչպես նաև Լ. Աբգարյան (Պլովդիւ) և Հ. Աբելյան (Ռուսի)՝ խորհրդականներ:

կան վարչութիւններու ընտրութիւնները, որոնք տեղի ունեցան անցնող երկու ամիսներու ընթացքին ու ներկայիս թեմի բոլոր եկեղեցիները ունին իրենց ղեկավար մարմինները:

Բուլղարիո հայոց թեմը, առաջնորդ հայր սուրբի գլխավորութեամբ, կջանա հասնիլ թեմի հավատացյալներու հոգևոր մատակարարութեան և եկեղեցիներու պայծառութեան գործին:

ԹՂԹԱԿԻՑ



## Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

### ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ\*

#### 7. ՊՈԼԻՍ ԵՎ ՄՅՈՒՍ ԱԹՈՌՆԵՐԸ

Նախքան Կոստանդնուպոլսո Աթոռի հաստատությունը, օսմանյան պետության սահմաններուն մեջ կազմակերպչալ թեմեր էին.

ա. Սեբաստիան, որուն կեդրոնն էր Ս. Նշանի վանքը.

բ. Էնկյուսի, որուն առաջնորդանիստ կայանն էր Ս. Աստվածածնի վանքը.

գ. Բրուսա—Քյոքախիա—Գարամանլը:

Այս վերջին թեմը պատրիարքին սեփական վիճակը մնաց, իսկ մյուս երկուքը կցվեցան Կոստանդնուպոլսո Պատրիարքության՝ Ֆաթիհ սուլթան Մեհմեդի վերագրված հրովարտակի զորութեամբ:

Սուլթան Մեհմեդ Բ Ֆաթիհի օրով գրավվեցան նաև Տրապիզոն (1461-ին) և Արիմ (1479-ին), որով երկու առաջնորդություններ ևս միացան Կոստանդնուպոլսո Պատրիարքության: Հաջորդ սուլթաններու օրով պետության սահմանները հետզհետե ընդարձակվեցան և ադր շնորհիվ Կոստանդնուպոլսո Պատրիարքութեան բարոյական հեղինակությունը ևս աճեցավ հանդեպ Կիլիկիո Կաթողիկոսության և Երուսաղեմի Պատրիարքության, որոնք իրենց ամբողջութեամբը, իբր նույն ազգության մաս, Կոստանդնուպոլսո Պատրիարքության մերձուք նկատվեցան Ֆաթիհի հրովարտակին ուժով, թեև երկար ժա-

մանակ անցավ, մինչև որ իր նվիրագործումն ստացավ այս զորությունը:

Նույնը պատահեցավ նաև արևելյան թեմերու համար, որոնց առաջնորդներուն անվանումը, ըստ վաղեմի ավանդության, էջմիածնի Աթոռին սեփական իրավունքն էր, և որոնք ևս ժամանակին հետ ենթարկվեցան Կոստանդնուպոլսո Աթոռին իրավասության:

Եվ այսպես, ժՁ դարուն ընթացքին միայն երկու թեմ, այն է Մուշի և Տիգրանակերտի թեմերը, իրենց հարակից վիճակներով, Կոստանդնուպոլսո Պատրիարքարանի իրավասության անցան, և այսպիսով յոթի բարձրացավ ստորագաս առաջնորդությանց թիվը:

ԺԷ դարուն սկիզբը կարևոր փոփոխություն մը տեղի ունեցավ Կոստանդնուպոլսո Պատրիարքության ենթակա առաջնորդությանց շրջանակին մեջ, և հոժ հայ գաղթականության մը խոժովումով դեպի Պոլսո մտակա շրջանները, առաջնորդական թեմեր ստեղծվեցան նաև Նիկիոմիդիո, Ռոդոստոյի և Ադրիանուպոլսո մեջ:

Նույն դարուն վերջերն էր, որ Կոստանդնուպոլսո Պատրիարքության իրավասության ենթակա երեք թեմեր ևս մարմին պիտի առնեին Ամասիա—Մալաթիայի, Եդեսիո և Կեսարիո մեջ, և այս կերպով 13-ի պիտի բարձրանար Պոլսո Աթոռին կապված առաջնորդական վիճակներու թիվը<sup>354</sup>:

\* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1962 թվականի № 8-ից, ժժ-ից, և 1963 թվականի № 8 Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից և Է-Ը-ից:

<sup>354</sup> Ա. Ալպոլանյան, «Թուրքիո հայոց Պատրիարքություն», «Ընդարձակ օրացույց», Կ. Պոլսո, 1908, էջ 291—293:

Պետք է ըսել, որ հաճախ անվանական էին այս բաժանումները և նվիրապետական Աթոռներու միջև վեճեր անպակաս եղան՝ իրենց իրավասությունը սահմաններուն մասին:

Եւրջ դար մը Սիմեոն Երևանեցին Հայ Եկեղեցւո նվիրապետութիւնը և անոր մաս կազմող կաթողիկոսութիւններն ու պատրիարքութիւնները քննութիւն մը բովին անցնելու առթիվ՝ արհամարհական տրամադրութիւն մը կ'ընտեսնա ինչպէս Երուսաղեմի, նույնպէս Պոլսո պատրիարքութիւնց իրավական դիրքին Հայ Եկեղեցւո նվիրապետութիւն մեջ, Պատրիարքութիւն հանգամանքն իսկ զլանալով անոնց<sup>355</sup>:

Էջմիածնի նվիրակներու գործունեութիւնը նվազ դեր չկատարեց արդարև՝ Պոլիսը և առհասարակ Թուրքիո գավառները լարելու համար Սայր Աթոռին դեմ: Ժամանակակից անդրերկրները լեցուն են այն սանձարձակութիւններով, զորս իրենք իրենց թույլ կուտային էջմիածնի նվիրակները Կոստանդնուպոլսո Պատրիարքութիւն թեմերը այցելած ատեն, ինչպէս նաև այն կամայականութիւններով, որոնք տեղի կունենային Մեռոնի բաշխման պատրվակին տակ<sup>356</sup>:

Նվիրակներու գործունեութիւնը փոքր դեր չկատարեց հետևաբար էջմիածնի դեմ կուտակված դժգոհութիւնաց պոռթկումին մեջ, որ իր կարգին պիտի դուրացներ Եղիազար Այնթապցիի փորձերը անջատ կաթողիկոսութիւն մը հիմնելու համար Թուրքիո սահմաններեն ներս:

Սոս Աթոռն ալ հարաբերութիւններ ունեցավ հաճախ Պոլսո հետ: Սսեցիներ եկան երբեմն նույնիսկ Պոլսո Պատրիարքական Աթոռը նստիլ: Հարաբերութիւններ պահպանվեցան նաև այն դարուն, որ այս դուլսին նյութը կկազմե, և Պոլսո կարծիքը դեր ունեցավ Կիլիկիո կաթողիկոսներու ընտրութիւն մեջ:

Երեմիա Չելբերի իր օրագրութիւն մեջ կհիշե, թե խաչատուր վարդապետ, Կոստանդնուպոլսո նախկին պատրիարքը, «հաճեալ զկամս աթոռակալաց քաղաքիս... առ էմը և պարաթ Կաթողիկոսութեան Կիլիկիոց և գնաց ի Կիլիկիա, և օրհնեցաւ կաթողիկոս...»:

Բարգեն կաթողիկոս դիտել կուտա այս առթիվ, թե «Չելբերի տեղեկութիւնը նշանակալից է նաև այն կողմեն, որ կոստանդնուպոլսեցիներու մասնակցութիւնը Կիլիկիո կաթողիկոսներու ընտրութիւն այս առիթով միայն երևան կուգա, և կարելի է ըսել, որ ասիկա պատահական դեպք մը չէ. թերևս ասոր ապացույց մըն ալ նկատվէ Կոստանդնուպոլսի պատրիարք Կեսարացի Գրիգորին

Կիլիկիո Աթոռն եպիսկոպոսացումը և միջնորդութիւնը Կիլիկիո գործերուն Պետրոս Կարկառեցւո կաթողիկոսացման առթիվ հառաջ եկած պառակտումը դարմանելու նպատակով<sup>357</sup>:

Բարգեն կկարծե, որ պատահական երևույթ չէր Պոլսո և Սոս սիրալիր կապը. թեև Պոլիս ենթակա էր Մայր Աթոռի հոգևոր իրավասութիւն, մինչ Սիս ապօրեն Կաթողիկոսութիւն մը կշարունակեր մնալ հաշս էջմիածնի:

«Այս տվիքներու վրա հիմնվելով կուզենք ի վեր հանել,— կըսե Բարգեն,— թե Կիլիկիո Կաթողիկոսութիւնը չեզոքացած չէ մասնավոր շրջանակի մը մեջ: Խաչատուր Գ իր օժումեն ետքը օրհնութիւն թղթեր կղրկե Կ. Պոլիս: Այս բոլորը պատմական նշանակութիւն ունեցող իրողութիւններ են: Իրավասութիւն կամ ոչ, բայց ամեն պարագայի մեջ, համակրանքով է որ Կ. Պոլիս և Սիս կապված են իրարու: Կոստանդնուպոլսեցիք ձայն կամ կամք ունին Կիլիկիո կաթողիկոսաց ընտրութիւն մեջ և ի հարկին Կիլիկիո կաթողիկոսներ Կ. Պոլիս կամեննի-կելլեն ազգային-եկեղեցական գործեր կարգադրելու համար: Անշուշտ այսպիսի կապակցութիւն մը իրավունքով է նաև որ Կիլիկիո կաթողիկոսներ Կ. Պոլսի Աթոռին և Կ. Պոլսի պատրիարքներ Կիլիկիո Աթոռին կանցնեն, օրինավոր կամ ապօրեն կերպով, այսինքն այս փոփոխումներու համար ավանդական կամ իրավական դետին մը կար»<sup>358</sup>:

Էջմիածնի հանդեպ թրքահայութիւն ծոցին մեջ արծարծվող դժգոհութիւն ալիքը երբ երկու թեմերու կբաժնեք արևմտահայ հոգևորականութիւնն ու ժողովուրդը նույն այս ժէ դարուն, բնականաբար պիտի աշխուժացներ նաև Սիսը՝ զայն միացնելով հակաէջմիածնականներու խումբին: Բայց այս պարագան իրավունք չի տար մեզի կարծելու, թե թրքահայութիւնը բաժնված էր էջմիածնական ու սսական երկու ճակատներու, և այս ճակատներու պայքարին կապել բոլոր այն վեճերը, որոնք տեղի կունենային արևմտահայութիւն ծոցին մեջ և Պոլսո Աթոռին շուրջ մղված կռիվները:

Այնպես որ թշուրիմացութիւն կնկատենք կարծել, թե ՎՍիս-էջմիածնական պայքարի զլխավոր թատերաբեմը Կ. Պոլիսն էր, որը կենտրոնն էր արևմտահայ հասարակական կյանքի: Հայ իրականութիւնը և հատկապես պոլսահայութիւնը հուզող, այսպես կոչված «պատրիարքական կռիվներ»-ի ուսումնասիրութիւնը այդ պայքարի ելևէջներն է ցույց տալիս: Պատրիարքական Աթոռի համար այս

<sup>357</sup> Բարգեն արտակից կարողիկոս. «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիո», էջ 387—388:

<sup>358</sup> Անդ, էջ 389:

<sup>355</sup> «Ջամբո», էջ 55—56:

<sup>356</sup> «Ազգապատմ», Բ, էջ 2533:

կամ այն թեկնածուի գահակալությունը կամ տապալումը, որ այնքան հաճախորդ էր մանավանդ XVII դարում, սասկան կամ էջմիածնական հոսանքների փոխնիփոխ հաղթանակումը կամ պարտությունն է նշում»<sup>359</sup>։ Նույնքան թյուրիմացություն է ենթադրել, որ «սակայն այդ պայքարը լոկ դավանական-գաղափարական տեսությունների վրա չէր հենվում։ Այդ պայքարի մեջ առավելապես դրսևորվում էին արևմտահայ բուրժուազիայի ներքին արևելակողմնային, նրա ներսում գոյացած ներհակ ուժերի միջև տիրող շեշտված շատվածականությունը»։

Թյուրիմացությունը արդեն իր շափահասություն կհասնի, երբ կփորձվի հայ ժողովուրդի ծոցին մեջ ենթադրել երկու կազմակերպված հոսանքներ՝ Հոռոմի հետ մերձեցման մը հարցին շուրջ, և այդ մերձեցման գաղափարին դրոշակակիրն Նուալիկ սասկան հոսանքը, և յատկանամտության ձգտումը, զոր ցույց տվին հայ հողերականներն ոմանք այդ դարում՝ Հոռոմի նետած խալթերին հրապուրված, «գաղափարախոսական մի դպրոց» համարել, ինչպես կկարծեն Անասյանը<sup>360</sup>։

Մենք դեռ պիտի տեսնենք, թե Աթոռներու միջև մղված կռիվներուն մեջ, որոնց ականատես եղավ ժէ դարը, առավելապես անհատական փառասիրությունները, կիրքն ու անձնական հաշիվներն է որ դեր ունենին։

8. ՍՈՒԹԱՆՆ ՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը էջմիածին վերադարձած էր արդեն 1441-ին, երբ ճիշտ երկու տասնյակ տարիներ հետո, 1461-ին, Պոլսո մեջ ևս իր Աթոռը կունենար Հայ Եկեղեցին։ Ինչ անունով ալ կոչենք մենք այդ Աթոռը, ստույգ կը արժանանանք միշտ այն պարագան, թե Հայ Եկեղեցին իր պաշտոնական դիրքն ու դերը կունենար օսմանյան մայրաքաղաքին մեջ և քանի իր թևերը կտարածեր օսմանյան պետությունը, կստվարանար հայության թիվը ևս իր սահմաններուն մեջ, ու կընդլայներ Պոլսո Աթոռին հեղինակության սահմանը։

Մյուս կողմն, քանի հայ ժողովուրդը կանցներ Թուրքիո սահմաններին ներս, այնքան Մայր Աթոռը կըրկվեր իր հոտին հետ անմիջական շփման հնարավորութենեն։

Այս պայմաններուն տակ, էջմիածինը պիտի ստիպվեր միշտ հաշվի առնել օսմանյան դահը, և անոր բարյացակամությունը ապավինիլ՝ ուղղակի կապ պահպանելու համար իր հոտին հետ։ Նվիրակները, որոնց միջոցով էր որ Մայր Աթոռը հաղորդակցության մեջ կմնար իր հոտին հետ մեկտեղ, օսմանյան

իշխանությունը օժանդակությունը կարիք ունենին գլուխ հանելու համար իրենց առաքելությունը։ Արդե՛ն ամենայն հայոց կաթողիկոսներու փորձերը օսմանյան սուլթաններու ֆերմանները ձեռք ձգելու, որպեսզի իր հողերը հեղինակությունը ճանչան իր բովանդակ հոտին վրա, և իր նվիրակները ազատ կարենան շրջագայիլ օսմանյան պետության սահմաններեն ներս։

«Ջամբո»-ը, զոր հորինեց Սիմեոն Երևանցի կաթողիկոսը և որ 1873-ին միայն լույս տեսավ, կրովանդակե՛ ռոջ միայն զհակիրճ եկեղեցական պատմութիւն Հայաստանեայց յառաջին դարէ անտի ցերրորդ քառորդ եօթնևտասներորդի դարու, և յատկապէս զինչ ինչ անցեալ և զժամանակակից երևելի և նշանաւոր անցս և զտառապանս էջմիածնի և այլն, այլ և զտեղեկութիւնս և զցուցակս ազգի ազգի կալուածագրոց, հողոց, դիւղօքէից, արքունական հրովարտակաց, արտօնագրաց, կալուածագրոց, ընծայագրոց և այլոց այլոց»<sup>361</sup>։

Արդ, իր սույն աշխատասիրություն մեջ, կարգ ու կանոնի սիրահար այս կաթողիկոսը հոգածությունը ունեցած է՝ նաև ներմուծելու «Ֆարմանք օսմանցւոց թագաւորաց և հարկաւոր գրեանք, զորս տունալ են Սրբոյ Աթոռոյս»<sup>362</sup>, ինչպես և «հարկավոր գրեանք օսմանցւոց փաշայից, շխ-իսլամաց և այլոց իշխողաց, զորս տունալ են Սրբոյ Աթոռոյս»<sup>363</sup>։

Ֆերմանները, որոնց ցանկը Սիմեոն կաթողիկոսը կներմուծե իր «Ջամբո»-ին մեջ, 62 են թվով։ Այս ֆերմաններն ութը, որոնք իր օրով կպահպանվեին էջմիածնի դիվանատան մեջ, կպատկանին ճիշտ այն դարուն, որով կըբաղի մեր աշխատություն սույն գլուխը։ Անոնք բոլորն ալ տրված են սուլթան Մեհմեդ Դ-ի կողմն (1648—1647), Փիլիպոս (1632—1655) և Հակոբ Զուլայեցի կաթողիկոսներուն օրով։

Այս յոթը ֆերմաններն առաջինը, որ Հիլերթի 1065 (1654—1655) թվականը կկրե և ուղղված է Փիլիպոս կաթողիկոսին և երկրորդը, որ «կադի»-ներուն կուղղվի միևնույն թվականով, էջմիածնի նվիրակներուն ազատ շրջագայության կվերաբերին։ Սիմեոն կաթողիկոս սպաս կխտացնե ֆերմանը. «Սուլթան Մուհամմատին ֆարման, առ որ արգ առնէ Փիլիպոս կաթողիկոսն թէ՛ ի շրջագային իր յերկիրս քոյ, վօյվօդայք, ենկիչարիք, և այլն զապիթք, զիրա պահանջն ի նոցանէ։ Եւ թագաւորն գրէ թամպէհ, զի մի առնիցեն այնպէս»<sup>364</sup>։

361 «Ջամբո», էջ Ա։  
 362 Անդ, էջ 234—249։  
 363 Անդ, էջ 249—252։  
 364 Անդ, էջ 238։

359 Չ. Ս. Անասյան, հիշված ախտությունը, էջ 73։  
 360 Անդ, էջ 75։

Երրորդ ֆերմանը, զոր սուլթանը Վանա փաշային կողղե 1072-ին (1661—1662), ինչպես և չորրորդը, որ ուղղված է Վանա և շրջականերու թուրք պաշտոնատարներուն, կապ ունին էջմիածնի և Աղթամարի կաթողիկոսութեանց իրավասական վեճերուն, և էջմիածնի նվիրակներուն նույն շրջաններուն մեջ շրջագայութեան հետ:

Ասոնցմե մեկն է «Սուլթան Մահմետին ֆարման, զի Զուլայեցի Յակովբ կաթողիկոսն ի ձեռն Ծասյի կոչեցեալ վէթիլին իւրոյ արդ առնէ թագաւորին թէ՛ Վանայ երկիրն իւրօք դաւառօքն նա և Տիարպէթիք, Արճէշ, Կլաթ, Մուշ, Իաղէշ, Խօշապ, և այլ շրջակայքն սոցին, ի բնէ էջմիածնի են վիճակը, իսկ Մարտիրոս կաթողիկոսն Աղթամարու երբեմն ձեռնամուխ լինի ի նոսա: Վասն որոյ թագաւորն զրէ ֆարման ի վերայ Վանայ փաշային, զի մի՛ թողուցու Աղթամարու կաթողիկոսացն ձեռնամուխ լինել ի յայն վիճակս»<sup>365</sup>:

Իսկ մյուսն է «Սուլթան Մուհամմատին ֆարման, զի յորժամ Յակովբ կաթողիկոսն հանէ զուս աղթամարցոց ի Վանայ ի յայլ վիճակաց զվերոյիշեցելոց, և առաքէ յայնս զնուիրակս, բռնաւորք տեղեացն, թէ զառաջինն վէճան արծարծելով, և թէ յայլ ինչ պատճառէ ի նուիրակացն, վասն որոյ արդ առնէ թագաւորին և զայս ֆարմանս հանէ սաստիկ պատուիրմամբ ի վերայ տեղեաց իշխողացն, զի մի ինչ պահանջեցեան ի նուիրակացն Աթոռոյս»<sup>366</sup>:

Հաջորդ երեք ֆերմանները, որոնցմե երկրորդը իրմե առաջինին «սավատ»-ն է, կվերաբերին այն տխուր պայքարներուն, որոնք մղվեցան Հակոբ Զուլայեցիի և Եղիազար Այնթապցիի միջև: Առաջինը և իր պատճենը նույն սուլթան Մահմեդին 1079 (1668—1669) թվակիր ֆերմանն են, «զի Եղիազար վարդապետն Հոռմկլայեցի (որ լինի պատրիարք Սրբոյ Երուսաղէմի) թելադրութեամբ Ոնտփրիոս և այլոց ոմանց վարդապետաց օժանի կաթողիկոս ի Բերիա ընդէմ Սրբոյ Աթոռոյս և Յակոբ կաթողիկոսին Զուլայեցոյ, ի ՌՁԶ թուին տաճկաց և ի ՌՁԺԳ (1664) թուոյն մերում, և ֆարման առնու սուլթան Մահմէտէն՝ զի և յԵրուսաղէմ Միւռօն օրհնեցել և անտի նուիրակս առաքեցել յամենայն ազգս Հայոց, որ և խոստանայ տալ յամի հազար հինգ հարիւր ստակ ի յարքունիս: Ապա Յակովբ կաթողիկոսն ելեալ զնայ ի յՍտամպուլ, և արդ առնէ թագաւորին ծանուցանելով զորպիսութիւն Սրբոյ Աթոռոյս և զընդդիմութիւն Եղիազարու: Եւ թագաւորն տայ զայս ֆարման, զրեւով թէ՛ որովհետեւ ի բնէ էջմիածնի օրհնի Միւռօն... հրամայեցի և ես զի ի յէջ-

միածնի օրհնեցի և Յակովբն լիցի կաթողիկոս: Եւ այն ֆարմանն զոր ետու Եղիազարին անընդունակ լիցի»<sup>367</sup>:

Սյուսը այս տխուր պայքարին վերաբերյալ ֆերմաններն, որուն ևս երկու վավերացյալ պատճեններ կան, տրված է հիշրեթի 1081 (1670—1671) թվակառնի նույն սուլթան Մահմեդին, Հակոբ կաթողիկոսին կողմն սուլթանին ուղղված նոր աղերսագրի մը վրա, «զի յորժամ Յակովբ կաթողիկոսն զայդ վերոյիշեալ ֆարմանդ առնու, և ըմբերանէ զլրբութիւնն Եղիազարու, Եղիազարն ոչ դադարի ի նոյն լրբութենէն: Վասն որոյ վերստին արդ առնէ յԱթոռոյս Յակովբ կաթողիկոսն նոյնոյ թագաւորին թէ՛ ես քո ֆարմանովդ եղէ կաթողիկոս, և հազար եօթն հարիւր ամ է, որ այս է մեր Աթոռն, և սուրբ Միւռօնն մեր աստ օրհնի, և այլ այսպիսիք: Այժմ Եղիազարն ոչ դադարի ի հակառակութենէն: Վասն որոյ ի թագաւորն զրէ զայս ֆարմանս ի վերայ ամենայն իշխողաց, զի ուր և իցէ Եղիազարն՝ ընկճեցեան զլրբութիւն նորին, և թամպէ՛հ աբացեն»<sup>368</sup>:

Սիմեոն Երևանեցիին, որ տաշիններ հետո ալ կշարունակե ատելութեամբ լեցված մնալ դեպի Եղիազարը անգոսնելով նույնիսկ անոր կաթողիկոսութեան 10 տարիները (1681—1691) էջմիածնի Աթոռին վրա, ցավալի խոստովանութիւն մը կկցե այս հատվածին, հայտնելով, որ Մայր Աթոռի դիմանն փճացուցած է ֆերմանը, զոր Եղիազար սուլթանն ստացած էր Երուսաղէմի մեջ ուրույն կաթողիկոսութեան մը հաստատելու ժամանակ: «Իսկ յետ Յակովբայ յորժամ Եղիազարն հրաւիրի ի կաթողիկոսութիւն Սրբոյ Աթոռոյս, ըստ օրինի. այլ ոչ ևս առնու զնորոք ֆարման ի յօսմանցն թագաւորէն, այլ նոյնով առաջնով ֆարմանան (զոր առեալ էր ի ՌՁԶ թուին տաճկաց, զի յԵրուսաղէմ նստեալ կաթողիկոսութիւն արացել (զայ յԱթոռս և լինի կաթողիկոս, Սողոմն ի Պօղոս փոխեցեալ ի ՌՁԼԱ թուոյն մերում (1682): Եւ մեք այրեալ անհետ արարաք զայն ֆերմանն: Գրեցի զի գիտասցիք»<sup>369</sup>:

Հայ աղբյուրներու մեջ արձանագրված կգտնենք այն տխուր պարագաները, որոնց մեջ Հակոբ Զուլայեցիին կրցավ սուլթանն ստանալ հիշյալ ֆերմանները: Անձամբ վարելու համար իր Աթոռին դատը, ան 1664-ին գնաց Պոլիս, միասին իր հետ տանելով իր նախորդին՝ Փիլիպոս կաթողիկոսի հաստատման սուլթանական ֆերմանը, որ բավական ապացույց էր, թե էջմիածնի իրավասութեանը կտարածվի Թուրքիո հայութեան վրա ևս:

365 «Ջամբու», էջ 238:

366 Անդ, էջ 238—239:

367 Անդ, էջ 239:

368 Անդ, էջ 239:

369 Անդ, էջ 239—240:

«Բայց այնպիսի մի ժամանակ, երբ ամեն ինչ սուլթաններին պետություն մեջ կարելի էր առնել փողով, այդ թղթի վրա հաստատուն հույսեր դնել չէր կարելի: Հակոբը դիմեց ավելի կտրուկ մրջյոցի, իր կողմը գցելով, իհարկե, ոչ առանց խոշոր կաշառքի, սուլթանի սիրելիներին մեկին, որի անունն էր 'Կայմաղ խան': Կայմաղ խանը համարվում էր ստեղծում, որ կաթողիկոսը խնդրագիր ներկայացնի սուլթան Սահմեդին, երբ նա գնում էր մզկիթ աղոթելու»<sup>30</sup>:

«Օւ ունէր կաթողիկոսն, — կգրե Զաքարիա սարկավագ, — յաջոյ ձեռին զխաթիշարիֆն Փիլիպպոս կաթողիկոսին, և ի ձախոյ ձեռն զարզն, և համարածեալ զձեռն՝ և լայր կսկծանօք և դառն հեծանօք: Եւ հրամայեաց արքայն անուկ զթուղթան, և խոնարհեցոյց հայրապետն զգլուխն՝ և ասէ, Ուխտեալ է իմ համբուրել զոտս թագաւորին, և իմով ձեռամբ տալ ի նա զթուղթան: Եւ կոչեցին զկաթողիկոսն առ արքայն. և ետես զնա՝ զի լայր, ասէ. Մի՛ լար ըհտեար, և էառ զթուղթան: Եւ կաթողիկոսն կալեալ զոտս՝ և փոքր զերեսն իսկ թագաւորն խոնարհեալ և կալաւ զմօրուաց նորա՝ բարձրացոյց, և ասէ՝ Մի՛ լար, բարայ, զի զխնդիր քո կատարեցից»<sup>31</sup>:

Ութերորդն է «Սուլթան Մահմետին ֆարման, զի արզ առնեն վարդապետքն և բահանայք թէ՛ մեք ի Մահմետէն գիր ունիմք, և ի բնէ այսպէս է լեալ, զի կարգաւորք մեր զխարաճ և զիսպանջ մի տայցեն: Թագաւորն գրէ ի վերայ Հայապու, Շամու և Ուռումելու փաշայիցն և դատատւորացն, զի մի առցեն. ի Ի՛կ՛ Կ տաճկաց (1983=1682)<sup>32</sup>:

Հաջորդ 54 ֆերմանները տրված են Մուստաֆա Բ (1695—1703), Ահմեդ Գ (1703—1730) և Մահմուդ Ա (1730—1757) և Մուստաֆա Գ (1757—1774) սուլթաններուն կողմն, նահապետ Ուռնայեցի (1691—1705), Աղեբասանդր Ջուլայեցի (1706—1714), Կարապետ Ունեցի (1726—1729), Աբրահամ Մշեցի (1730—1734), Աբրահամ Կրետացի (1734—1737), Ղազար Ջահկեցի (1737—1751), Մինաս Ակնեցի (1751—1753), Աղեբասանդր Բյուզանդացի (1753—1755), Հակոբ Շամախեցի (1759—1763) և Սիմեոն Երևանեցի (1763—1780) կաթողիկոսներու օրով, որով դուրս են մեր քննած դարուն դեպքերուն շրջագիծն:

Էջմիածնի կաթողիկոսները մինչև 1726, այսինքն մինչև այն տարին, երբ Կարապետ վարդապետ Զեյթունցին ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեցավ, կերևա, թե իրավունք

ունեցած են ուղղակի հղելու իրենց գրերը ինչպես բրիտանացի թագավորներուն ու պարսից շահին, նույնպես Թուրքիո սուլթանին, սից շահին, որուն խափանումը այդ թվակալի րավունք, որուն խափանումը այդ թվակալին՝ Սիմեոն կաթողիկոս կվերագրե չովհաննես Կոլոտ պատրիարքին՝ մեծ կաթողիկոսի մը աններելի ոճով մը, ու կմեղադրե զայն, մը աններելի հաջողած է վերջ տալ կաթոթե իր դավերով հաջողակի գիմումներուն, և ստեղղիկոսական ուղղակի գիմումներուն, և ստեղղիկոսները իրենց գրությունները օսմանթողիկոսները իրենց գրությունները օսմանթայն արբունիք պետք է հղելին Պոլսո Պատրիարքարանի խողովակով:

9. ՆՐՄՍՅՏԻՆՆՐՆ ՈՒ ԴՐՍՅՏԻՆՆՐՆ

Դարուն երկրորդ կեսին անցնելն առաջ, շահկանութենն զուրկ չէր Պոլիսը ներսն ալ ճանչնալ, գիտնալ առաջին հերթին, թե ինչպես մարմին կառնել հայ գաղութը մայրաքաղաքին մեջ: Վտակները, որոնք երկու դարն ի վեր կհոսնին գաղութին ծոցը, կաճեցնեին անընդհատ անոր համրանքը, բայց միևնույն տեսն կայլափոխեին անդադար զիմագիծը գաղութին: Ամեն հայ քաղաքականի հետ որ գավառն կուզար Պոլիս, նոր շէտ մը կավելար գաղութն ներս:

Կաթուսներ են մեծ քաղաքները: Անոնք կընկուղեն ինչ որ իրենց ծոցը կուզա: Կհալեցնեն իրենց գիրկը հոսող նոր տարրերը ու կձուլեն մայր զանգվածին հետ:

Ինչ կվերաբերի գավառն Պոլիս խուժող տարրերուն, հայկական կաթսան շկրցավ հալեցնել զանոնք բոլորը: Մաս մը իսկույն լուծվեցավ անշուշտ, երբ մանավանդ եկող քարավանը կփուկի մայրաքաղաքին մեջ թաղեթաղ, Բայր կային ալ, որ խմբված կապրեին, հայրենակցական կորիզ մը կազմելով իրենց զետեղված թաղին մեջ: Այդ կորիզը իր ծոցը կպահպաներ գավառն բերված սովորությունները, ավանդությունները, բարբառը և այսպիսով դժվար կդառնար անոր ձուլումը:

Գավառն եկողը դեռ երկար ժամանակ գավառացի կմնար այսպես: Պոլսեցի չէր նկատու ինքզինքը, ինչպես որ պոլսեցին ալ, իրմն չէր նկատուր զայն:

Այս երևույթը, ավաղ, շատ երկար տևեց Մայրաքաղաքին մեջ միշտ ալ շարունակեցիք մնալ երկու տեսակ հայեր, պոլսեցին ու գավառացին, որոնք տարբեր կենցաղ ունեին միևնույն կլիմային տակ, ունեին իրենց ուրույն հոգեբը, որոնք չէին հասկնար զիրար իրենց հուզումները, որոնք իրարու խորթ էին իրարու խորթ այս երկու ուրույն տարրերը միշտ ալ գոյություն ունեցան Պոլսո մեջ որովհետև միշտ ալ հոն կհոսեին գավառն եկող վտակները ու չէին թողուր, որ անջրպետը ցմիշտ լեցվի:

370 Առ, «Հայոց պատմություն», Գ, էջ 318:  
 371 Զաքարիա սարկավագի «Պատմագրություն», Վարդապետ, 1870, Բ, գլ. և:  
 372 «Ջամբու», էջ 240:

Այնպես որ, ներսեցիի խնդիրը, որ մինչև մեր օրերուն հասավ, Պոլիսը հուզած է շատ կանուխեն: Տեղացին միշտ ստնբացած է իր հնութիւնները օսմանյան մայրաքաղաքին մեջ. հպարտ է եղած, որ իր նախնիքը Պոլիս հաստատված էին Ֆաթիհի օրով, և ամեն նորեկ խորթ թված է իրեն: Դուրսեցին ալ խեթով նայած է տեղացիին, չէ հանդուրժած դայն:

Եվ այս երևույթը կտիրեր Ժէ դարուն ալ: Առաքել Դավրիժեցի, խոսելով Փիլիպոս կաթողիկոսի Պոլիս կատարած այցելութեան և անոր կատարած փորձերուն մասին տեղական վեճերը հարթելու, կգրե. «... Քանզի ի ժողովրդականացն որք բնիկ տեղացիք էին ի քաղաքէն Կոստանդնուպոլսէ՝ բարձրամիտ բարձրայօն պարծանօք հարստահարեալ թևս ածէին ի վերայ եկամտից ժողովրդոցն, և իբրև զգոհհիկ և շմարդի ունէին զնոսա, և դամենեսանս իշխանական իրականութիւնս զգործս և զբանս ի ձեռս իւրոց գրաւեալ ունէին և գործէին, և զեկամուտսն ի բաց քեցեալ անհաղորդս պահէին: Վասն որոյ և նորա հոգով շափ վշտանային ընդ քամահանս իւրոց. և հանապազ խոցոտիչ և ատելութեան բանիւ դիմագրաւ լեալ ընդ միմեանս մաքառէին և հաստատեալ արձանացեալ էր խռովութիւնս ի մէջ նոցա և արեամբ շափ ատելութեամբ»<sup>373</sup>:

Առաքել վարդապետ, նախիջևանի Շոողթ գյուղեն, որ Փիլիպոս կաթողիկոսի ուղեկից էր անոր բոլոր ճամբորդութեանց ժամանակ, Աստվածաշնչի մը հիշատակարանին մեջ կգրե կաթողիկոսին Պոլիս այցելութեան մասին Երուսաղեմէն դարձին. «Եւ անդուստ եկեալ ի Բիւզանդիա՝ մայր քաղաքաց, ըստ խնդրոյ աստ եղեալ քրիստոնէիցն, զի բազում շահս և ազուտս եղև նոցա. մի՛ զի գոյր երկպառակութիւն ի մէջ սոցա. զի ոմանք ներսցի և ոմանք դրսցի անուանէին. և այսմ անուանակոչութեանց բազում վնասս ծնանիւր. քանզի զմիմեանս մատնէին և աւերս ուժգինս ածէին ի վերայ իրերաց. և սա այնքան միարբանս արար, մինչ զի մի հաւտ և մի հովիւ եղեն»<sup>374</sup>:

Օրմանյան, խոսելով Դավիթ Արևելցի (1639—1641) պատրիարքին օրով Պոլսո մեջ տիրող վեճերուն մասին, կըսե, թէ «այս շփոթներուն գլխավոր պատճառներն մին եղած է Կ. Պոլսո մեջ հինն հաստատված գլխավորներուն, և հետզհետե նոր եկողներուն մրցումը: Վերջինները գաղաղներու մեջ կուսակալներու հետ մտերմութիւն կատանային, և կուսակալներուն բարձրանալովը իրենք ալ ազդեցութիւն կըտայնեին, որով Կ. Պոլսո հիններուն նախանձը կըարժեին, որոնք բարձ-

րամիտ և բարձրայոն պանծաւո՛ք նոր եկողները իբրև զգոհնիկ և շմարդի ունէին, և ազգային գործերու մեջ ալ զեկամուտս ի բաց քեցեալ անհաղորդս պահէին, թեպետ ասոնք զորավոր ըլլային գաղաղն փոխադրված եպարքոսներուն մոտ»<sup>375</sup>:

Ինչպես ըսինք, տեղացիի և դրսեցիի խորթութիւնը տեւց հաջորդ դարերուն ալ: Պոլիսը գաղաղն երկար ժամանակ շտաբացավ, ու գաղաղը շկամութեամբ նայեցավ միշտ մայրաքաղաքին: Անոնք իրարու շտաբացն երբոր նույնիսկ ալ կապրեին կողք-կողքի, միևնույն թաղը: Պարագան ավելի տխուր կդառնար երբոր անոնք կապրեին իրարմե հեռու:

Տակալին ԺԹ դարուն սկիզբները էդիրնե-րափոփ թաղը հայոց կողմն կկոչվեր Քաղաքացվոց թաղ, այն բանին համար, որ Կաֆայեն գաղթող հայոց բնակած թաղը եղած էր, և որ կաֆացի հայերը Պոլսո առաջին հայ գաղթականները ըլլալուն համար կկոչվեին քաղաքացի կամ տեղացի<sup>376</sup>:

Պետք եղավ, որ հայ ժողովուրդի ճակատագիրը նոր փուլերու մեջ մտնէ՝ որպեսզի խրամատը լեցվի, և այլևս նեյսեցի ու դրսեցի չմնա: Հայ ժողովուրդի մեծ հուզումներն էին, որ եղրայր դարձուցին բոլորը:

10. ԳԱՎԱՌԸ ԿԵԼՐՏԻ ՊՈԼՍՈ ՄԵՋ

Գաղաղը, ինչպես տեսանք, Պոլիս էր խոժեր դարուն սկիզբն: Շահաբասի արշավանքը, Զալալիներու ասպատակութիւնները, երաշտն ու սովը աղետալ շրջաններն հոծ թվով հայեր թշեր էին մայրաքաղաք:

Գաղաղը հետագային ալ խաղաղութիւն չտեսավ սակայն: Հալածանքը, հարկերու բեռը անպակաս եղան և հայերու նոր խումբեր թշեցին Պոլիս: Բայց ասով գաղաղի տառապանքն ոչինչ կթեթեւար, որովհետև իրենց օջախին փարած մնացողները կստիպվեին կրել հարկերու բովանդակ բեռը:

Այս դժնդակ կացութիւնը չէր կրնար իր տխուր հետեանքները չուեննալ. Անկարող իրենց ուսերուն դրված այդ ծանր բեռը առանձին կրելու, շատեր անոնցմե Պոլիս խուժեցին, որպեսզի արդարութիւն պահանջեն: Եվդոկիո, Սեբաստիո, Դիվրիկի և Կամախի շրջաններն էին մեծ մասամբ, այսինքն առավելապես այն շրջաններն, ուրկե ժամանակին հոծ զանգվածներ եկած, խուլս տված էին Պոլիս:

Ժէ դարու կեսերն անմիջապես հետո ստեղծված այդ կացութեան առթիվ Զամչյան կգրե. «Բազմացեալ էին յոյժ ի նմին ժամանակի ի թագաւորական քաղաք անդր հայք գաւառացն Եւրոկիոյ, Սեբաստիոյ, Կամախու

<sup>373</sup> Առաքել Դավրիժեցի, էջ 334:  
<sup>374</sup> Հ. Բ. Մարգարեան, «Յուդայի ձեռագրաց», էջ 172:

<sup>375</sup> «Ազգապատում», Բ, էջ 2471—2472.  
<sup>376</sup> «Ընդարձակ զրաջուրց», Կ, Պոլիս, 1901, էջ 8Ժ:

և այլն, և զի շափ արբունական հարկաց որոշեալ էր ըստ գաւառաց, յելանել բնակչաց ի տեղեաց անտի, և ի գալ նոցա ի քաղաքն կոստանդնուպոլիս. բովանդակ հարկն դիզանէր ի վերայ մնացորդաց նուազելոց. և ոչ այսչափ միայն՝ այլ և որք եկեալ բնակեալ էին ի թագաւորական քաղաքի՝ յիրեանս գրաւեալ զգործակալութիւն հարկահանութեան բնիկ քաղաքաց իրեանց՝ բազում տուգանս և զրկանս հասուցանէին նոցա. որոյ վասն եկին ոմանք ի կոստանդնուպոլիս ի Կամախեցւոց անտի և ի Սերաստացւոց ևս ի Տիվրիկեցւոց. և բողոք կալան առ Քէօփրիւլի եպարքոսն, թէ զծանրութիւն հարկաց աշխարհին՝ որ հասարակաց է՝ այժմ մեք առանձին կրնաք. քանզի քաղաքացիք մեր թողեալ են զմեզ և եկեալ են այսր, և ի հանգստեան վայելեն, և տիրաբար ևս իշխող լինելով ի վերայ մեր՝ կեղեքեն զմեզ անխնայ»<sup>377</sup>:

Եվ ահա զարհուրելի պայթար մը սկսավ Պոլիս հաստատված գավառացիներուն և աւոնց դեմ բողոքելու եկողներուն միջև երկու կողմն ալ խտրութիւն չորավ միջոցներու մեջ, իրեն պաշտպաններ ասպահովելու համար պետութեան իշխանավորներին»<sup>378</sup>:

Օրմանյան հետեյալ կերպով կներկայացնեն գավառացիներու այդ պայթարին երեսն Պոլսո մեջ ստեղծված կացութիւնը Մարտիրոս Կաֆայեցի պատրիարքին օրով. «Պատրիարքին համար նոր տազնապի պատճառ մըն էր բազմաթիւ հայերու անտուն. և անինչ մնալը, և ահա ուրիշ դժվարութիւն մըն ալ ծագեցավ գավառացիներու երեսն: Ասոնք իրենց տեղերը պարտավոր էին պետական տուրքերը տեղացիներու վրա բաշխելով վճարել, բայց շատ գավառացիներ մայրաքաղաք գալով կհարստանային, և այլևս իրենց հայրենիքին տուրքերուն չէին մասնակցեբ, և տեղերնին մնացող խեղճներ կնեղվեին: Այս պատճառով Եվրոկիայե, Սերաստիայե, Կամախե, Դիվրիկե և ուրիշ քաղաքներ պատվիրակներ եկան Կ. Պոլիս, և մեծ եպարքոսին դիմելով արտոնութիւն ստացան իրենց գավառացիները ցուլց տալ, որ վճարման ոռնադատվին: Ղադար Սերաստացին, որ Դիվրիկի եպիսկոպոս եղած և անկե Կ. Պոլիս եկած էր, առիթ գտավ գանգատավորներու գուուխը անցնել, և Մարտիրոս պատրիարքը մեղադրելով կուսակիցներ շահիչ, որոց կառոււորող Շրվան Դիվրիկցին, որուն օգնութեամբ կաշառք ու նվեր ստեղծելով, Մարտիրոսին աշատոնանկութեան և յուր պատրիարքութեան հրովարտակը հանել տվավ, ու Պատրիարքարանին տիրացավ 1660 նոյեմբերին»<sup>379</sup>:

377 Չամչյան, Գ, էջ 689:

378 Անդ, էջ 689—690:

379 «Ազգապատմ», Թ, էջ 2529—2530:

Արդարև, դիվրիկցիներն էին, որ գործոն դեր կատարեցին Մարտիրոս Կաֆայեցիի և Ղադար Սերաստացիի միջև մղված պայթարներուն մեջ:

«Կային ի նմին ժամանակի ի Կոստանդնուպոլիս ոմանք ի հայոց Տիվրիկեցւոց, — կզրն Չամչյան, — որք յառաջմնէ չբաւոր գոլով՝ փարթաւմացեալ էին ընդ խնամարկութեամբ Տիվրիկցի Իպրահիմ աղայի արբունի դիւանադարի, և սորա միաբանեալ ընդ Ղադարու նիւթէին հնարս ընդդէմ Մարտիրոս պատրիարքի»<sup>380</sup>:

Ղադար, որ նախապես Մարտիրոս Կաֆայեցիի պաշտպանութիւնն էր վայելեր՝ կունակը իր դիվրիկցիներուն տված, այժմ կփորձեր տապալել երբեմնի իր հովանավորը»<sup>381</sup>:

Դիվրիկցիք իրենց երբեմնի առաջնորդին՝ Ղադարի կողքին մնացին միշտ, զայն ամուր պահելու համար պատրիարքական Աթոռին վրա: Այնպես որ երբ լուր առին, թե Ղադարի մրցակից Շովհաննես Թուփունճիի ի նպաստ հանրագրովցուն մը զրկվելու վրա է էջմիածին Մինաս անուն արևելքցի վարդապետի մը և ուրիշ աշխարհականի մը ձեռքով, իրար անցան իսկույն. «Եւ եղև յելանել նոցա ի ճանապարհ՝ իբրև իմացան զայն Տիվրիկցի կուզակիցք Ղադարու, փութացան և առին զօրականս յարքունի դրանէ, և յղեցին զկնի թղթատարաց. և նոցա հասեալ շտապաւ ի տեղին կոչեցեալ խարդալ՝ կալան զթղթատարսն, և բերին կապանօք առ տեղապահ եպարքոսի»<sup>382</sup>: Տարբեր խնդիր, թե տասը օր բանտ մնալի հետո, հազար դահեկան տուգանք վճարեցին և ազատվեցան:

Նույն այդ դիվրիկցիներն էին, որոնք Թլլայաններու և Ջահուկյաններու հետ մեկտեղ, աջակցեցան այս անգամ ալ Մարտիրոս Կաֆայեցիին 1665-ին անոր մղած պայթարին պահուն Եղիազար Այնթապցիի դեմ, և անոր ընկերացան, երբ ան կներկայանար մեծ եպարքոսին «բողոքել զԵղիազարէ, եղեալ ի մտի՝ մահու ևս արժանի ցուցանել զնա»: Ոչ Մարտիրոսի մեղադրանքները, ոչ ալ դիվրիկցիի մը վկայութիւնը օգուտ չունեցան զեղծարար ցուլց տալու համար Եղիազարը, ինչ որ ցասումը գրգռեց մեծ եպարքոսին, որ վնասեց զայն ատյանն. «և իբրև ելանէր Մարտիրոս արտաքս ի վրանէ՝ դիմեցին սպասաւորք ատենին ի վերայ նորա, և հարկանէին զնա բռնցի և քաջցի. նոյնպէս և ոմանք ի հարազատ ընկերաց նորա զայրացեալ թշնամանօք նախատէին զնա՝ թէ յամօթ արարեր զմեզ առաջի ատենի»<sup>383</sup>:

380 Չամչյան, Գ, էջ 689:

381 Անդ, էջ 690—691:

382 Անդ, էջ 693:

383 Անդ, էջ 703:

Գաժառը հետագային ալ աղմկած է երբեմն Պոլսո մեջ:

11. ՀԱՅ ԽՈՋԱՆԵՐԸ

Թերի պիտի ըլլար մեր այս ակնարկը խոժառույզ դարու մը վրայ, եթէ շժանոթանայինք լրիվ բոլոր այն խավերուն և հոսանքներուն, որոնք կտիրեն օսմանյան մայրաքաղաքի հայ համայնքի ծոցին մեջ:

Դրսեցիներու և ներսեցիներու միջև մղվող խուլ պայքարը շէր միայն, որ Պոլիսը կայելիոթներ այդ դարուն, ինչպես այլեկոթեր էր անկե առաջ ալ և պիտի այլեկոթէ՛ր նաև հետագային մինչև մեր օրերուն հասնելով. և ոչ ալ խրտուամները, որոնց տեղի կուտային գաժառուն Պոլիս խուժող հայերը:

Ասոնցմէ բացի, Պոլսո հայ գաղութը այլազան խավեր և հոսանքներ ուներ իր ներսը: Երևելիներու այն դասը, որ Ժէ դարուն բացառիկ դեր կկատարեր Պոլսո հայ կյանքին մեջ, խոջաներն էին, ինչպես առհասարակ թիչ մը ամեն տեղ այդ դարուն ըլլա Պարսկաստանի հայ գաղութին և Թուրքիո հայ գաղութներուն, ըլլա զանազան այն վայրերուն մեջ, ուր առևտրական կայքեր հաստատուել էին հայերը: Կարելի է ըսել հայ խոջաներու դարն էր այդ դարը:

Խոջա պարսկերեն բառ է և պարսիկ լեզվի մեջ բազմաթիվ իմաստներ ունի: Ան կնշանակե, օրինակ, տեր, ուսուցիչ, հարուստ, ներքինի: Թուրքերեն լեզվի մեջ ան գործածված է նաև տանուտեր, էֆենդի, աղա, քեհյա, վաճառական, փաթթոցավոր, ակնաւոր անձ, ծեր, կախարդ, ձեռնածու, դարմանող, ժողովրդական պատմիչ նշանակութեամբ, ինչպես ցույց կուտան բառարանները, մինչ հայոց մեջ խոջա բառը որդեգրված է առավելապես իր վաճառական իմաստով: Ըստ Աճառյանի, բառը հայոց մեջ գործածվի սկսած է ԺԳ դարին, և մտած է նաև ազգանուններու կազմութեան մեջ, ինչպես Խոջաբեգ, Խոջազադե, Խոջամալի, Խոջամիր, Խոջապապ, Խոջաջան, Խոջասար, Խոջիխան<sup>384</sup>: Վաճառականի իմաստով է, որ բառը գործածված է հետևաբար ըլլա Պարսկաստանի հայ գաղութին, ըլլա արևմտահայութեան և Պոլսո մեջ: Արևելյան Եվրոպայի հայ բարբառին մեջ է գլխավորաբար, որ «խոջան»-ն գործածված է հարուստ նշանակութեամբ ալ մինչ «խոջանալ» հարստանալ կնշանակենուն բարբառին մեջ, իսկ «խոջութիւն»-ը հարստութեան իմաստն ունի<sup>385</sup>:

«Խոջա» մակդիրը Թուրքերը իրենք ևս կուտային հայ վաճառականներուն: Բայց ուշագրավ է, որ ան հայ կամ որեէ քրիստոնյայի տրված պարագային, տարբէր ուղղագրութեամբ կգրվեր: Արդարև, բառը մինչ իր պարսկական ուղղագրութեան մեջ խավաջա ձևն ուներ, քրիստոնյաներու տրված ժամանակ հոջա ձևով կգրվեր: Այս վերջին ձևով կհանդիպինք, օրինակ, այն գրութեանց մեջ, զորս Գանուբի հրամանատար բայրաբդար Մուստաֆա փաշա, հետագային մեծվեցիր, ուղղած է Մանուկ Եյ Միրզայանի, որ իր մտերիմ բարեկամն ալ էր<sup>386</sup>:

«Խոջա»-ներու բազմիցս կհանդիպինք այլ ըլններու մեջ ամբողջ այդ դարուն: Կամենիցի Ավետման եկեղեցվո շինութեան աշակցողներուն մեջ կգտնենք 1597-ին Ուլու խոջա որդի Տոնուշի: Բայց առավելապես Ջուղայի և Պարսկաստանի հայ խոջաներն էին, որ աշքառու պիտի դառնային Ժէ դարու սկիզբին:

Այսպես, երբ 1604 թվականին Ջուղան ընդունեց Իրանի շահնշահը, «Արաքսի ափից մինչև Խոջա-Խաչիկի փառավոր ապարանքը, ուր պիտի իջներ շահը, փուլած էին գորգեր և մետաքսագործ ու ոսկեհուռ դումաշ կտորներ, իբրև «փիանդաղ», և դրանց վրայով քայլում էր Իրանի տերը: Խոջա Խաչիկը ոսկի մատուցարանի վրա ոսկու կուտեր ընծայաբերեց շահին. և նրա օրինակին հետևեցին մյուս խոջաները»<sup>387</sup>: Այնուհետև խոջաներու ամբողջ շարան մը պիտի հայտնվեր շահերու տիրապետութեան տակ:

Համբավավոր հայ խոջաներ ունեցած է այդ դարուն նաև Փոքր Ասիան: 1610 թվականին Երուսաղեմի հայոց վանքին պարտույց բարձման մասնակցելու հրավիրված են Հայեպ գտնվող «անուանի խոճայս և վաճառականս»<sup>388</sup>, իսկ հանգանակութեան մասնակցողներուն մեջ կհիշվին Ախիջան, Ավետ, Ղարիբջան, Միրզե, Միրաօ, Փիլյաք և Փոլատ մանեցիները, Առաքել, Ավետիք, Զաքարե, Ոսկան, Մաֆար, Մուքիաս և Փանոս ցուղայեցի խոջաները, ինչպես նաև Չխիջան Բաղիշեցի, Թումաջան Ամոնցի, Բաղդասար Ուհայեցի, Մագսուտ: Պետրոս կամ Պետիկ և Վանտին հայեպցի խոջաները և ուրիշներ:

Հայ խոջաներ նշանավոր դարձած են զանազան հայ գաղութներու մեջ ալ: Խոջա Նահայետը, օրինակ, 1687-ին հայկական տպարանի համար հատուկ տեղ կհատկացնեն Ամստերդամի իր սեփական տան մեջ: Միմեոն Լեհացին Ջուղայեցի հայտնի խոջա Հաբիմի կարգադրութեամբ է, որ կարտագրե

<sup>384</sup> Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Բ, Երևան, 1944, էջ 526:

<sup>385</sup> Տե՛ս մեր «Արևելյան Եվրոպայի հայ բարբառը» անտիպ աշխատութիւնը:

<sup>386</sup> Բովսարեստի պատմութեան թանգարան, Մանուկ Եյի ֆոնդ, վավերագիր թիվ 26 428:

<sup>387</sup> Լեո, «Հայոց պատմութիւն», Գ, էջ 242:

<sup>388</sup> Միմեոն Լեհացի, «Ռեզերվացի», էջ 278:

կվովի մեջ հին ոսկեփորիկ մը: Զուղայցի խոջա Սահրադենց Շքրխանը 1685-ին հայ տպարան կհիմնե Վենետիկի մեջ: 1688-ին Ընդկաստանի մեջ կհիշվի հայ վաճառական խոջա Քալանթարը, որ առևտրական պայմանագրովթյուն կնքած էր անգլիացիներուն հետ:

Ժէ դարու Պոլսո հայ խոջաներուն մեջ եղան դեմքեր, որ տասնյակ տարիներ տիրական դեր կատարեցին: Առևտրական գործերու մեջ հարստացած հայեր էին մեծ մասամբ, որոնք տակավ սեղանավորները կզառնային օրվան թուրք երևելիներուն: Անոնք էին, որ կօզնեին նյութապես այս կամ այն փաշային, կօժանդակեին անոր վերելքին, իրենց կարգին օգտվելու համար հետո անոնցմե: Անգամ մը, որ փաշան կհասներ դիրքի, հայ սեղանավորը ինք ևս դիրք կատարեց իրեն ու կստանձներ տեսակ մը միջնորդի դեր:

Հայ սեղանավորները ուրեմն քացառիկ հեղինակութիւն ստեղծած էին իրենց համար երկրի մեջ, զավանդեալ միջև Պոլիս<sup>389</sup>:

Պետութեան մեջ իրենց համար ստեղծած դիրքին շնորհիվ, հայ խոջաները հեղինակութիւն կզառնային նաև ազգային գործերու մեջ, և իրենց կոնակը տված իրենց փաշային, իրենց կամը կպարտադրեին ազգին: Անոնց կամքովն է, որ պատրիարքները կուզային Աթոռ, կամ կհեռանային Աթոռեն: Իր ծոցին մեջ տեղի ունեցող խլրտումները Պոլսո հայ գաղութը մեծ մասամբ պարտական է օրվան ազդեցիկ հայ խոջաներուն:

Ժէ դարու Պոլսո հայ խոջաներուն մեջ կհիշվին խոջա Ռուհիանը<sup>390</sup>, երզնկացի խոջա Զովսեփր և որդին խոջա Զովհաննեսը<sup>391</sup>, խոջա Դավիթը<sup>392</sup> և ղեռ շատ ուրիշներ: Ասոնցմե ամենեն նշանավորը խոջա Ռուհիանն էր սակայն, որ, ինչպես տեսանք, դարը արկնծող տաճնապներու ընթացքին, քացառիկ դեր կատարեց Պոլսո հայ գաղութին մեջ: Նվազ աչքառու չէր խոջա Դավիթը: 1662-ին գրված ոտանավորի մը մեջ, զոր Երեմիա Չելեբի նվիրած է խոջա Դավիթի և անոր զավկին Գրիգոր Չելեբիի, գովքը կընն ապարանքի մը, զոր կառուցած են անոնք:

«Մեծ տուն էր սա խոնայ Դարթին,  
Որ հրկիզեալ ընդ քաղաքին,  
Հանգեալ և ինքն ի մէջ գործոյս,  
Որ ոչ ետես գլաւառ սուրիւ:»

<sup>389</sup> Առ, «Հայոց պատմութիւն, նորագույն շրջան», Ա մաս, Երևան, Պետհամբարտ, ապակետիպ, 1926 թ., էջ 53:

<sup>390</sup> Առաքիլ Դավրիթցի, էջ 242—245:

<sup>391</sup> Դարաւաղեցի, էջ 361:

<sup>392</sup> Ըրաւտ Ասատուր, «Կ. Պոլսո հայերը և իրենց պատրիարքները», էջ 100:

Իսկ միամօր որդի նորին,  
Զքնաղ Գրիգորն Չէլեպին,  
Աւարտեաց զաւ վայելչապէս,  
Շնորհաւորեալ առքիլ զբարին»<sup>393</sup>:

Ժէ դարուն Պոլսո հայ խոջաներու կեդրոնը կգտնվեր Խոջա խանի մեջ: «Ամենայն վաճառականք հայերը շատք կան անդ յամենայն աշխարհաց»<sup>394</sup>:

Խոջա խանը հրոճարակ եղավ 1660 թվականի հրդեհին. բայց ան կիտաքանդ վիճակի մեջ երկար ժամանակ ղեռ կմնար<sup>395</sup>:

Հայոց պատմութիւնը մեզի ցույց կուտա, թե հայ ժողովուրդի ճակատագրին են ենթարկված հաճախ իր բոլոր խավերն անխտիր: Եղած են դժնդակ պահեր, որ թշնամին խտրութիւն չէ դրած դասի և խավի միջև, իր կեղծքումները, հալածանքներն ու նախճիրները տարածելով բոլորին վրա: Հայ ժողովուրդն է հանդիսացած անոր միակ թիրախը: Եվ զարմանալի չէր, որ հայ ժողովուրդի մեծ ճիգերուն և պայքարներուն մեջ մաս առնեն նաև հայ ունևորը, հին մեծատուններն ու խոջաներն սկսյալ ավելի նոր օրերու քաղքենին, հայ ժողովուրդի լայն զանգվածներու կողքին ըլլա՛ր՝ անոր մղած մեծ պայքարին մեջ այլազան թշնամիներու դիմ:

Արդարև, այն հարուստներու կողքին, որոնք դիզել միայն սորված են, և լուսմայփոխներու և վաշխառուներու քովն ի վեր, որոնք գիտցած են տգրուկի պես ծծել լուկ, ունևորներու դաս մը ևս եղած է, որ զորավիպ կանգնած է ազգին կարիքներուն: Բարերարներու շարանը, զոր հայ ժողովուրդի պատմութիւնը կցցե մեր դեմը, ապշութեան կմատեն հաճախ մեզ: Միշտ չէ, որ անշուշտ հայրենասիրական ժեստեր են ազգին ընծայված բոլոր այդ բարերարութիւնները: Բայց քիչ չէ և անոնց թիվը, որոնց միակ խթանը հայ ժողովուրդին սատարելու մտահոգութիւնն եղած է:

ԺՁ դարու հայ տաղասացներն մեկը, Զովասափ Սեբաստացին, հետևյալ կերպով կիդեալացնե խոջա ինքըրը, որուն պատմութիւնը «Յայսմաւուրք» մը ընդօրինակված էր.

«Հայ գիտուն մարդ գարմանալի  
Չէ տեսեալ յո՛վ ժամանակի.  
Որ քէ հագար բաճ նա խօսի  
Հագարէն մէկ բաճ դալատ շունի.  
Նի հոգեսը մարդ և բարի,  
Պարկեշտ կացօք ըստ օրինի,  
Նի ընչալէտ առաքինի,  
Առատածեռն ի պարգևի:»

<sup>393</sup> Երեմիա Չէլեպիի «Ստամպոլոյ պատմութիւն», Բ, Վիեննա, 1932, էջ 741:

<sup>394</sup> Դարաւաղեցի, էջ 168—169:

<sup>395</sup> «Հայաստանի կոչնակ», 1927, էջ 845:

Փոքր անձն մարդ է ճանգիսի,  
 Խելոքն արագ իմաստի. f լի,  
 Հագրճուպ և խիստ արի,  
 Չկարէ մարդ տալ պատասխանի...  
 Շատ ուսմիկ մարդ և յոռի,  
 Կասեն նմա քէ չէ բարի.  
 Կամապաշտիցն յամատի  
 Եւ անգիտաց յիմար թուի.  
 Իսկ յիմաստնոցրն նա գովի,  
 Խոջա Խրդրբ մեծաբեկի»<sup>396</sup>:

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան, մեք-  
 բերելով Հովասափի այս տողերը, դիտել կու-  
 տա. «Ներդրրի մեջ Հովասափը անձնավորում  
 է արևմտահայ միջավայրում դիրք ստացած  
 խոջանների իդեալական տիպարը: (XV—XVI  
 դարերից ի վեր այստեղ խոջանները նշվում  
 են որպես ազդեցիկ հայ խնամք և տանու-  
 տերեր, եկեղեցու ու վանքի վերանորոգողներ  
 ու նվիրատուներ, գրչագրերի պատվիրատու-  
 ներ, և այլն: Իրենց ձեռքն առնելով հանրա-  
 յին գործերի ղեկը՝ հաճախ նրանք մեծար-  
 վում են որպես «խնամակալը ընդդէմ այլազ-  
 գեաց»: Հավանորեն նրանց մեջ կային այն-  
 պիսիները, որոնք իրոք անդապառնում էին  
 եկեղեցու և ժողովրդի նվաստացած վիճակին  
 և երազում նրանց բարվոք ասպազան»<sup>397</sup>:

Խոսելով հայ խոջաններու մարդասիրական  
 ժեստերուն և այդ ժեստերուն շնորհիվ անոնց  
 ձեռք ձգած հեղինակութւյան մասին, Անասյան  
 կգրն իր կարգին. «Իսկ ինչպիսի՞ փոխհարա-  
 բերութիւններ դոյութիւն ունենի առաջավոր  
 դիրքերում գանվող բուրժուազիայի և ժո-  
 ղովրդական զանգվածների միջև: Բազմաթիվ  
 փաստերի լույսի տակ հնարավոր է ճիշտ  
 պատասխանել նաև այս հարցին: Խոջայու-  
 թիւնը իր ձեռքում ունենալով ազգային  
 կյանքի ղեկավարութիւնը, անմիջական  
 շփման մեջ էր հայկական զավառների լայն  
 խավերի հետ և ազդեցութիւն էր ձեռք բերել  
 շնորհիվ այն բանի, որ գիտեր իր տնտեսա-  
 կան ուժեղ դիրքն ու անսահման կարողու-  
 թիւններից որոշ տոկոս ի սպաս դնել հայ  
 համարակական կյանքին: Նրա ներկայացու-  
 ցիչներն իրենց ազդեցութիւն շնորհիվ կարո-  
 ղանում էին, օրինակ, օգնութիւն հասնել ժո-  
 ղովրդին, երբ տեղական ճնշումների շափն ու  
 սահմանը անցնում էր»<sup>398</sup>:

Անասյան հետո կշարունակե. «Հայ խոջա-  
 ները գիտեին նաև հաճախ օգնութիւն հասնել

ժողովրդին՝ մեծ աղետների ժամանակ և հա-  
 սարակական կարիքների դեպքում, ինչպես  
 էին, օրինակ, հաճախակի կրկնվող թուրք-  
 պարսկական պատերազմների առիթով գերե-  
 վարվող հայերի գնումն ու ազատագրումը,  
 ժողովրդի բոլոր դասերի վրա ծանրացող ազ-  
 գային տուրքերի, — ինչպես էին, օրինակի հա-  
 մար, Երուսաղեմի վանքի անհատնում պարտ-  
 բերք, — պարբերաբար մաքրումը, և այլն:

Արևմտահայ բուրժուազիայի առաջավոր  
 հատվածը՝ խոջայութիւնը դիտակցում էր հայ  
 զանգվածների մեջ հեղինակութիւն վաս-  
 տակելու և իրեն հենարան ստեղծելու ան-  
 հրաժեշտութիւնը, քանի որ դրանով նա հող  
 էր պատրաստում, որպեսզի անհրաժեշտու-  
 թիւն դեպքում ժողովրդական լայն խավերը  
 ոտի կանգնեն իր դրոշի տակ»<sup>399</sup>:

Պոյտ գաղութի տարբերութիւնները ևս  
 կլիխտան հայ խոջաններու նման ժեստերով:  
 Պալաթու Ս. Հրեշտակապետ եկեղեցվո նորո-  
 գութիւն, 1627-ին, կօժանդակեն, օրինակ,  
 շատերը օրվան հայ խոջաններն, ինչպես  
 կպատմե Դարանաղեցին. «Այլ և աշխարհա-  
 կան տանուտէր աշխատաւորքն են՝ այսոսիկ.  
 Պօլյօյճի խոճայ Աստուածատուրն Տիվրիկցի.  
 Ակնցի խոճայ Վահրատն. Տիվրիկցի խոճայ  
 Վահրատն. մահտեսի Կարապետն. մահտեսի  
 Աղազարն. Ակնցի մահտեսի Բուլաֆն. Բակ-  
 լաճի մահտեսի Ղազարն. Քիրաճճի խոճայ  
 Յոհաննէսն. խոճայ Պարօնլուսն. խոճայ Փամ-  
 պուլին և իւր եղբայր խոճայ Կիրակոսն. Տէր  
 Յակոբի եղբայր խոճայ Նահապետն. Ուլուն  
 Փանոսն. խոճայ Պահատուրն. խոճայ Մար-  
 գարն. Նուրումէնց խոճայ Յակոբն և տիրա-  
 ցու Պօղոսն. և այլ բազում օգնականք սո-  
 ցա»<sup>400</sup>:

1656-ին Ղալաթի մեջ կազմված և նորոգ-  
 ված Ճաշոցի մը հիշատակարանը կըսե, թե  
 Ս. Լուսավորիչ եկեղեցվո «մեծաշուք իշխան-  
 ներն ու երեսփոխաններն են. խոճայ Դանիէլ,  
 խոճայ Մկրտիչ, խոճայ Սողոմոն, խոճայ  
 Քրիստոստուր, խոճայ Եկոտիար, խոճայ Մո-  
 րատ, խոճայ Եղիա»<sup>401</sup>:

Արդ, խոջաններու այս դասը, ժէ դարու  
 տագնապներուն միջոցին, կհանդիսանա ղե-  
 կավար խավը Պոյտ հայ գաղութին:

(Շարունակելի)

<sup>396</sup> Մենոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձե-  
 ազիր 6273, էջ 237:


<sup>397</sup> Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազատագրա-  
 կան մտքի պատմութիւնից», Բ, Երևան, 1959, էջ 38:

<sup>398</sup> Հ. Ս. Անասյան, հիշված աշխատութիւնը, էջ 80:

<sup>399</sup> Անդ, էջ 82—83:

<sup>400</sup> Մելիքն Ասատուր, «Երեքդարյան պատմութիւն...»,  
 էջ 58:

<sup>401</sup> Բարգեճ ծայրագոյն վարդապետ Կյոլեպեռյան,  
 «Կոլոտ Հովհաննես պատրիարք», Վիեննա, 1904,  
 էջ 120:



#### Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

### ՆՈՍՈՒՄ ԵՆ ՏԱՊԱՆԱԶԱՐԵՐԸ

1. Բնավ չէի մտածում, թե այս տողերը կգրեի, երբ 1962 թվականի ամռանը լուսանկարել էի տալիս մի քանի տապանաքարեր, որոնց պատկերները հրապարակվում են այստեղ: Այդ ժամանակ պարզացան ցանկություն ունեի միայն մի քանի խիստ հետաքրքրական, մի քանիսն էլ գեղարվեստական բարձր ճաշակով մշակված հին պատկերաքանդակների լուսանկարներն ունենալ, լոկ իբրև սիրող մեր ժողովրդի գեղարվեստական գործերի, որոնք այս ու այն տեղ դրված, ընկած կամ հավաքված են առանց հոգատարության, ենթակա փչացման և կորստի:

Այս ցանկությունն իմ մեջ առաջացել էր դեռ 15—16 տարի սրանից առաջ, երբ գործի բերմունքով այդ քարերը տեսա: Ասել, թե մինչ այդ նման քարեր է՛լ չէին պատահել ինձ, չի կարելի: Ես էլ, ինչպես և ուրիշներն ինձ նման, շատ նկարաքանդակ տապանաքարեր էի տեսել, երբեմն մի քանի թույլ կանգ առել այս կամ այն քարի մոտ, դիտել և անցել, առանց իմանալու, թե տեսածս ի՞նչ է, կամ քանդակագործն ի՞նչ է ցանկացել ներկայացնել: Նախօրոք ընտրածս տապանաքարերը նկարահանեին առիթ եղավ լուսանկարելու նաև մոտակայքում գտնվող այս կամ այն քարերը, որոնք հետաքրքրական էին թվում, առանց որևէ ծրագրի, կամ հատուկ ընտրություն: Հետո, տանը, և՛ ցերեկը, և՛ գիշերը ճրագի լույսի տակ, խոշորացույցի օգ-

նությամբ, սկսվեց, այսպես ասած, ուսումնասիրությունը ձեռք բերվածի: Աշխատում էի հասկանալ, թե ի՞նչ են ասում այդ քարերն իրենց վրայի նկարներով: Զգում էի, թե դրանք կարևոր բաներ են եղել և՛ մեռնողի և՛ նրա մերձավորների համար, որ այդքան մեծ աշխատանք թափելով, թերևս և մեծ ծախսով, կարևոր են համարել գծագրել լեռնաքարի, հաճախ չեղուտ բազալտի վրա: Զգում էի, որ այն, ինչ որ դժվարանում էի հասկանալ, իր ժամանակին հասկանալի է եղել ինչպես քանդակողի, քարի լեզվով ասած՝ կազմողի, այնպես էլ ժամանակակից մարդկանց համար:

Աստիճանաբար, ձեռքիս տակ եղած սահմանափակ թվով նկարաքանդակներն իրար հետ համեմատելով, եկա այն եզրակացություն, որ տապանաքարերի վրայի նկարները մինչև այժմ մեզ անհայտ կառույց տեղեկություններ են տալիս հին, անցած գնացած ժամանակների մարդկանց կենցաղի, հավատալիքների և այլ բազմատեսակ խնդիրների մասին, այնպիսի բաներ, որոնց մասին որևէ պատմագիր չի գրել և թերևս չէր ցանկացել, կամ արժանի չէր համարել գրել: Մի խոսքով թվում էր, որ ձեռքիս տակ են մի մեծ և անմասն գրքի հատուկեմտ թերթիկները:

2. Այժմ աշխատեմք բացատրել նկարաքանդակների իմաստը: Անհր սժեշտ և՛մ համարում սկզբից և՛թ նշել, որ նկարների նյութն անծանոթ և արտասովոր լինելու

պատճառով, բացատրությունները տրվում են վերապահությամբ:

Մեր ձեռքի տակ եղած 10 նկարներից 4 հատը՝ № № 1, 2, 3, 4, պետք է համարել մեռելի հուղարկավորության պատկերացում: Այդ նկարների իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է վերհիշել այդ բառի հին իմաստը, որը հին ուղղադրությամբ գրվում էր «յուղարկաւորութիւն» և նշանակում էր «յուղի արկանել», մեռելին ճանապարհ դնել: Եվ սակայն, այդ նկարներից որևէ մեկի մեջ էլ մեր հասկացած ձևով մեռել, այսինքն մարդու անշարժ մարմին՝ դիակ չկա: Նկարների մեջ ցույց տրված բոլոր մարդկային կերպարաններն էլ կենդանի են և, շատ թե քիչ, շարժման մեջ: Թող տարօրինակ շփվա ասել, թե ամենաշարժուն դեմքը մեռելին է ներկայացնում, մի դեպքում խոյի (նկար 4), իսկ մնացած դեպքերում ձիու վրա հեծած, որով ընդգծվում է, որ գնացողը, հեռացողը, մասինքն հանգուցյալը նա է, իսկ մնացած մարդիկ ուղեկցում են, կամ թե հանդիսատեսի դերում, նստած են (նկար 1):

Շարունակելով գննությունը, կնկատենք, որ 3 նկարներում մեռելները ներկայացված են իբրև երեխաներ և միայն մի դեպքում (նկար 1)՝ իբրև ծեր, երկար մորուքով մարդ: Թվում է, թե երեք երեխայի կերպարով ներկայացված մեռելները իրականում երեխաներ չեն եղել, այլ հասակավոր մեռելների սիմվոլիկ պատկերացումը երեխայի կերպարով, որով նկարի կազմողը, կամ կազմել տվողները, ցանկացել են ցույց տալ, թե մեռնողը երեխայի նման անմեղ մեկն է եղել: Թե իրոք այդ երեխաների նկարները սիմվոլիկ են և ոչ թե իրական, կարելի է հաստատել այն հանրատարած սովորությամբ, որ մեզ մոտ գոյություն ունի նաև ներկայումս, ըստ որի երեխայի մահվան վրա համարյա թե ուշադրություն չի դարձվում, ուր մնաց, որ նրա գերեզմանի վրա նկարաքանդակ տապանաբար դրվի: Չեմ կարծում, որ միջին դարերում այդ առթիվ ավելի սրտցավ վերաբերմունք եղած լինի: Երկրորդ՝ երեխայի նկար ունեցող երեք տապանաքարերից միայն № 2-ի վրա երեխան ոտք ունի, իսկ № 3 և 4 նկարներում ոտքեր չկան, և ավելին, № 3 քարի վրա ոտքերի տեղում փորագրված է ինչ որ խոպուպիկների նմանությամբ քանդակ: Արդյոք դրանով կազմողը չի՞ ցանկացել ամպ ցույց տալ: Ահա՛մա ենթադրություն է: առաջանում, որ շորս հեծյալ ննջեցյալների նկարներով էլ, կազմողները, տվյալ ժամանակի հասկացողությամբ: մեռելների հոգիներն են ցանկացել ցույց տալ: Այն խնդրում № 4 քարի վրա ցույց տրված մեծահասակի նկարն էլ միացյալներ ներխանների՝ նկարներին նախ նվաճա-

ռով, որ նկարում ուսերից ցած եղած մասը վերից վար իջնող գծերով է պատված, և, հավանաբար, կազմողը ցանկացել է մարմնի և դեհատների թափանցիկությունը պատկերել:

Այն հարցը, թե արդյոք միջնադարում հավատում էին հոգիների գոյությանը, թվում է, թե առարկության առիթ տալ չի կարող: Այդ առթիվ բավական է միջնադարյան գրականության նույնիսկ թուուցիկ ծանոթությունը: Ուրիշ հարց է, թե որքա՞ն ճիշտ է արված ենթադրությունը, որ վերը նշված շորս նկարներում էլ ննջեցյալների հոգիներն են ցույց տրված: Այդ ենթադրությունը կարող է հերքվել միայն հակառակն ապացուցող նյութեր հայտնաբերվելուց հետո:

3. Վերը հիշեցինք, որ մեր ձեռքի տակ եղած նկարներից շորսը հուղարկավորության տեսարաններ են: Այդ եղբակացության իբրև կոնկրետ հիմք գտնում ենք № № 1 և 2 նկարաքանդակներում, որտեղ ցույց է տրված նաև այն նպատակակետը, որին ձգտում է և հուղարկավորվում ննջեցյալի հոգին, իսկ մնացած երկու դեպքերում (նկար 3 և 4) հուղարկավորությունը հասկանալի է նկարների մոտիկ կամ հեռավոր նմանությամբ, բայց առանց կոնկրետ նպատակակետի պատկերացման: Հիշյալ № № 1 և 2 տապանաքարերն էլ գտնվում են Միսիանի շրջանի Ուզ գյուղի հին գերեզմանատանը, Որոտանի աջափնյա ցիլիոսյան մեծ բերդի տակ:

Նախ խոսենք № 1 նկարի մասին, որը բարդ կառուցվածք ունի, հետաքրքրական է և միևնույն ժամանակ տարօրինակ: Նկարում ցույց է տրված մի մեծ սենյակ (ձախ կողմում պատ, աջից դուռը և օձորից կախված զանազան իրեր), որի մեջ երկշար նստած են, ետևի շարքում երեք հոգուց բաղկացած երաժշտախումբը (աշուղներ), գլխներից աշալմա՞ս, հագներին երկար շորեր, երկար մորուքով, ձեռքներին և ծնկների վրա իրենց երաժշտական գործիքները: Դրանց դիմաց, առաջին շարքում շորս հոգի, նույնպես նստած, ձեռքի տակ խմիչքի անոթներ: Եթե շինեին նկարի աջ և ձախ ծայրերին քանդակված նկարները, կարելի էր կարծել, որ մարդիկ հավաքվել են ուրախ ժամանցի համար, մանավանդ որ դռան առաջ մտացու ոչխարն է ցույց տրված: Սակայն պատկերը փոխվում է, երբ դիտողի ուշադրությունը կենտրոնանում է նկարի աջ և ձախ ծայրերին եղած քանդակների վրա: Դրանցից ձախ կողմինը այն մեծահասակ հեծյալն է, որի մասին վերը հիշեցինք: Այդ նկարի պայմանական նույնիսկ մասին գրել ենք: Նույն պայմանականությունը ցույց տվող, վերից վար իջնող գծերը նկատվում են և ձիու վրա (վզին և գլխի ետևի մասում): Ուշագրավ հանգամանք է, որ

ձին սանձ շունի, ինչպես այդ ցույց է տրված ձիու քանդակ ունեցող մյուս նկարներում. բացի այդ, ձիու ետևի մասը ցույց չի տրված և այն տպավորությունն է ստացվում, որ հեծվորը և հեծյալը ետևի պատի միջից են դուրս գալիս: Այս բոլորը միասին վերցրած, մեզ բերում են այն եզրակացություն, որ նկարում ոչ թե կենդանի հեծվոր և հեծյալ են ցույց տրված, այլ նրանց միացյալ խրտվիլակը: Այս կարծիքը կամ եզրակացությունը հիմնավորվում է այն փաստով, որ այդ զույգը թոկով ամրացված է պատի մեջ խրված

կարող, որովհետև քանդակագործը (կազմողը) պահպանում է համեմատական շափր նույնիսկ տարածության մեջ (համեմատել առաջին և երկրորդ շարքերում նստած մարդկանց դեմքերը): Բացի դրանից, այդ դեմքը կանց դեմքերը (ցածի մասում) կախված է օդում դուրս մեջ (ցածի մասում) կախված է օդում և առանց մարմնի: Մեծ երևակայություն չի պահանջվում հասկանալու համար, թե ի՞նչ է ներկայացնում այդ բարձրաքանդակը: Դա է ներկայացնում այդ բարձրաքանդակում է հին նկարների մեջ ընդունված ձևավորումն է արևի, իսկ արևը պաշտամունքի առարկա է եղել հնում շատ ազգերի նման նաև մեզ մոտ:



Նկար 1

ցցին: Այս հանգամանքը ուղղակի ընդգծված է նկարաքանդակի մեջ: Բնականաբար հարց է առաջ գալիս, թե այդ իրական հանդեսում պայմանականորեն ներկայացված ձիավոր ննջեցյալը, կամ նրա հոգին ի՞նչ նպատակով է ցույց տրված, և ո՞ւր է գնում նա (մեռածը), որովհետև և՛ ձիավորի ձեռքի և՛ ձիու ոտքի շարժումները առաջընթաց են ցույց տալիս: Այդ հարցերի պատասխանը մենք կգտնենք, եթե ուշադրություն դարձնենք քարի աջ կողմում, դուրս մեջ քանդակված նկարին, որը նույնպես պայմանական է: Այդ, մարդու դեմքի նմանությունը կլոր քանդակում փորագրված են տարբեր ուղղություններ ձգվող նեղ շերտեր կամ գծեր, որոնց դասավորությունը տալիս է մարդու աչքերի, թթի, բերանի և բեղերի պատկեր: Թե այդ քանդակով նկարի կազմողը չի ցանկացել իսկական մարդու դեմք ցույց տալ, այլ միայն դրա նմանությունը, ապացուցվում է նրանով, որ այդ դիմանկարը իր շափով մոտ երեք անգամ ավելի մեծ է, քան նկարում ցույց տրված մարդկանց դեմքերը: Այստեղ սխալ լինել չի

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ մեռելի հոգին դեպի արևելք, դեպի հորիզոնից նոր բարձրացող արևն է գնում: Նաև կարելի է եզրակացնել, որ № 1 տապանաքարի վրայի նկարաքանդակն ամբողջությամբ ներկայացնում է հնում մեռածի հիշատակին նվիրված մեկն այն հավաքություններից, որոնք կոչվում են յոթնօրեք, քառասունք, տարելից, որոնց ժամանակ տրվում էր հոգեհաց, իսկ տվյալ դեպքում և ներկայացնում՝ երաժշտությամբ:

№ 1 նկարի մեջ կան մի շարք մեծ ու փոքր իրեր, որոնց ի՞նչ լինելը դժվար է որոշել: Դրանցից ամենամեծը, որ տեղավորված է ձիու գլխից վերև, նման է երկաթի օղակի մեջ առնված գլուղական հին, երկանիվ սայլերի՝ անիվի, որը շինվում էր ամբողջական, կամ մի քանի, իրար կցված հաստ տախտակներից: Թերևս հանգուցյալը արհեստով փայտագործ է եղել...

4. Մեր հավաքածուի մեջ ամենակարևոր և ամենաարժեքավոր տեղերից մեկը զբաղվում է № 2 նկարը, թե՛ իր իմաստով և թե՛ կարևոր հայտնություններով: Բարբախտաբար այդ

տապանաքարը արձանագրություն (տապանագիր) ունի, որը հեշտ վերժանելի է և կարելի է տեղեկություններ է տալիս: Դրանից իմանում ենք, որ տապանաքարը շինված է 1574 թվականին, քարի ձևավորման վրա աշխատել են երկու հոգի՝ քանդակագործ (կազմող) Կարդաշը և տապանագիրը գրող Սիմավոն երեցը: Պակաս կարևորություն չունի նաև այն տեղեկությունը, որ այդ ձևի տա-

աման: Ձիավորի ձևերին բռնած իրը գինով լի թաս է: Երեխայի նմանությամբ պատկերված ննջեցյալի, կամ նրա հոգու ձևերին: գինու թաս բռնելու հանգամանքը մենք գտնում ենք նաև № 3 և 4 նկարաքանդակներում, որի բացատրությունը կտրվի հետո: Իսկ ինչ վերաբերում է այդ անոթը գինու թաս համարելու մեկնաբանությանը, դրա հիմնավորումը կարելի է տեսնել № 3 նկարում, որտեղ նույն



Նկար 2

պանաքարերը կոչվել են ձիաքար, մինչդեռ ցարդ ձիաքար կոչվում էին ձիու նմանությունով քարերը: Բերենք այդ տապանագիրը, իր ուղղագրությունը պահպանելով. «Ես Կարդաշս կազմեցի ձիայխարս Դանջին Թվն ՌԻԳ Սիմավոն երեց գիրեց»:

Այս գեղեցիկ և ճաշակով կազմված խորհրդավոր նկարը, ըստ կազմողի (քանդակագործի) մտահղացման, ինչպես վերը հիշված է, ներկայացնում է մեռածի (Դանջի) կամ նրա հոգու հուղարկավորությունը, և դրա կետ նպատակին: Նկարի ձախ (ըստ քարի դիրքի՝ արևմտյան) կողմում պատկերված է մեռածի հոգին մանկան նմանությամբ, ձիու վրա հեծած: Ձիու կողքից, իր ոտով, մատաղացու ոչխարն է գնում, իսկ առջևից՝ ուղեկցողը, կամ հուղարկավորողը, խմբի մեծ ու փոքր անոթներով (երևի գինի և օղի պարունակող) և ձեռքին մի կլոր, նախշուն իր, որը կամ հաց է (մատնաքաշի նման), կամ որևէ

անոթի համանման ձևակերպումը ցույց է տրված և՛ ձիավորի և՛ ձախից առաջին՝ գինու կուժը տանող ուղեկցողի ձեռքերում:

Առայժմ անհասկանալի է ձիավորի հետ կապակցություն ունեցող երկրորդ իրը, որ ձիու փորկապի տակից օձաձև բարձրանում է վեր և ապա հորիզոնական ձև ստանալով անցնում է հեծյալի ազդրի տակով և վերջանում օձի գլխի նմանությամբ: Այդ իրը կարելի էր և օձ համարել, բայց դա ոլորված հաստ թոկի է նման (թելերն երևում են խոշորացույցի օգնությամբ):

Մարդու հասակից էլ բարձր երկարավիզ անոթով, որը գինու կուժ ենք համարում, № 2 նկարը բաժանվում է երկու մասի: Նկարի աջ, ըստ քարի տեղագրության՝ արևելյան մասում ցույց է տրված մի բարդ խորհրդանիշ, դեպի որն ուղղված է ձիավորի ընթացքը: Այդ խորհրդանիշը ներկայացնում է կենտրոնում մի թևատարած արծիվ, կանգնած մեր քարե



բերակներ) կրկնվում է մեր թվագրութունից առաջ երրորդ հազարամյակի կեսին պատկանող մի ամրոց շարք բարից, բիտումից և այլ նյութերից կերտված հուշարձանների վրա: Արովհետև այդ խորհրդանիշի նկարագրութունը բավարար չէ կատարված, կաշխատենք այդ անկը մեր հասկացած ձևով: Նկարի կենտրոնում մի թևատարած արծիվ է, երկարալիք մարդու դեմնով, աչքերը կիսախուփ, կարծես խոր մտածմունքի մեջ: Արծիվը կանկերով բռնել է աջ ու ձախ կողմերում հանգիստ կանգնած եղջերուների պոչերը: Եղջերուները գլուխները թեթևակի դեպի արծիվի կողմը դարձրած, կարծես հրամանի են սպասում: Դժբախտաբար վերոհիշյալ նկարագրության հեղինակը խորհրդանիշի իմաստը չի տալիս, և դրանով (ասածով) այն տպավորութունն է ստացվում, որ նա այդ նկարը հասկանում է իբրև արծիվ որսի մի տեսարան: Վերոհիշյալ գրքից բերված քաղվածքը երկու կարևոր հարցեր է շոշափում. մեկը խորհրդանիշի ժամանակն է՝ երրորդ հազարամյակի կեսերը, մեր թվագրութունից առաջ, մյուսը տարբերակների մասին է: Ահա այդ տարբերակներից մեկն ենք համարում շատ ուշ՝ է դարին (մ. թ. ա.) վերագրված, էլամում հայտնաբերված սալի վրայի քանդակը, որի մեջ հետևյալ տարբերութունները կային. էլ-Օբեյդի խորհրդանիշի համեմատությամբ, էլամի քանդակում արծիվի երկու կողմից եղջերավոր կենդանիներ են, բայց ոչ եղջերուներ, և ցույց են տրված մարմնի միայն առաջին կիսով չափ, և այն էլ վազբի մեջ և ոչ կանգնած դրությամբ: Արծիվը կանգնած է ոչ թե եղջերուների պոչերի վրա, այլ «վիշապ»-ներին նմանող մի կենդանու վրա: Այսպիսով մենք տեսնում ենք միևնույն խորհրդանիշի զարգացումը, երրորդ հազարամյակի կեսերից մինչև է դար (մ. թ. ա.): Ահա այդպիսի դրությամբ այդ խորհրդավոր էմբլեման մենք գտնում ենք Սյունյաց երկրի Ուղ գյուղում և այլուր, քրիստոնեական շրջանի ժՁ դարում: Մի՞թե սա զարմանալու բան չէ: Իսկ թե ինչու, ե՞րբ և ի՞նչ ճանապարհով է անցել այդ խորհրդանիշը մեր երկիրը, դրանք հարցեր են, որոնց պարզաբանումը շատ ժամանակ կպահանջի և մեր նյութից դուրս է: Բայց քանի որ այդ խորհրդավոր

խորհրդանիշը ժՁ դարում փաստորեն մեզ մոտ (գոնե Սյունիքում) հավատալիքի առարկա է եղել, փորձենք ըստ մեր կարողության մեկնաբանել դրա նշանակութունը, րիկ է այլ բացատրութուն ձեռքի տակ չունենալով:

Նախ պետք է հիշել, որ այդ խորհրդանիշը կազմվել է մի երկրում, որտեղ, ի շարս այլ կուլտուրական հնագույն օջախների, մարդկային միտքը, շատ վաղ ժամանակներից սկսած, զբաղվել է բնության զաղտնիքների և մասնավորապես երկնքի լուսատուների և նրանց շարժումների ուսումնասիրությամբ, մի խոսքով աստղաբաշխությամբ:

Ինչպես տեսնում ենք, բոլոր տարբերակներում էլ, մեզ հնաբերքող խորհրդանիշի կենտրոնական դեմքը արծիվն է, որի պատկերացումը շուրջ շորս հազար տարվա հնութուն ունի: Ի՞նչ կարող է պատկերավորել արծիվը, եթե ոչ մի էակ, որը վեհ է, մեծ և հզոր: Նա սավառնում է երկրից վերև, ամպերից էլ վեր, հաճախ անտեսանելի, և կարծես իշխում է երկրի վրա: Սրանից դժվար չէ եզրակացնել, որ այստեղ պատկերված է տիեզերական ոգին, որը ղեկավարում է տիեզերական մարմինների հակընթաց (կենտրոնածիղ և կենտրոնախույս) ուժերը: Այդ ուժերը պատկերված են արծիվի երկու կողմից ցույց տրված սպասողական դրությամբ, կամ սրբնթաց վազող ուժեղ կենդանիների նմանությամբ: Այդ կենդանիները պատկերներում տարբեր են, մի տեղ եղջերուներ, էլամում՝ եղջերավոր կենդանիներ, իսկ Ուղում՝ ձիու և եղջերավոր մի կենդանու նմանությամբ: Այդ տարբերութունը կարևոր հանգամանք չէ, կարևորը դրանց ընդհանուր հատկութունն է՝ ուժը և սրբնթացութունը: Խորհրդանիշի բացատրութունը լրացնելու համար մնում է էլամի և Ուղի տարբերակներում արծիվի ոտքի տակ ցույց տրված վիշապի նմանութուն ունեցող նկարի մեկնաբանութունը տալ: Հանրահայտ է, որ մեր սակավաջուր երկրում, հեթաթներում աղբյուրները (ջուրը) հաճախ հիշատակվում են դրանց ակունքները պահպանող վիշապների զուգակցությամբ: Իրականում հեթաթների այդ հիշատակութունները հաստատվում են Արագածի և Գեղամա լեռների մի շարք աղբյուրների ակունքի մոտ հայտնաբերված քարակերտ վիշապների (ձկան նմանությամբ) առկայությամբ: Ջուրը (աղբյուրը) թե՛ իրականում և թե՛ այլաբա-

<sup>1</sup> Համենայն դեպս մենք այն կարծիքին ենք, որ այդ խորհրդանիշը ժՁ դարում չէ փոխանված Միջագետքից, այլ նախքան քրիստոնեական կրոնը մուտք գործելը Հայաստան, նույնիսկ մեր թվագրութունից առաջ, և սերնդից սերունդ անցնելով, իբրև հավատալիքի մի առարկա, պահվել է, հավանաբար կորցնելով իր իմաստը: Սրանից եզրակացնում ենք, որ նման քարեր, տարբեր դարերում քանդակված, կարող են գեղես հայտնա-

բերվել: Նման քարերի վերջին օրինակներից մեկն ենք համարում Ուղի գերեզմանատնից անհայտացված տուֆակերտ քարը, որից, ըստ երևույթին, օգտվել է № 2 նկարաքանդակի կազմող կարգաչը: Նաև ենթադրում ենք, որ հիշյալ տուֆակերտ քարն ուրիշ տեղից է բերված եղել: Մահարձանների նման տեղափոխութունների փաստեր կան հնուց և թե՛ մեր օրերում:


նորեն կենդանության, կյանքի նշան է: Թվում է, որ սխալված շենք լինի, եթե չրի և վիշապի այսպիսի զուգակցությունից եզրակացնենք, որ քանդակի լեզվով խորհրդանշում պատկերված է իբրև կյանքի նշան:

Խորհրդանշիչ մեջ (էլամի և Ուրի տարբերակներում), արծիվը կանգնած է վիշապի վրա: Եզրակացնում ենք, որ նկարաքանդակում այդ նշանակում է տիեզերական ոգու իշխելը կյանքի վրա, հետևապես և՛ երկրի վրա:

Այսպիսով գալիս ենք այն եզրակացության, որ № 2 տապանաքարի նկարը իսկապես մի քանակի է հիշյալ խորհրդավոր խորհրդանշիչ տարածումը մեզ մոտ (գոնե Սյունիքում) հասկանալու համար, և դրա հավատարիք լինելուն: Հետևապես և հասկանալի է և այդ (№ 2) նկարաքանդակի իմաստը, այսինքն,

նպատակին: Այս նկարաքանդակը մի քանի առավելություններ ունի նման բովանդակությամբ ունեցող մյուս նկարների նկատմամբ: Նախ՝ ավելի բազմամարդ է, որով հնարավորություն ենք ստանում գաղափար կազմելու հուշարկավորությանն սպասարկող ծառայող դասակարգի մեջ գոյություն ունեցող որոշ շերտավորման մասին. երկրորդ՝ այստեղ հանդես է գալիս և կանացի սեռը (ձեռամբարձ, ձիու գավակից վերև), և վերջապես, նկարներում ցույց տրվող ենթադրական առարկաներից մեկի ի՛նչ լինելու մասին (գինի խմելու գավաթ), ձիավորի և առաջին սպասավորի ձեռներին:

6. Մեր ձեռքի տակ եղած նկարաքանդակների մեջ № 4-ը մենք համարում ենք ամենաարժեքավորը, թե՛ նկարի կազմության (կոմ-



Նկար 3

Դանջիի հոգին գնում է, կամ հուշարկավորվում է դեպի այդ խորհրդավոր տիեզերական ոգին, մատաղով և հոգեհացով հանդերձ: Մնում է նշել այս նկարում պատկերված մի կարևոր մանրամասնություն ևս, որը կարող է վրիպել դիտողի ուշադրությունից: Դա ձիավորի (հոգու) աջ ձեռքի լայն շարժումն է, զուգակցված գլխի շարժմանը և ձեռքին բռնած գինու գավաթին (դրա մասին արդեն հիշել ենք), որով, կարծես, մեկնող հոգին «մնաս բարև» է մաղթում մնացողներին:

5. Մեր հավաքածուի № 3 նկարը մեռածի հոգու նույն հուշարկավորությունն է ցույց տալիս, դեպի արևելք<sup>2</sup>, առանց նշելու կետ

պողիցիա) և թե՛ քանդակի կատարողական արվեստի տեսակետից: Նկարի մեջ ցույց տրված մարդոց և կենդանիների դասավորությունը, նրանց ազատ և անբռնազրոսիկ ու տրաֆարետի կանոններով շկանշկանդված շարժումները հիանալի են և գրավիչ:

Նախ հայտնենք այդ քարի տեղը: Դա գտնվում է Անդեղակոթ գյուղի (Սիսիան) վերին հանգստարանում, գյուղի ծայրին, դեպի Սիսիան տանող խճուղու ձախ կողմի բարձունքի վրա գտնվող բրգածե դամբարանի հարավային՝ գյուղահայաց՝ կողմում<sup>3</sup>: Այդ քարն ուսումնասիրված չէ: Հավանական է, որ

<sup>2</sup> Նկարաքանդակը քարի հյուսիսային ճակատին է փորագրված, այդ պատճառով էլ, եկեղեցու հարավային

պատի մեջ տեղավորվուց հետո, հուշարկավորության ընթացքը հակառակն է ցույց տալիս:

<sup>3</sup> Լուսանկարը տեղավորված է այս հոդվածի վերջում:

վրան, քարաքոսի տակ արձանագրություն հայտնաբերվի, որից թերևս իմացվի տարեթիվը և քանդակագործի անունը:


Յավում ենք, որ նկարն ավելի պարզ չէ, ուստի բավականանալով եղածով, փորձենք հասկանալ նկարի ի՛նչ լինելը և դրա իմաստը:

Նկարից այն տպավորությունն է ստացվում, որ գործողության վայրը մի ժայռապատ, թեք լեռնալանջ է կամ ձորալանջ: Ձախից, մի ժայռի տակ, կանգնած է մի մարդ (որին հովիվ ենք համարում), աջ ձեռքին՝ ծայրը կեռ մի երկար փայտ, որը նման է հովիվի ցուպի, ձախ ձեռքին բարձր բռնած ունի մի իր, որը նմանեցնում ենք հնում գործածվող ձիու փայտաշեն թամբին գլխավայր պահված: Այդ մարդու առաջ կանգնած է սանձը բերնին մի ձի՝ չուլը վրան դրած: Զիտց աջ, բառասմբակ վազող ձիու նմանությունամբ, մի այծ է սլանում: Թե դա իրոք այծ է և ոչ թե ձի, երևում է նրա ցցված պոչուկից և կոտոշներից: Վազող այծից աջ, ձորալանջն ի վեր մազցում է երկարավիղ մի մեծ խոյ: Այդ կենդանու խոյ լինելուն ապացույց է նրա ետևից կախված մեծ ու ծանր դմակը և այծի կոտոշների նմանությունն ունեցող երկար պոչերը: Խոյից աջ, ժառերի մեջ հանդարտ քայլում է մի ուրիշ այծ: Խոյի մեջքին հծած է գլխի երկար մազերն ուսին իջած, թեթևակի դեպի աջ թեքված մի մանուկ՝ նկարի կենտրոնական դեմքը, որին մենք համարել ենք մեռածի հոգին: Մանկան աջ ձեռքին բռնած մի իր կա, որի ի՛նչ լինելը պարզ չէ: Ենթադրում ենք, որ դա էլ, № № 2 և 3 նկարներում ցույց տրված հոգիների նմանությամբ, ձեռքին գինու թաս է բռնել: Այդ ենթադրությունը հաստատում է մանկան (հոգու) աջ կողմում տեղավորված գինու երկարավիղ մեծ անոթը: Մանկան ճանապարհին, ձախից, կանգնած է ձեռքերը դեպի վեր բարձրացրած մի կին, որի ձախ ձեռքին մի իր կա բռնած, իսկ դեպի մանուկը ծալված աջը դատարկ է: Կնոջ նկարից աջ, քիչ վերև, ժայռերի մեջ հանգիստ կանգնած է երրորդ այծը:

Այս, ըստ ամենայնի գեղեցիկ ու բացառիկ նկար կազմողը երևի ցանկացել է ներկայացնել ձորալանջում արածող այծ ու ոչխարի հոտը, վերջիններից, իբրև ներկայացուցիչ, վերցնելով միայն խոյին, իսկ այծերին գերադասել է նրանց մարմնի բարեձևությունը և պլաստիկ շարժումների պատճառով, որը և կատարված է մեծ վարպետությամբ:

Այս նկարն իր կազմությամբ բոլորովին տարբերվում է հուղարկավորություն ներկայացնող մյուս նկարաքանդակներից: Չկա մեռելին, կամ նրա հոգուն տանող ձի, չկան հուղարկավորությունն սպասարկողները, մատաղացուն, խմիչքի անոթները և այլն: Դրան-

ցից միայն գինու մի մեծ կուժ կա, այն էլ առանց սպասարկողի: Կան ինքը, մեռնողի հոգին, և իբրև կենտրոնական դեմքերից մեկը՝ մի կին, և իբրև կողմնակի անձ՝ հովիվը: Իացի այդ, նկարի տեղը ոչ թե անորոշ մի վայր է, կամ սենյակ, այլ բաց բնության մեջ արածող հոտի արտավայրը:



Նկար 4

Այս արտասովոր նկարի իմաստը հասկանալու համար պետք է դիմել ժողովրդական հավատալիքներին: Նկարի մեկնարանություն այդ սիստեմն ընդունելու դեպքում, մեր առաջ բացվում է, կազմողի պատկերավոր մտահղացմամբ, բարի լեզվով արտահայտված մի գողարկի, սրտաշարժ պոեմա: Բացատրենք մեր հասկացածը:

Ըստ ժողովրդական հավատալիքի, որը դեռևս բոլորովին մոռացված չէ, մեռածի հոգին, մահից հետո, մի առժամանակ դեռևս չի հեռանում երկրից. նա երևում է իր մերձավորներին երազներում, և որ զխավորն է, սիրում է կարոտով թափառել իր սիրած տեղերում, հեծնել իր սիրած ձիուն և այլն: Այս հավատալիքն իբրև հիմք ընդունելով և նկատի առնելով նկարում ցույց տրված մարդկանց, անասունների և որոշ իրերի տեղադրությունը, դիրքը և շարժումները, ստանում ենք հետևյալ պատկերը:

Վերջացել են թաղումը և դրա հետ կապված ծիսակատարությունները: Այդ է ցույց տալիս հուղարկավորների բացակայությունը, պատից կախված դատարկ սալակները և գինու կուժը՝ առանց սպասարկողի: Թաղմանը և հոգեհացին սպասարկող ծառաները գնացել են իրենց գործին: Դրանցից, նոր վերադարձած հովիվը, ցուպը ձեռքին, պատրաստվում է ձին թամբելու, ժայռերի արանքում ցրված հոտը հավաքելու և խնամելու համար, երբ հայտնվում է մեռածի թափառական հոգին: Նա հանգիստ չունի, շտապում է իր սիրած տեղը, ժայռապատ սարալանջը, որտեղ իր հոտն է արածում: Արդեն այդտեղ է որդե-

կորույս մայրը, որ իր վիշտը մեղմելու համար, որդու սիրած տեղն է եկել: Մեռածի հոգին, դապի իր մայրն շտապելով, ցատկում է սիրած խոյի գավալը, որը խրտնած, լեռնալանջն ի վեր է մագլցում: Վախեցած փախչում է հոգու ճանապարհին պատահած առաջին այծը: Հոտի մեջ առաջացած այս իրարանցումը գրավում է հովվի ուշադրությունը, և նա մի պահ զարմացած, մնում է անշարժ, ձիու թամբը ձեռքին բարձր բռնած: Մայրը տալիս է որդուն ավանդությունը ընդունված գինու բաժակը (մոր քջ՝ որդու կղմն ուղղած՝ ձեռքը դատարկ է): Մեռածի հոգին բաժակը բարձրացրել է կենդանի մնացածների կենացը կամ ի նշան հրաժեշտի, № 2 և 3 զարդաքանդակների նմանությունը:

7. Հուղարկավորության ծեսերի հետ մտակա առնչություն ունի հանգուցյալի հիշատակին տրվող հոգեհացի սովորությունը: Այդ բովանդակությունը, բազմաթիվ տարբերակներով, նկարաքանդակ տապանաքարեր կան մասնավորապես Մարտունու շրջանի Վերին Կարանլուխ գյուղի ավերված եկեղեցու շուրջը: Դրանցից մեկի նկարը, վերցված իմ ճանապարհորդական հուշատետրից, իբրև նմուշ ցույց է տրված № 9 նկարում: Այդ քարը գտնվում է հիշյալ եկեղեցու արևմտյան կողմում, և հատկապես ընտրված է վրայի քանդակի պարզությունը և թվագրով տապանագիր ունենալու պատճառով: Ճապանագիրը հետևյալն է. «ՍՍ Մեղմումս կանկենցի խաչս ճառս իմն Հանխիսն քվ ՌԻԱ»: Թվականը մեր թվագրությունը կլինի 1572: Առաջին տպավորությունն այն է, որ այստեղ ինչ-որ թյուրիմացություն կա: Մեղմումը հիշատակում է, որ իր հոր հիշատակին այս խաչն է կանգնեցրել, բայց տապանագիր կրող քարը խաչ, կամ մեր հասկացողությունը խաչքար չէ, այլ սովորական մի տապանաքար: Սակայն նկատի ունենալով, որ տապանաքարերի վրա քանդակվում են դրանց տակին թաղված անձի հիշատակության և պարծանքի արժանի գործերը, պետք է հետևենք, որ այդ տապանաքարի տակ թաղված Մեղմումի («ես Մեղմումս») հիշարժան գործը հոր գերեզմանի վրա խաչքար կանգնեցնելն է, որը և պիտի լինի տապանաքարի մոտերքում:

Նկարի մեջ ցույց տրված երկու անձնավորություններից ձախակողմյանը, մեր կարծիքով, ինքը Մեղմումն է: Աջակողմյանի ինչ լինելը պարզ է. դա երաժիշտ, սազ ածող, հավանաբար և երգող աշուղին է ներկայացնում: Ուշադրության արժանի է այդ երկուսի միանման, պարսկական տարադի հագուստը: Այդ տարազը մինչև վերջերս էլ գործածական էր Իրանում, և հավանական է, որ այժմ էլ գործածության մեջ է: Սովորաբար տնից,




Նկար 5

կամ գործատեղիից դուրս գալիս, դրա վրայից հագնում են «աբա»: Նկարի մեջ ցույց տրված անձանց առանց արայի և գլխարակ լինելը ցույց է տալիս, որ նրանք տան մեջ են: Ուշագրավ է, որ երկուսն էլ կիսով չափ ածիլված, բարակ բեղեր ունեն, իսկ իբրև մորուք՝ Մեղմումը մի փունջ մազ ցածի շրթունքի տակ, իսկ երաժիշտը՝ ծնոտի տակ բարակ շեքով: Սրանի մազերի հարդարման այս տարազը հակապատկերն է Ուզի, Անգեղակոթի և հատկապես Մնգուրի ձորի (Գորիսի մոտ) վանքի տապանաքարերի վրա պատկերված դիմանկարների հաստ ու երկար բեղերի և սեպածե մորուքների:

Այս նկարում ցույց տրված գլխավոր անձի՝ Մեղմումի՝ զբաղմունքը որոշ չափով կարելի է որոշել: Համենայն դեպս նա ազնվական չէ, եթե ոչ կհիշեր իր ցեղաբանությունը, և ոչ էլ շատ հարուստ մեկը, որովհետև սպասարկող անձնակազմ չկա. դրանց փոխարեն ինքն է ոտքի կանգնած, պատրաստ սպասարկելու Բացի այդ, բավարարվել է իր սպասվող հյուրերին մի սազ ածողով միայն զբաղեցնելու: Հավանաբար նա միջին կարողության տեր վաճառական է, կամ նստակյաց զբաղմունք ունեցող մի արհեստավոր, նրա նստակյաց զբաղմունքն ընդգծված է մարմնի պարարտությունով: Մեղմումի վաճառական, կամ արհեստավոր լինելն ավելի ևս անառարկելի կլինի, եթե նկատի ունենանք նրա բնակավայրի՝ Վերին Չարանլուխի՝ Մեղմումի լեռնանցքով ընթացող տարանցիկ առևտրական ճանապարհի վրա իբրև մի հանգուցային կետ լինելու հանգամանքը, որին ապացույց է այդ կետում գտնվող նման նկարաքանդակներ ունեցող տապանաքարերի շատությունը:

(Շարունակելի)



### ԲՋՆԻԻ ՎԱՆՔԸ ԵՎ ԲՋՆԻ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՍ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Բջնի գյուղը Հայաստանի հնագույն և նշանավոր բնակավայրերից է. այն տարածվում է Հրազդանի ձորում՝ գետի աջ ափին, այժմյան Հրազդանի (Ախտալի) շրջանում՝ պատմական Հայաստանի Այրարատյան նահանգի Վարաժնունիք գավառում, հանդիսանալով Վարաժնունյաց իշխանների նստավայրը և պաշտոնական ամուր հենակետերից մեկը:

Պատմական աղբյուրներում Բջնի գյուղը հիշատակվում է Ե դարից: Հնագիտական հետազոտություններն էլ ցույց են տալիս, որ այնտեղ բնակություն է եղել Ե դարից դեռ շատ դարեր առաջ:

Ղազար Փարպեցի պատմիչը, խոսելով Ե դարի հայ-պարսկական պատերազմների մասին, տեղեկացնում է, որ երբ հայկական բանակը, հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանի ղեկավորությամբ դառնում էր Շիրակում, սպասելով դաշնակիցների զորքերի գալուց, Վահանը խորհուրդ էր տալիս հույս չդնել օտար՝ հունաց, հռոմեացոց օգնության վրա, այլ սեփական ուժերով դեմ կանգնել թշնամուն: Ղեկավար զորականները և ավագանի իշխանները հավանություն են տալիս Վահանի այդ խորհրդին և ուխտում են մինչև արյան վերջին կաթիլը իրենց սեփական ուժերով դիմադրել պարսիկներին, միաժամանակ նպատակահարմար համարելով իրենց այդ ուխտը հաստատել երդմամբ: Ապա զորաբանակում եղած Աթիկ անունով մի քահանա առաջ է մատուցում Ավետարանը՝ երգվելու համար: Փարպեցին ասում է, որ այդ

քահանան Բջնի երևելի գյուղից էր. «Եւ մատուցեալ յառաջ սրբոյ քահանային, որում անունն էր Աթիկ, որ էր ընդ նոսա ի բանակին, այր բանիրուն բանիւ և խորհրդապահ սրտիւ, յերևելի գեղջէն, որ կոչի Բջնի...»<sup>1</sup>:

Հաջորդ տեղեկությունը Բջնիի մասին վերաբերում է է դարին: Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, խոսելով հայոց Եզր կաթողիկոսի և Հովհան վարդապետ Մայրավանեցու փոխհարաբերությունների մասին, Մայրավանքի տեղը մատնացույց է անում «Ի ծործորս լբրինն ամրոցին Բջնոյ»<sup>2</sup>:

Ժ դարի կեսերին Պահլավունիները ժառանգելով Վարաժնունիքը, Բջնին դարձնում են իրենց ոստանը և պաշտպանական ամուր հենակետերից մեկը, որի ընթացքում ավելի զարգանում, ընդարձակվում և բարգավաճում է այն: Մխիթար Այրիվանեցու վկայությամբ, Բջնին վերաշինում է Վասակ Պահլավունին՝ Գրիգոր Մագիստրոսի հայրը. «Իսկ Մոնոմախն, որ կալաւ զԳագիկ թագաւորն՝ ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի... Սա է որդին Հոլում Վասակայ՝ շինողին Բջնոյ...»<sup>3</sup>:

Պահլավունիները հիմնում են նաև Բջնիի վանքը, դարձնելով այն իրենց հոգևոր կենտ-

<sup>1</sup> Ղազարայ Փարպեցոյ «Պատմութիւն հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1908 թ., էջ 264:

<sup>2</sup> Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 79:

<sup>3</sup> Մխիթարայ Այրիվանեցոյ «Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1860 թ., էջ 58—59:

րոնը. իսկ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, Սմբատ-Հովհաննես շահնշահի հրամանով, Բջնիի վանքը հաստատում է որպես եպիսկոպոսանիստ վայր՝ իր հատուկ թեմով-վիճակով, ինչպես այդ մասին վկայում է վանքի հարավային պատի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Թ. ՆՁ. (1031), Ենորհին Աստուծոյ այս հրամանք է իմ՝ Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի և Սմբատայ շահնշահի, որ հաստատեաց զեպիսկոպոսարան ի Բջնի քաղաքի զՍուրբ Աստուածածինս՝ հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան, որդի Վասակայ. և տուաւ վիճակ ի Սուրբ Աստուածածինս ի Փոշահանից մինչև ի Նիգ. և Դիւատուն... և Աղստե. և տուաք գաւազան և Սուրբ Նշան և Աթոռ: Արդ՝ եթէ որ խափանել ջանայ զԱթոռս կամ յայլ տեղիս փոխել, կամ զհողն յափրշտակել, կամ զաւանդ եկեղեցոյս զողանալ՝ թէ եպիսկոպոսաց կամ յիշխանաց ով որ հակառակի, նզովեսցի լկաստուծոյ և ի մէնջ, և ի ՅՓԸ. հայրապետաց, և արմատակի ջնջեսցի յիշխանիկ նորա յերկրէ, և անլոյծ կապեսցի: Եւ արդ՝ այս է բնական և առաջին սահմանահատ վիճակ և Աթոռ զոր հաստատեցաք արձանագրով և շրջաբերականաւ զսահմանահատ վիճակի սորա, որ է յարևելից ի Մարգետոյ մինչև գետն Ախուրեան լկնտոյ, և ի հիւսիսայինս լկղստե... և որ հատանել ջանայ յայսմանէ ի միջոյ կամ յեզերաց աւելի կամ մասն ինչ, զվերասացեալ զպատիժս կրեսցէ և ի հանդերձելումն. ամէն»:

Ինչպես հետևում է այդ արձանագրությունից, Բջնիի եպիսկոպոսական թեմը ընդգրկում էր ընդարձակ գավառներ, Գեղամա ծովից մինչև Ախուրեան գետը, հյուսիսից մինչև Գուգարք նահանգի Զորոփոր կամ Կանին գավառը, հարավից մինչև Վարաժնունիքի բուն սահմանը, որպիսի հանգամանքը վկայում է Բջնիի եպիսկոպոսական թեմի ուժն ու հեղինակությունը:

Գրիգոր Մագիստրոսի՝ Ասորոց կաթողիկոսի թղթին գրած պատասխանում հիշվում է Բջնիի վանքի առաջին առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսի անունը:

Ըստ Վարդան Բարձրբերդցի պատմիչի, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, Սմբատ-Հովհաննես թագավորի հետ ընդհարվելուց հետո, 1029 թվականին, առանձնանում է Բջնիում, հյուրընկալվելով Գրիգոր Մագիստրոսի կողմից<sup>4</sup>:

Ուշ ժամանակի պատմիչներն ու բանասերները Պետրոսի՝ Բջնիում գտնվելու ժամանակը նշում են 1035 թվականը, ուր նա մնացել է մեկ տարի և հինգ ամիս:

<sup>4</sup> Մեծիճ Վարդանայ Բարձրբերդցոյ «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 132:

Այդ նույն ժամանակներում Բջնիի վանքի առաջնորդ է հիշվում Հովհաննես եպիսկոպոսը, որը շատ հետաքրքիր մի արձանագրություն է փորագրել տալիս Կեչառիսի վանքի գլխավոր եկեղեցու հարավային պատի վրա: Կեչառիսի վանքը այդ ժամանակ հանդիսանում էր Պահլավունիների երկրորդ հոգևոր կենտրոնը. Վարաժնունիքում՝ Բջնիի վանքից հետո:

Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, Սմբատ-Հովհաննեսի թագավորության ժամանակ (1020—1041), զելուճների թագավորը արշավում է Հայաստանի վրա, գրավում Բջնի», ուր գտնվում էր հայոց սպարապետ Վասակը: Նա Բջնիի ամրոցի պաշտպանությունը հանձնարարում է իր որդի Գրիգորին, իսկ ինքը բանակի գլուխ անցած շարժվում է թշնամուն ընդառաջ: Ճակատամարտը տեղի է ունենում Սերկելի գյուղի մոտ, Քասախի աջ ձորաբերդի, ուր պատահաբար նետված քարից մահանում է Վասակը, «գոր յանգէտս սպանին ի Սերկելէ»<sup>5</sup>:

Ապա Ուռհայեցին, նկարագրելով Գագիկ թագավորի ժամանակ (1042—1045) պարսիկների հետ տեղի ունեցած կռիվները, տեղեկացնում է, որ Վասակ Պահլավունու որդի Գրիգորը, իր զորքերի գլուխ անցած, Հրազդանի ձորում, Բջնի մեծ ամրոցին մոտիկ, հարձակվում է պարսից զորքերի վրա, ջարդում նրանց, գեղի վերցնում թուրք իշխանին, իսկ կենդանի մնացածները փախչում են դեպի Պարսկաստան<sup>6</sup>:

Արիստակես Լաստիվերտացու վկայությամբ, Գրիգոր Մագիստրոսը Բջնիի ամրոցի բանալիները 1045 թվականին հանձնում է հունաց Կոստանդին Մոնոմախ կայսրին և դրանց փոխարեն ստանում մագիստրոսական աստիճան և մի շարք քաղաքներ ու գյուղեր՝ Միջագետքում և Միջագետքի զբոսությունը<sup>7</sup>: Այդ մասին հաղորդում է նաև Վարդան վարդապետը<sup>8</sup>:

Նույն Մատթեոս Ուռհայեցին տեղեկացնում է նաև, որ 1065 թվականին հայոց կաթողիկոս է օծվում Բջնեցի Վահրամ-Տեր Գրիգորիսը՝ Գրիգոր Մագիստրոսի որդին, Վասակի թուր<sup>9</sup>:

<sup>5</sup> Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», Վարդապատ, 1898 թ., էջ 11:

<sup>6</sup> Մխիթար Այրիվանցեցի, էջ 59:

<sup>7</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 88:

<sup>8</sup> Արիստակայ վարդապետի Լաստիվերտցոյ, «Պատմութիւն», Թիֆլիս, 1919 թ., էջ 61:

<sup>9</sup> «Հաւարձան պատմութեան» Վարդանայ վարդապետի, լուսարանեալ, Վենետիկ, 1862 թ., էջ 99:

<sup>10</sup> Մատթեոս Ուռհայեցի, էջ 155:



Բջնիի վանքը և Բջնի գյուղի մի

մասի ընդհանուր տեսարանը

Այդ նույնը հաղորդում է նաև Կիրակոս Գանձակեցի պատմիչը, ասելով, որ Տեր Խաչիկից հետո, 1065 թվականին, կաթողիկոս է օծվում Տեր Վահրամբ, վերանվանվելով Գրիգորիս, որը Գրիգոր Մաղիստրոսի որդին էր՝ Բջնի քաղաքից. կոչվում էր Իմաստասեր, հմուտ էր բերականության, կատարել է բազմաթիվ թարգմանություններ՝ հունարենից և ասորերենից<sup>11</sup>:

Սեաւ լեռան 1114 թվականի եկեղեցական երկրորդ համաժողովի որոշման համաձայն, ոչ ոք չէր կարող կաթողիկոս հաստատվել առանց Բջնիի, Հաղբատի, Տաթևի և Արտազի Թովմա առաքյալի վանքերի եպիսկոպոսների հավանության ու համաձայնության: Այդ հանգամանքը առավել մեծ շափով բարձրացնում է Բջնիի վանքի դերն ու հեղինակությունը Հայ Եկեղեցու զործերում: Դրան զուգընթաց, ընդարձակվում են նաև թեմի սահմանները ղեպի հարավ, ըստ որի Բջնիի վանքի առաջնորդը միաժամանակ համարվում էր առաջնորդ Դվնա կամ Այրարատա: Իսկ մատենագրական աղբյուրներում, ինչպես կտեսնենք հետո, Բջնիի կոչվում էր ամրոց, դղյակ, քաղաք, բերդաքաղաք. սրբազան և աստուա-

ծապատեալ արհեստիկոպոսն Տէր Յովհաննէս, որ ունէր զվերատեսութիւն այցեկականն դիտման քահանայականն դասու կատարողապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի»<sup>12</sup>: Ապա «Զտէր Մանուէլ՝ համբակ վերջին, յաջորդ Բրջնոյ ու Այրարատին»<sup>13</sup>: Մի ուրիշ տեղ՝ «Մանուէլ արքեպիսկոպոս Բրջնոյ և Արարատեան»<sup>14</sup>: Այնուհետև, «Ես Մատուր՝ ծառայ ծառայիցն Աստուծոյ, նախարար, վերակացու և առաջնորդ քաղաքիս Բջնոյ»<sup>15</sup>: «Ես Տէր Յոհաննէս արքեպիսկոպոս Բջնոյ և Արարատեան»<sup>16</sup>, և այլն և այլն:

Սեաւ լեռան երկրորդ ժողովից հետո, ոչ մի տեղեկություն չկա Բջնիի մասին, մինչև 1201 թվականը, երբ Զաքարյաններն այն ազատագրում են սելջուկներից: Այդ մասին հետևյալ կերպ է պատմում Վարդան վարդապետը. «Յաւուրս ժամանակաց այսոցիկ էին փառաւոր իշխանքն Զաքարէ և Իւանէ, որդիք

<sup>12</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950 թ., էջ 6:

<sup>13</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., Երևան, 1955 թ., էջ 51:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 421:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 422:

<sup>11</sup> «Պատմութիւն հայոց», արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս, 1909 թ., էջ 89:

Սարգսի... և զի արիագոյնք էին, յառաջեցին օր ըստ օրէ ի բարձ և ի պատիւ Եւ յաւուրս Թամարին առաւել փառաւորեցան, և ետ նոցա զԼօնէ, և ինքեանք քաջութեամբ իւրեանց Թափեցին ի Թուրքաց յովով բերդս և դաւառս ի սուղ ժամանակի... և ի վեց հարիւր լիսուն Թուին (1201) առին զԲջնի... բերդաքաղաքն»<sup>17</sup>։

Վարդան Բարձրբերդցին<sup>18</sup> և Ստեփանոս Օրբելյանը<sup>19</sup> նույնպէս տեղեկացնում են, որ Զաքարյանները սելջուկներից գրավեցին Բջնի բերդաքաղաքը, 1201 թվականին։

Այդ մասին հանգամանորեն խոսվում է նաև Հաղարծինի վանքի Ս. Գրիգոր եկեղեցու գավթի արևմտյան մուտքի շրջանակի վրա փորագրված հետևյալ արձանագրության մեջ. «Կամաւ ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակի է և արձան մշտնջենաւոր որդեաց մեծին Սարգսի, յազգէ Բագրատունեան՝ Իւանէի և Զաքարէի, յորժամ նախախնամութիւն Աստուծոյ էճաս յարարածս և ետ նաւարառին տիրել սեփական ժառանգութեան նախնեաց մերոց՝ ետ ի ձեռս մեր յառուջ անառիկ ղղեակն Անբերդ և զՅագաւորանիստ քաղաքն Անի և ալյա զամուրն Բջնի, զՄարանդ, [Օ]ձ[ը] և Գաւազանք ի Թարէժ, զԿարնոյ քաղաք մինչև հլաթ... [ և զԵ ]-րուան, զՊարտավ մինչև ի Բելուկան և զայլ քաղումս իւրեանց սահմանան զոր աւելորդ համարեցաք յիշատակել...»։

Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ, Զաքարն սպասալարի կողմից 1205 թվականին Լոռի քաղաքում հրավիրված ժողովին մասնակցում էր նաև Բջնիի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը։

Բջնիի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի ձախտակալ բարի վրա փորագրված արձանագրությունից իմացվում է, որ եկեղեցին վերանորոգվել է 1209 թվականին. «Թվ. ՈՄԸ. Յաշխարհակալութեան քաջաց և յաղթողաց՝ մեծ շահնշահաց Զաքարէի և Իւանէի, որդւոց Սարգսի, յեպիսկոպոսութեան Վրթանէսի, ես՝ մեղուցեալ ծառայ Աստուծոյ Վահանս... շինեցի զիշխանավանից մեծ եկեղեցին յանուն Սուրբ Աստուածածնին. և զայս Աստուածածնինս նորոգեցի սալով, որ ի բնէ շէր սալած, և հաստատեցին ի տարին Ե. աւր ժամ ի տանի Սուրբ Մննդեանն վասն փրկութեան հոգւոյ իմոյ. ով խափանէ զպատարազն՝ իմ մեղացն սլարտական է առաջի Քրիստոսի»։

<sup>17</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԺ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 138։

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 181։

<sup>19</sup> «Պատմություն նահանգին Սիսական», արարեալ Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910 թ., էջ 391։

Վարդան Բարձրբերդցի պատմիչը, նկարագրելով Խորեզմի շահ Զալալեղդինի՝ Պարսկաստանից Հայաստանի վրայով դեպի Վրաստան կատարած արշավանքները, նախ տեղեկացնում է նրա զորքերի և Զաքարյան իվանեի գլխավորությամբ հայ-վրացական միացյալ բանակի միջև 1225 թվականի աշնան սկզբներին Գառնի ավանի մոտ տեղի ունեցած՝ ձախտամարտի և իվանեի պարտության մասին, ապա թշնամու առաջխառնումը Հրազդան գետի հովտով դեպի հյուսիս և Բջնի գրավումը նույն տարվա աշնան կեսերին։

ԺԳ դարի կեսերին, հայոց Կոստանդին կաթողիկոսին գրած թղթին հեղինակակից էին Բջնիի եպիսկոպոսներ Վանականը և Գրիգորը<sup>20</sup>։ Այդ նույն Վանական և Գրիգոր եպիսկոպոսները, Զաքարյան Շահնշահի իշխանութեան ժամանակ, Կոստանդին կաթողիկոսի հրամանը՝ հոգևորական ձեռնադրելու կարգի մասին, փորագրել են տալիս Բջնիի վանքի հարավային պատի վրա, որը հետևյալն է. «Թվիս Հայոց Չ. (1251). Աղղմամբ և հրամանաւ Հոգւոյն Սրբոյ և կամաւ Կոստանդեայ կաթողիկոսի հաստատեցաք զխախտեալ կանոնս և եղաք աստ ծառայքս Քրիստոսի՝ Տէր Վանական և Տէր Գրիգոր, ողորմութեամբ նորա եպիսկոպոսք Բջնոյ... յիշխանութեան Մեծին Շահնշահի. զի յայսմհետէ մինչև ի կատարած շունի ոք առնել կաշառաք ձեռնադրութիւն վարդապետ ու երէց։ Կատարիչք հրամանացս աւրհնին յԱստուծոյ»։

Այդ նույն ժԳ դարի երրորդ քառորդի վերջերին, Սյունյաց միտրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի կողմից հայոց կաթողիկոս Գրիգոր Անավարդեցուն գրված դավանաբանական և կանոնական թուղթն ստորագրում է նաև Բջնիի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը<sup>21</sup>։

Վանքի հարավային պատի երեսի վրա փորագրված՝ 1303 և 1306 թվականները կրող արձանագրությունները ինքնին ասպացույց են այն բանի, որ ժԳ դարի սկզբներին շեն էր վանքը. «ՁՄԲ (1302). կամաւն ամենակալին Աստուծոյ ես Գրիգոր իշխան, որդի... Թոռն Գուփին...»։ «Շնորհաբ նախախնամող Սուրբ Հոգւոյն ես Քոչաքշեր և ամուսին իմ Խորիշահ միաբանեցաք Սուրբ Աստուածածնիս և սուրբ արդիւնք հայալ յընջից մերոց. եւ սպասաւորք սորա՝ Տէր Յովհաննէս և Տէր Սարգիս կարգեցին ի տարին Գ. աւր պատարազել զՔրիստոս ի տանի Մննդեան՝ Բ. Քոչաքշերիս առնեն և Բ. Խորիշահին. ամէն. ՉՄԵ (1306)»։

<sup>20</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 295։

<sup>21</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 461։

Գրանից որոշ ժամանակ անց, 1318 թվականին Եղվարդում գրված մի Ավետարանի հիշատակարանում Բջնին անվանվում է քաղաք<sup>22</sup>: Այդ հանգամանքը նույնպես մի կարեւոր սպացույց է այն բանի, որ այդ շրջանում Բջնին գտնվում էր շեն և բարգավաճ վիճակում:

Զարբայանների տիրապետության շրջանում Բջնին ընդհանրապես, թե՛ ավանը և թե՛ վանքը, գտնվելիս են եղել շեն, դարգացած ու բարգավաճ վիճակում: Այդ բանին որպես սպացույց կարող է ծառայել վանքի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Տուտովն անմահին Աստուծոյ, ևս՝ Զաբարէ, որդի Սահիպ-դիվանին և պարոն Խոշարին, թոռն Արարակ Աւագին՝ որդոյ Աթաբակ Իւանէի, վասն մեր երկար կենդանութեան և փրկութիւն հոգոյ իմոյ՝ ի վեր կալայ որ ի Բջնի այլ մարդոյ տէրութիւն չլինի. և թողի դամէն հարկ՝ դամիրահարկն, զհարսանհարկն, զկովայ համարն, զկալաթաղարն, զսայլահարկն, զմահկանէն, աւտարականն քան զգաղմէն այլ իրր չտա, յաղման շառնն, որ յայսմհետէ մինչև յաւիտեան հաստատուն կայցէ արձանս իմ. եթէ որ խափանել ջանայ՝ յիմոց կամ յիմ զաւակաց կամ յաւտարաց, իմ մեղացն պարտական է առաջի Աստուծոյ»:

Սակայն Բջնին միշտ չի մնացել շեն ու բարգավաճ վիճակում, այլ, ինչպիսի Հայաստանի բազմաթիվ բնակավայրերը, ենթարկվել է մոնղոլների դաժան ասպատակություններին՝ ավերվել, կոտորվել և նորից վերաշինվել ու վերահաստատվել է: Այդ մասին որոշակի հասկացողություն է տալիս վանքի վրա փորագրված մի արձանագրություն. «Թվ. Պէ (1358). Ի զարմէ երկուց հարազատաց՝ քաջաց և յաղթողաց Ամիրսպասալար Զաբարէի և Աթաբակ Իւանէի, ևս, Աթաբակ Շահնշահ, որդի Աթաբակ Զաղայի... Աստուած խղճաց մեզ ու մեր հայրենիքս՝ զԲջնու բերդս ի մեր ձեռս բերեաց. վասն փրկութեան հոգւոյ և երկար կենդանութեան մերոյ կրկին նորոգեցաք զկեկեղեցիս և զԲունիաթ արձանս վերստին հաստատեցաք զվիճակի, զվանք, զգեօղ, զսարի, զգաշտի հայրենիք... ու շինական, որ ծառայէր զինք են... զԱստուածածնա ծառայութեան ազատ և թարխան արարին ի հարկէ և ի ծառայութենէ: Տէր Վանական և սպասաւորքս խոստացան մեզ Յակոբայ տանին գիշերապաշտան առնեն: Ով որ զմեր հաստատած արձանս խափանել ջանայ, դատի Աստուծոյ և մեր մեղացն պարտական եղիցի»:

Սրանից շուրջ 28 տարի հետո, 1386 թվականին, Բջնիի վրա է հարձակվում Լանկ-Քամուրը, ավերում ու հրդեհում է այն, բնակիչների մեծ մասին կոտորում, մի մասին էլ գերի տանում. այդ ժամանակ սպանվում է նաև վանքի առաջնորդ Վանական վարդապետը:

Այդ մասին Գրիգոր վարդապետ Խլաթեցու (Սեբեհց) ձեռագիր «Գանձարան»-ի 1387 թվականին գրված չափածո հիշատակարանում կարդում ենք.

«... Մինչև ի Կարս արշաւեցին,  
Ջերկիրս ամէն շալ արաբին...  
... Զամուր տեղիս յաւար առին  
Եւ շատ նճիրս գործեցին,  
Յորոց և մի էր և Բըջնին,  
Որ էր Արսո երկուց պետին,  
Զոր առին և Բանդեցին,  
Չեպիսկոպոս սպանեցին»<sup>23</sup>:

Լանկ-Քամուրի կողմից Բջնին գրավելու և Վանականին սպանելու մասին պատմում է Սամվել Անեցին. «Ի սոյն ամի ՊԼԵ. (1386) թվին Լանկթամուրն եկն ի Թավրիզ և ի Նախշուան՝ և անտի ի միում աւուր կալաւ մինչև ի Կարբի և Բջնի, ի Գառնի՝ Սուրմարի, ի Կողբ. և անտի գնաց ի Վրացտուն՝ և արար զազայ զՏփխիս քաղաք»<sup>24</sup>:

Իսկ Թովմա Մեծոփեցին ասում է, որ Վանականը սպանվեց «յառնույ Բըջնոյ ի թագաւորէն Աղախու թաթարաց»<sup>25</sup>:

Ժժ դարի սկզբներին, Բջնիի առաջնորդ է հիշվում Մանվել արքայիսկոպոսը, որի գրած Ավետարանը ստանում է երևանցի Հակոբ անունով մեկը և նվիրում Երևանի «Ճրկութեանի» եկեղեցուն: Այդ ձեռագրի հիշատակարանում Մանվելը միաժամանակ հիշվում է որպես առաջնորդ Այրարատա: Մեք ենք բերում այդ հիշատակարանի վերջին՝ համապատասխան մասը.

«... Զտէր Մանուէլ՝ համբակ վերջին,  
Յաջորդ Բըջնոյ ու Այրարատին,

<sup>22</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 141:

<sup>23</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 275: (Բոլոր պատմական ու հիշատակագրական աղբյուրներում Լանկ-Քամուրի՝ Բջնիի վրա կատարած արշավանքը ցույց է տրվում 1386 թվականին, մինչդեռ այդ հիշատակարանում նշվում է 1387 թվականը):

<sup>24</sup> Սամուէլի Բանեցու «Շաւարմունք ի գրոց պատմագրաց», Վարդապատ, 1893 թ., էջ 171:

<sup>25</sup> Թովմա վարդապետի Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Քամուրայ և յաջորդաց իւրոց», Փարիզ, 1860 թ., էջ 161:

Որ ծրբեցի ծայրոք մասին  
Հիշատակաց գիծս վերջին...»<sup>26</sup>:

Վերոհիշյալ Մանվել արքեպիսկոպոսի մասին, որպես Բջնիի և Այրարատի առաջնորդի, հիշվում է նաև 1414 թվականին Օշականում գրված մի ճաշոցի հիշատակարանում<sup>27</sup>:

Նշված հիշատակարաններից պարզ երևում է, որ Բջնին, որն այնքան տուժել էր Լանկ-Թամուրի արշավանքների հետևանքով, ավերվել, քայքայվել էր ժժ դարի սկզբներին, նորից վերականգնվել ու շենացել էր և ձեռք բերել իր հզորությունն ու հռչակը՝ պահպանելով «առաջնորդ Բջնոյ և Այրարատայ» իր նախկին տիտղոսը: Այդ առումով առանձնապես ուշագրավ ու հետաքրքիր է 1432 թվականին Բջնիում գրված մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանը. «... Ի տոյն ժամանակի, յպիսկոպոսութեան արհիական Աթոռոյս Բըջնոյ Տէր Յովհանէսի, ես Մատուր՝ ժառայ ժառայիցն Աստուծոյ, նախարար, վերակացու և առաջնորդ քաղաքիս Բջնոյ, և ամուսին իմ Սարիբէկ՝ հասեալ ի ժամ ծերութեան, ակն ունելով ելից ի կենցաղոյս՝ ջերմեռանդ սիրով ստացաք զՍուրբ Աւետարանս՝ մեզ և նախնեաց մերոց յիշատակ յաւիտենական: Եւ ընծայեքաք զսա մեծ սիրով արհիական քաթոռոյս Բջնոյ և երկնահանգէտ մարտ լուսոյ Սուրբ Աստուածածնիս, յիշատակ հոգաց մերոց»<sup>28</sup>:

Մեզ բերված հիշատակարանում բնորոշ է այն, որ այդ ժամանակ Բջնին շարունակում է կոչվել քաղաք: Իսկ առավել ուշագրավն այն է, որ այդ քաղաքի կառավարիչը կոչվում է նախարար, վերակացու և առաջնորդ քաղաքի: Բացի այդ, հիշատակարանում հիշված Տեր Հովհաննեսը մի ուրիշ ձեռագիր Ավետարանի հիշատակարանում նշվում է որպես «արքեպիսկոպոս Բջնոյ և Արարատայ». «Ես Տէր Յովհանէս արքեպիսկոպոս Բջնոյ և Արարատեան, որ զգիրս զբեցի վկայ եմ, Աստուած շնորհաւոր անէ, ամէն»<sup>29</sup>:

Հովհաննես արքեպիսկոպոսը 1441 թվականին մասնակցում էր նաև Կիրակոս կաթողիկոս Վիրապեցու ընտրությանը, ինչպես այդ մասին տեղեկացնում է Թովմա Մեծոփեցի պատմիչը<sup>30</sup>:

Բջնիի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է 1478 թվականին, ըստ որի Բջնիի

<sup>26</sup> Լ. Ս. Խաչիկյան, «Ժժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 51:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>28</sup> Լ. Ս. Խաչիկյան, «Ժժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 421:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 422:

<sup>30</sup> «Թովմա Մեծոփեցու հիշատակարանը», Թիֆլիս, 1892 թ., էջ 52:

վանքի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսը գրում է մի Ավետարան և նվիրում պատրոն վարդապետին (հավանական է, որ վերջինս Բջնիի կառավարիչը եղած լինի) և նրա ամուսին Մելիք-Խաթունին:

Այդ հիշատակարանի մեջ Բջնիի եպիսկոպոսն այլևս չի հիշատակվում որպես առաջնորդ նաև Այրարատա: Հավանական է, որ ժժ դարի երկրորդ կեսում Բջնին, որպես կրոնական նշանավոր կենտրոն, զգալի չափով թուլացել էր:

Դրանից հետո, մինչև ժժ դարի սկիզբները, ոչ մի տեղեկություն չկա Բջնիի մասին: Առաքել Դավրիժեցին պարսից Շահարաս թագավորի արշավանքների մասին խոսելիս հիշատակում է նաև Նիզ գավառը, որի կազմի մեջ էր գտնվում այդ ժամանակ Բջնին: Ապա սրտի խոր կսկիծով ու դառնություններ պատմելով տեղում մնացածների աղքատ, տառապյալ, սովալյուկ վիճակը, Բջնիի մասին հետևյալ սրտաճմիրկ դեպքն է պատմում. «Եւ ի գիւղն՝ որք Բջնի ասեն, ճանապարհորդք ոմանք՝ որք ընդ այն անցանէին, տեսանէին զի ծուխ ելանէր ի տանէ միոյս»<sup>31</sup>:

Թե ի՞նչ վիճակի մեջ է-եղել Բջնիի վանքը այդ ժամանակաշրջանում, ստույգ հայտնի չէ. սակայն վերը մեջ բերված տեղեկություններից հասկանալի է դառնում, որ վանքը նույնպես պետք է գտնվելիս լիներ քայքայված ու լքված վիճակում:

1610—1624 թվականների ժամանակաշրջանում, Բջնիի վանքի առաջնորդ է հիշվում Մանվել արքեպիսկոպոսը, որը հայտնի է որպես երաժիշտ: Հավանական է, որ հենց այդ Մանվելի առաջնորդության ժամանակ, կրկին վերահաստատված լինի վանքը:

Բջնիի վանքը ավելի զարգանում ու ընդարձակվում է Փիլիպոս եպիսկոպոսի առաջնորդության ժամանակ՝ 1631 թվականից, ըստ որի վանքի միաբանության անդամների թիվը նա հասցնում է մինչև 30-ի: Իսկ 1643 թվականին, Փիլիպոս կաթողիկոսի հրամանով, նա վերանորոգել է տալիս վանքի տանիքը, որի մասին հանգամանորսն պատմում է մի ձեռագրի հետևյալ հիշատակարանը. «Ի հռչակաւոր Սուրբ Աթոռոյս Տիրամօր Աստուածածնիս սպասաւոր, և տեսուչ ժողովրդեան վիճակի սորին. և իմ եկեալ աստ տեսի զանշխունթիւն և զանքնակութիւն Սուրբ Աթոռոյս. միշտ այրեցեալ և խորովէր լեարդ և սիրտ իմ. ապա մեծաւ յուսով ապաւինելով յողորմութիւն ամենակալին... սկսեցաք միաբանս ժողովել ըստ չափու և ըստ արժանաւորութեան տեղոյս մեծի, թուով իբրև երեսուն, աւելի և ոչ պակաս: Յետ որոյ կարողու-

<sup>31</sup> «Պատմութիւն» Առաջին վարդապետի Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1884 թ., էջ 66:

թեամբ և կամակցութեամբ Տեառն արարաբ օր աուր շինութիւնք՝ ըստ մերում ուժոյ ի փառս Ս. Աստուածածնին: Նախ և առաջ զտանիս եկեղեցւոյն, որ յոյժ քակեալ քանդեալ ապականեալ և աւերեալ էր ի բազում ժամանակաց, մինչ զի սակաւ ինչ անձրեւոյ՝ դամենայն ի ներքս դառնայր հուասար, և կաթիլ մի ոչ մնայր արտաքս. և մեք բազում աշխատութեամբ շինեցաք զզուրիս տաճարին. նաև ժամատունն ևս աւերակ և փակ եղեալ, զորմունս և զզուրիս փայտաշէն արարեալ հաստատեցաք: Ապա յետ այսորիկ սկսեալ շինեցաք զՔիթհանքն և զՋրաղացն, և այլ ամենայն հոգեւոր և մարմնաւոր պակասութիւն՝ լցաք ըստ մերում շափի»<sup>32</sup>:

Առաքել Դավրիժեցիին նույնպէս տեղեկացնում է Բջնիի վանքի առաջնորդ Փիլիպոս եպիսկոպոսի կողմից վանքի Ս. Աստվածածին եկեղեցու տանիքի վերանորոգման մասին, ավելացնելով, որ Փիլիպոս եպիսկոպոսին հաջորդող Մովսես վարդապետը կառուցում է վանքի պարիսպը<sup>33</sup>:

1673 թվականի մարտի 6-ին Բջնի է այցելում ֆրանսիացի ճանապարհորդ Շարդեն և օթևանում է վանքում: Իսկ 1700 թվականի հուլիսի 31-ին՝ բուսարան Տուռնրֆորտը, որը վանքը տեսնում է շեն վիճակում. նա յայտնող նկատում է ընդարձակ տարածութեան վրա ավերակներ, որից այն ենթադրութիւնն է անում, թե այդտեղ գոյութիւն է ունեցել քաղաք:

Թե ն'րբ է դադարել Բջնին եպիսկոպոսանիստ վայր լինելուց, ստույգ հայտնի չէ. Սիմեոն կաթողիկոս Երևանեցու վկայութեամբ, Բջնիի թեմբ ժլ դարի սկզբներին կազմված էր հիսունի շափ գյուղերից՝ Կոտայքի ու Վարաժնունիքի կամ Մաղկունյաց գավառներից: Նույն Սիմեոն կաթողիկոսի վկայութեամբ, Բջնիի վանքը 1656—1744 թվականների ժամանակամիջոցում, զանազան վայրերում ձեռք է բերում՝ նվիրաբերութեամբ կամ փողով գնելով, բազմաթիվ կալվածներ՝ այգիների, պարտեզներ, վարելահողեր, խոտհարքեր, տներ, ջրաղացներ, ձիթհաններ և այլն<sup>34</sup>:

Բջնիի վանքը ժլ դարի կեսերից աստիճանաբար թուլանում է և, հավանաբար, նույն դարի երրորդ քառորդից դադարում է որպէս մենաստան գոյութիւն ունենալուց և մնում է լքված ու ամայի վիճակում: Այդ առթիվ ժամանակակիցները գրում են.

«Մագիստրոսի վանք՝ որ Բջնի անուանի, Երևանայ սա ևս ճիսիսն անկանի».

32 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 275:  
 33 Առաքել Դավրիժեցի, էջ 271:  
 34 Սիմեոն կաթողիկոս Երևանեցի, «Ջամբա», Վաղարշապատ, 1873 թ., էջ 284—286:

էր սա երբեմն պայծառ Աթոռ նագելի, Աւաղ, ներկայս բուք բնակից ի միջի...»<sup>35</sup>:

Բջնիի վանքը որչափով հռչակված է եղել որպէս կրոնական խոշոր կենտրոն, նույնքան էլ նշանավոր է եղել իր բարձրագույն հոգեւոր դպրոցով: Այնտեղ ուսուցել են ժամանակի այնպիսի գիտական կարիւրաւում դեմքեր, ինչպիսին Գրիգոր Մագիստրոսը, որի անունով շատերը այդ դպրոցը կոչել են «Մագիստրոսի ձեմարան». ինչպէս և Մագիստրոսի որդի Վահրամը, որը 1065 թվականին կաթողիկոս ձեռնադրվեց Գրիգորիս անունով: Հայտնի է եղել որպէս իմաստասեր, հմուտ քերականական արվեստին, կատարել է բազում թարգմանութիւններ՝ հունարենից ու ասորերենից, ինչպէս այդ մասին տեղեկացնում է Կիրակոս Գանձակեցի պատմիչը<sup>36</sup>:

Դպրոցի ուսուցիչներից նշանավոր է եղել նաև Հովհաննես արքեպիսկոպոսը, որին Մկրտիչ գրիչը համարում է ժամանակի հայտնի գիտնական, փիլիսոփա և ուսուցչապետ Ծայլի հետ. այդ առթիվ ահա թե նա ինչ է գրում «Մեկնութիւն Սաղմոսաց Ներսիսի Լամբրոնացւոյ» իր ձեռագիր աշխատութեան հիշատակարանում, գրված 1302 թվականին. «... Քաջահանձար փիլիսոփայն և բանիրուն ճարտարն ... աստուածիմաստ և տիեզերալոյս ըրառնապետն Ծայլի, որ ի նուազեալ ժամանակիս առաքինասէր վարուք պայծառացեալ և աստուածաշունչ կտակարանացն իմաստիւք գերալրացեալ իբրև զարեգակն փայլէր յաշխարհի, որ ի վերայ ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն կատարի առաքինութիւն, և զուսուցչապետութեանն ևս զգործ ի կիր արկեալ ընդ առնեն լծակցելով և զամենայն եկեալսն առ ինքն յաւժարութեամբ և ձեռնտու աստիճանակութեամբ Հոգւոյն շնորհաւք ծաղկեալ, սրբազան և աստուածապատեալ արհնպիսկոպոսն Տէր Յովհաննէս, որ ունէր զվերատեսութիւն այցելականն դիտման քահայանայականն դասու կատարողապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի, որ է ամենայն առաքինութեամբ դարդարեալ»<sup>37</sup>:

Արժանահիշատակ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը տեղեկացնում է, որ ինքը 1861 թվականին Ալեքսանդրոպոլի (այժմ Լենինական) Ս. Աստվածածին եկեղեցում տեսել է մի ձեռագիր Ավետարան, որը գրել

35 Ղ. Փիղալամյան, «Ժամանակագրութիւն ի Մայր Աթոռն Արարատեան», Կոստանդնուպոլիս, 1871 թ., էջ 89:  
 36 Կիրակոս Գանձակեցի, էջ 89:  
 37 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 5—6:

են Հովսեփի և Հովհաննես քահանաները նկէ (988) թվականին Բջնիի վանքում, իսկ հետագայում՝ 1646 թվականին այն կազմել է տվել վանքի առաջնորդ Փիլիպոս արքեպիսկոպոսը<sup>35</sup>: (նկէ թվականը հավանաբար գրչի վրիպում լինի, որովհետև Բջնիի վանքը հիմնադրվել է 1031 թվականին):

Այնուհետև հայտնի է եղել Դավիթ Բջնեցին, որը ճանապարհորդություն կատարելով դեպի Երուսաղեմ և Հռոմ, ճանապարհին կանգ է առնում Ակների վանքում, ուր արտագրում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը<sup>36</sup>:

Բջնիի վանքի հոգևոր դպրոցի գրիչներից և ուսուցիչներից հիշատակելի են նաև Մանվել արքեպիսկոպոսը՝ ԺԾ դարի սկիզբներին, որի գրած Ավետարաններից մեկի հիշատակարանը մեջ բերինք վերևում: Այդ Մանվել արքեպիսկոպոսի և մյուս Հովհաննես գրչի մասին հիշատակվում է նաև Օշականում գրված մի Ճաշոցի հիշատակարանում. «Յիշեսջիբ ի Քրիստոս զՏէր Մանուէլն արհեպիսկոպոս Բջնոյ և Արարատեան, և զՏէր Յովհաննէս, որք բազում աշխատութեամբ աւգտակարք եղեն աստուածաշունչ տառիս...: Աւարտեցաւ զիրքս աստուածաշունչ ի թուրքերութեանս

Հայոց ՊԿԳ (1414), ի գեղաւանս յԱւշական...»<sup>40</sup>:

Ապա Գրիգոր եպիսկոպոսը, ինչպես և Տեր Սարգիսը, Տեր Հորդանան, Ստեփանոս քահանան, Մովսես վարդապետը և ուրիշ շատ գրիչներ և ուսուցիչներ:

Բջնիի վանքի հոգևոր դպրոցի ուսուցիչներից հատկապես հիշատակութեան արժանի է դարձնում Տովսես վարդապետը, որը հետո դարձավ եպիսկոպոս և որի ջանքերի շնորհիվ այնքան աճեց, զարգացավ ու բարգավաճեց Բջնիի վանքը, ինչպես այդ պարզ երևում է վերը մեջ բերված հիշատակարանից:

Այդ Մովսեսի մասին նրա աշակերտ Ստեփանոս քահանան նույն ձևագրի հիշատակարանում հետևյալն է գրում. «... Մեծ, քաջ հոնտոր և անյաղթ փիլիսոփայ, հոգիացեալ ըրաբունապետ և արքեպիսկոպոս Բջնոյ մեծ նահանգի Արարատեանս երկրի»<sup>41</sup>:

Ապա հիշատակելի է Սիմեոն ըրաբունին, որը թաղված է վանքին կից գերեզմանատանը և որի տապանաքարի վրա կարդացվում է. «Այս դամբարան սրբոյ մարմնոյ Սիմէօնի քաջ ըրաբունոյ... Հազար իննսուն եօթնեակ (1648) թուոյս»:


(Շարունակելի)

<sup>35</sup> Մեսրոպ արևեպիսկոպոս Սմբատյանց, «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, որ այժմ Նոր-Բայազետ գավառ», Վաղարշապատ, 1896 թ., էջ 321:

<sup>36</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 187:

<sup>40</sup> Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 162:

<sup>41</sup> Զ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 275:



### ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐԸ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Անմար արեգակն, երկրորդ լուսաւորին»․ այսպէս է անվանում միջնադարի ամենախոշոր մտածողներից մեկին՝ Գրիգոր Տաթևացուն (1346—1410 թ. թ.) ժամանակի պատմիչը՝ Քովմա Մեծոփեցին:

Շատ հարուստ է Գրիգոր Տաթևացու թողած գրական ժառանգութիւնը: Այսօր հիացմունք է պատճառում նրա գլուխ գործոցը՝ հայտնի «Գիրք հարցմանց»-ը: Այս մեծածավալ աշխատութիւնը իրավամբ համարվում է հայ միջնադարի հարուստ և բազմաբովանդակ հանրագիտարանը: Այդ գրքով հնում շատ շատերն են իմաստասիրութիւն սովորել, իսկ Հայաստանի ամենածանր օրերին, այն եղել է Հայ Եկեղեցու դավանաբանական անկախութիւնը, ուստի և հայ ժողովրդի ազգային ինքնութիւնը օտարացումից պաշտպանող զորավոր վահան:

Հենց սրանով էլ հետաքրքիր է, թե ե՞րբ և ո՞վ է առաջինը ձեռնարկել Տաթևացու այդ մեծածավալ գրքի հրատարակութեանը:

Վերջին ժամանակներս Գրիգոր Տաթևացու իմաստասիրութեան և հատկապէս «Գիրք հարցմանց»-ի գնահատման հարցով լրջորեն զբաղվում են մեր պատմաբանները, փիլիսոփաներն ու բանասերները: Եվ բոլոր այն աշխատութիւններում, ուր քննվում է «Գիրք հարցմանց»-ը, խոսք է լինում միայն նրա 1729 թվականի հրատարակութեան մասին, որը և համարվում է այդ ծավալուն գրքի առաջին ու միակ տպագրութիւնը<sup>1</sup>:

Մատենագիտական աշխատութիւններում նույնպէս «Գիրք հարցմանց»-ի առաջին և վերջին հրատարակութիւնը համարվում է 1728 թվականին<sup>2</sup>: Մինչդեռ իրականում «Գիրք հարցմանց»-ի այդ հրատարակութիւնը ո՛չ միայն է, ո՛չ առաջինը:

1729 թվականի հրատարակութիւնը կատարվել է Պոլսում, Աստվածատուր դպրի տպարանի մեջ: Գիրքը բաղկացած է 808 երկսյուն էջերից: Ունի մեծ հիշատակարան, ուր ուշադրութիւն է գրավում հետևյալ տեղեկութիւնը. «Եւ այս ինչ յայտ լիցի սիրելեացդ մերոց: Զի ի թուին Հայոց ՌՃՀ (1170=1721) եկն նուիրակ Սրբոյ էջմիածնի ի Կոստանդնուպօլիս՝ գիտնական և բարեկրօն մեծ վարդապետն Պետրոս աստուածաբան Աստապատցի: Եւ ըստ բարեսէր բարուց իւրոց ցանկացաւ յոյժ ըղձանօք տպել զսուրբ մատեանս զայս ի յիշատակ բարի հոգոյ իւրոյ: Որ և սկսեալ ըստ իւրոցն փափագանաց, էհաս մինչ ի բանի մի ինչ տետր: Եւ ապա յոր և իցէ պատճառէ խափան եղեալ գործոյն՝ մնաց այնպէս անկատար: Ապա յետ սակաւ ժամանակի, կոչեցաւ հասարակաց ի կոչումէն համայնից, վճարելով զկենցաղոյս կեանս:

Որոյ պատուական մահն եղև ի նոյն Սուրբ Գահն էջմիածին ի թւին ՌՃՀԸ (1178=1729): Յետ որոյ փոքր ինչ ևս անցելոյ ի վերայ, խորհուրդ բարի ի միտ արկեալ արևելցի բարեպաշտօն մահտեսի պարոն Շահ Նազարն

<sup>2</sup> Հ. Գ. Զարբանեայան, «Հայկական մատենագիտութիւն», էջ 145—146, Հ. Ա. Դազիկյան, «Հայկական նոր մատենագիտութիւն», սյունակ 501—504, Գ. Լեւնյան, «Հայ գիրքը և տպագրութեան արվեստը», Երևան, 1958, էջ 133—134:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Մ. Արեղյան, «Հայոց հին գրականութեան պատմութիւն», գիրք 2, Երևան, 1946, էջ 360 և Ս. Արեշատյան, «Философские взгляды Григора Татеваци», Ереван, 1957, стр. 32, 174.



«Քիրք հարցմանց»-ի առաջին տպագրության (1720 թ.) անվանաթերթը

և բիզանդացի խօսա Գանիէլի որդի տիրացու Մովսէսն, դանկացան տպել և ի կատար բերել զմնացեալն սորին: Բայց տպուածն առաջին ցրիւ և պակաս մնալով, նորապէս սկսեալ ետուն տպել զամենայն կարողութեամբ ողորմութեան Աստուծոյ: Որ և աւարտումն տպեցման սորին եղև ի թուին ՌՃԶԹ (1729) ի մայիսի Ա:

Ուրեմն «Քիրք հարցմանց»-ի առաջին հրատարակությանը ձեռնարկել է էջմիածնի նվիրակը: Սա արդեն ինքնըստինքյան առանձին հետաքրքրություն ունի, թեև հիշենք այն ժամանակներում տեղի ունեցող իրադարձությունները՝ կապված լատինադավան ուժերի շատ զգալի աշխուժացման հետ<sup>3</sup>, և թե ի՞նչ դեր կարող էր կատարել այն օրերին հայերի դավանափոխության դեմ ուղղված մի նշանավոր գիրք:

«Քիրք հարցմանց»-ի Աստապատցու տպագրության մասին 1729-ի հիշատակարանում ասված «...էհաս քանի մի ինչ տետր» արտահայտությունը մտածել պետք է տար, որ կարող էին ինչ-որ տեղ պահպանված լինել գրքի այդ առաջին տպագրության թերթերից:

Այդ հարցով զբաղվել է Բարզեն վարդապետ Կյուլեսերյանը: Նկատելով, որ «Քիրք

հարցմանց»-ի 1729 թվականի տպագրության մեջ հանված են Տաթևացու աշխատության այն հատվածները, որոնք վերաբերում են իսլամին, այն է «Ընդդէմ այլազգեաց» (կամ «Ընդդէմ տաճկաց») մասը, Կյուլեսերյանն սկսեց «Քիրք հարցմանց»-ի նորանոր ձևազրքեր զննել և Երուսաղեմի Ս. Հակոբ վանքի մատենադարանում ձեռագիր-տպագիր մի խառն ժողովածուի մեջ գտալ Պետրոս Աստապատցու հրատարակությունից մի շարք թերթեր<sup>4</sup>: Այդ թերթերը Կյուլեսերյանը նկատարարել է և նրանց պարունակությունը համեմատել գրքի 1729 թվականի հրատարակության նույն հատվածների հետ: Կյուլեսերյանի նկատարությունից երևում է, որ ժողովածուի մեջ եղածը «Քիրք հարցմանց»-ի հատորն է՝ Ա-ից մինչև ԺԲ մամուլները<sup>5</sup>: Ըստ որում այդտեղ պակասել է Ը մամուլը<sup>6</sup>: Կյուլեսերյանի ձեռքի տակ եղած ժողովածուի մեջ չի եղել գրքի սկիզբը՝ անվանաթերթը, առաջաբանը և առաջին գլուխը, որոնց մասին նա որևէ բան չի ասում:

1963 թվականին Մաշտոցի անվան Մատենադարանը ձեռք բերեց Ալմա-Աթաից բերված մի գիրք, որի մի մասը մագաղաթյա Աստվածաշնչի (ԺԵ դ.) 18 թերթերից էր բաղկացած<sup>7</sup>, իսկ մյուս մասն ուներ այսպիսի տիտղոսաթերթ. «Սուրբ գիրքս հարցմանց Երիցս Երանայ Սուրբ Հօրն մերոյ Գրիգորի Տաթևացուն: Տպագրեցեալ օգնականութեամբ Սրբոյն Թաղէտսի Առաքելուն, և մեր Լուսաւորչին: Ի հարկեցուցիչ հրամանաց Տեառն Աստուածատրոյ Ամենայն Հայոց Սրբազան Կաթողիկոսի, և Պատրիարքի Մեծի և Տիեզերածաւալ Եկեղեցւոյն Քրիստոսի Սուրբ էջմիածնի: Եւ ՚ի Մետրալոյալութեան Տնօրինակատար Քաղաքին Երուսաղեմի Սրբոյ Աթոռոյն Յակոբայ. Տեառն Գրիգորի Սրբակենցաղ վարդապետի: Իսկ ՚ի յԱռաջնորդութեան քաղաքիս Կոստանդնուպոլսոյ Յօհաննէս Աստուածաբան Վարդապետի: Յամի մարդեղութեան Տեառն մերոյ ՌէճԻ: Իսկ ըստ Հայոց թրին ՌՃԿԹ: Ի տպարանի Գրիգոր դպրի Մարտարանեցոյն»:

Հասկանալի է, որ սա «Քիրք հարցմանց»-ի առաջին, այսինքն Պետրոս Աստապատցու հրատարակության անվանաթերթն է: Նույնի Ձ էջում գտնում ենք էջմիածնի նվիրակի ոտանավոր-հիշատակարանը.

<sup>4</sup> Բարզեն վարդապետ Կյուլեսերյան, «Ժամը հայ մատենագրության մեջ», Վիեննա, 1930, էջ 1—25:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 10 175 ձեռագիրը:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, Մ. արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգայնագրություն» թ, 1914, էջ 2803—2805, 2828—2837:

Անարժան և վատ ծառայւ Քրիստոսի,  
Պետրոս վարդապետս Աստապատցի,  
Որ և գոյ նրկիրակ Կոստան շնուպօլսի,  
Նստու տպել ըզսուրբ գիրքս ցանկալի:  
Յիշատակ ինձ և իմոցս ամենայնի,  
Աղաչեմ ըզձեզ ասել Աստուած ողորմի,  
Ընդ որ Հայր մեր յերկինս և սուրբ եղիցի,  
Զի և ձեզ յիշեցեալ յաղօթից մասն լիցի:

Անվանաթերթից և այս ոտանավորից պարզ է դանձում, որ գիրքը իրոք տպագրութիւն է տպել էջմիածնի նվիրակ Պետրոս Աստապատցին («Նստու տպել ըզսուրբ գիրքս») և այն էլ Աստուածատուր (Համադանցլ) կարողիկոսի հատուկ հրամանով («Ք հարկեցուցի հրամանաց Տեառն Աստուածատրոյ Ամենայն Հայոց Կաթողիկոսի»): Շատ հավանական է, որ Պետրոս Աստապատցու Պոլիս գալու բուն կամ հիմնական նպատակը եղել է Հայ Եկեղեցու դավանանքի պաշտպանութիւնը նվիրված այս նշանավոր երկի հրատարակութիւնը<sup>8</sup>:

«Գիրք հարցմանց»-ի մեր ձեռքի տակ եղած այս օրինակը<sup>9</sup> բաղկացած է երկու մասից. առաջին մամուլը առանձին էջակալութեամբ (ուժ էջ)<sup>10</sup> ընդգրկում է տիտղոսաթերթը, առաջաբանը («Առաջաբանութիւն Սուրբ Գրոցս Հարցմանց»), գրքի բովանդակութիւնը («Այս ինչ գլխաւոր բանք բոլոր Սուրբ Գրոցս Հարցմանց»), Աստապատցու հիշատակարանը և երկու պատկեր:

Այնուհետև նորից գալիս է Ա համարն ունեցող մամուլ և նոր էջակալութիւն, որ հասնում է մինչև 96-րդ էջը և վերջին մամուլի համարն է ԺԲ: Այս մամուլի առաջին էջից սկսվում է «Գիրք հարցմանց»-ի երկրորդ հատորը:

<sup>8</sup> 1729 թվականի հրատարակութիւն հիշատակարանի մեջ եղած 1721-ը, որն իրը Պետրոս Աստապատցու Պոլիս գալու տարին է, սխալ թիւ է. հրատարակիչը, ըստ երևութիւն, ձեռքի տակ չի ունեցել գրքի առաջին տպագրութեան անվանաթերթը և թվականը գրել է հիշողութեամբ: Վերը բերված անվանաթերթին երկու անգամ տրված 1720 թվականը և Աստապատցու ոտանավորի «Նստու տպել» որոշակի արտահայտութիւնը ցույց են տալիս, որ նվիրակը Պոլիս է եկել 1720-ին կամ ոչ ուշ քան այդ թվականը: Ուշագրութիւն է գրավում նաև այն, որ Պետրոս Աստապատցին Պոլիս գալով, անմիջապես ձեռնամուխ է եղել «Գիրք հարցմանց»-ի տպագրութեան գործին:

<sup>9</sup> Երբ այս հոդվածն արդեն գրված էր, պարզվեց, որ էջմիածնի Մայր Աթոռի գրադարանը վերջերս ձեռք է բերել «Գիրք հարցմանց»-ի այս առաջին անավարտ և խիստ հազվագյուտ հրատարակութեան երկու օրինակը, նման Մատենադարանի ունեցածին:

<sup>10</sup> Գիրքը բառածալ է:



Պետրոս Աստապատցու հիշատակարանը «Գիրք հարցմանց»-ի առաջին տպագրութեան մեջ (էջ 6)

Ահա «Գիրք հարցմանց»-ի առաջին տպագրութեան միայն այս մասն է եղել Կյուլեհեբլյանի ձեռքին, այն էլ առանց Ը մամուլի:

Միևնույն գրքի սկզբի մասի և երկրորդ հատորի այս առանձին էջակալումն ու առանձին մամուլանշումը մտածել է տալիս այն մասին, որ նրանց միջև պետք է եղած լինի նաև իր առանձին էջակալութեամբ ու մամուլանշումը մի ուրիշ մաս՝ առաջին հատորն ընդգրկող, որը, նկատի ունենալով այդ գլխի ծավալը (ըստ ձեռագրերի) այստեղ կարող էր բաղկացած լինել շուրջ 40 էջից:

«Գիրք հարցմանց»-ի առաջին գլխի մեջ է վերոհիշյալ «Ընդդէմ այլազգեաց» կամ «Ընդդէմ տաճկաց» հատվածը, ուր քրիստոնեութեան և Հայ Եկեղեցու տեսանկյունից վերլուծվում է մահմեդականութիւնը: Ասացինք, որ «Գիրք հարցմանց»-ի 1728-ի տպագրութեան մեջ այդ հատվածը չկա: Սակայն ուշագրութիւն է գրավում, որ այդ հրատարակութեան մեջ գրքի առաջին գլուխը գետեղված է, բայց այնտեղից հանված է «Ընդդէմ այլազգեաց»-ը, որը բոլորովին չի հիշատակվում նաև գրքի ցանկերի մեջ: Մինչդեռ «Գիրք հարցմանց»-ի 1720-ի այս առաջին հրատարակութեան ցանկում («Առ ինչ գլխաւոր բանք բոլոր Սուրբ Գրոցս Հարցմանց»)

Թվաբովոր մասերի մեջ երբեք հեկց «Ընդ- դիմ այլազգեաց»-ն է. բացի այդ, բերված են առաջին հատորի մյուս բոլոր գլուխների ու հատվածների անունները: Անշուշտ սա նույն- պես ցույց է տալիս, որ 1720 թվականին «Գիրք հարցմանց»-ի անվանաթերթի, առա- շարանի և ցանկերի տպագրությունից հետո տպվել է գրքի առաջին հատորը (որից հետո միայն երկրորդը): Իսկ այդ ո՛ւր է այդ հատորը: Պետք է նախ նկատի ունենալ, որ Պոլսի հայ տպագրության պատմության մեջ առա- ջին դեպքն էր, որ տպագրվում էր գիրք, ուր առկա էր մասնագիտական մասին ըն- դարձակ վերլուծություն քրիստոնյայի տե- սանկյունինը:

Կյուլեսերյանն ասում է, որ երբ երկրորդ անգամ տպագրվեց «Գիրք հարցմանց»-ը, այնտեղից «մեծ հեռատեսությամբ զանց առնվեցավ Ընդդեմ տանկաց մասին տպա- գրությունը, որ այնքան անմեղ և ամեն կաս- կածն վեր ու գաղտնամտութենն զերծ, զուտ ջատագովական գրված մըն էր քրիստոնեու- թյան տեսակետեն»:

Այժմ «Գիրք հարցմանց»-ի առաջին տպա- գրության «ողջ մնացած» այս սկզբի մասերի քննության հիման վրա կարելի է ասել, որ այդ «մեծ հեռատեսությունը» և փոքր-ինչ դարմանալի շրջահայեցությունը իր շատ շո- շափելի պատճառն է ունեցել... Այժմ դժվար է որոշել, թե գրքի առաջին տպագրության ժամանակ ինչպես են Պոլսի իշխանություն- ներն իմացել «Ընդդեմ այլազգեաց» հատվա- ծի էություն մասին, բայց գրքի այդ հատվա- ծը պարունակող առաջին գլուխը պետք է որ ոչնչացված լինի և այն էլ իշխանությունների պահանջով (ըստ երևույթին՝ պատրիարքի միջոցով):

Իսկ ինչո՞ւ է անավարտ մնացել ողջ գրքի տպագրությունը:

Հայ հին տպագրության պատմությունը ու- ըրիշ դեպքեր էլ է նշում, երբ այս կամ այն գրքի սկսված տպագրությունը չի ավարտվել: Կան դեպքեր, երբ գրքի տպագրությունը ա- նավարտ է մնացել տպարանի անկարողու- թյան, անհրաժեշտ հմտության ու պարագա- նների բացակայության պատճառով, ինչպես, օրինակ, ժէ դարի կեսերին Նոր-Ջուղայում անավարտ է մնացել Աստվածաշնչի տպա- գրությունը: Երբեմն տպագրությունը կիսատ է մնացել տպարանի փակվելու պատճառով: Օրինակ, 1669 թվականին Ոսկան վարդապե- տի սկսած Շարակնոցի տպագրությունը ընդ- հատվեց Ամստերդամում Ուկանյան տպա- րանի փակման պատճառով<sup>11</sup>:

<sup>11</sup> Այդ Շարակնոցը հետագայում, 1680-ական թվա- կաններին, շարունակեց և ավարտեց Ոսկան վարդապե- տի աշակերտների Պետրոս Ջուղայեցին:

Այս կարգի հանգամանքներից ոչ մեկն էլ չէին կարող խափանել «Գիրք հարցմանց»-ի նեցիս, որն սկսել էր այդ տպագրությունը, հայ ամենահմուտ տպագրիչներից է եղել և ունեցել է ժամանակի կատարելագործված տպարաններից մեկը: Գրիգորը տպագրել է ավելի բարդ գործեր, ինչպես, օրինակ, 1706-ի և 1710-ի հսկա «Յայսմաուրե՛»-ները, 1716-ի և 1717-ի հսկա աշխատել է մինչև 1734 թվականը<sup>12</sup>:

Հնում հայերեն գրքերի տպագրության ընդ- հատման մի այլ պատճառ է եղել գրաքննու- թյունը: Բավական է հիշել Մարսելի Ոսկան- թյան տպարանում Ոսկան վարդապետի մա- հից հետո (1674 թ.) նրա կողմից ամուսնու- ղանման ված ժամագրքի ու նախկին տպագրու- թյան ընդհատումը Հոռմի գրաքննության կողմից<sup>13</sup>:

Ամեն ինչ ասում է այն բանի օգտին, որ «Գիրք հարցմանց»-ի առաջին տպագրու- ընդ անավարտ է մնացել նույնպես գրաքննու- թյան պահանջով:

Կյուլեսերյանը Աստուպատցու ձեռնարկած այդ տպագրության ընդհատման պատճառը համարում է Պոլսից նրա մեկնումն ու մահը 1729-ին էջմիածնում<sup>14</sup>: Սա, իհարկե, բոլորու- վին անհավանական է. մինչև 1729 թվակա- նը, այսինքն ինը տարվա մեջ, «Գիրք հարց- մանց»-ը կարող էր տպագրվել մի քանի ան- գամ:

Գրքի տպագրության անավարտ մնալու պատճառը պետք է որոնել նրա մեջ իսլամին վերաբերող «Ընդդեմ այլազգեաց» գլխի առ- կայության հանգամանքում: Պոլսի իշխանու- թյունները, տեղեկանալով այդ գլխի բովան- դակությունը և ոչնչացնելով նրա տպված թերթերը, չէին կարող կասկածի չենթարկել ողջ գիրքը և շարգելել նրա տպագրությունն ընդհանրապես:

Եվ այսպես, «Գիրք հարցմանց»-ի առաջին հրատարակության նորահայտ մասերը ցույց են տալիս, որ Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը 1720 թվականին, այսինքն իր դահակալությունից մի քանի տարի անց, Պո- լիս առաքած իր նվիրակի միջոցով, փորձել է տպագրել Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը, որը շատ կարևոր դեր պիտի խաղար այն

<sup>12</sup> Մարզվանեցու տպարանից դուրս եկած մեղ ծանոթ վերջին գիրքը՝ Հովհ. Ոսկերեանի «Ներբողանք»-ը այդ թվականին է տպագրվել:

<sup>13</sup> Ժամագրքի տպագրությունը մեծ դժվարություննե- րով 1679-ին ավարտեց Ոսկանի քեռորդին՝ Սողոմոնը, իսկ նախկին այնպես էլ մնաց կիսատ (տպագրված է 2 մամուլ):

<sup>14</sup> Բարգեճ վարդապետ Կյուլեսերյան, նշված աշխա- տությունը, էջ 14:



## ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

### Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ւ Մ

Արևմտահայ թատրոնի պատմությունը.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտը լույս է ընծայել գրականագետ Գ. Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» աշխատությունը:

Մանրակրկիտ ուսումնասիրության և փաստական հարուստ նյութերի հիման վրա, հեղինակը տվել է անցյալ դարի 60—80-ական թվականների արևմտահայ թատրոնի պատմությունը:

Գրքի մեջ բերված են մինչև այժմ անհայտ բազմաթիվ փաստեր, որոնք հեղինակը քաղել է օտար, հատկապես թուրքական մամուլից: Իր աշխատության մեջ հեղինակը արևմտահայ թատրոնի պատմությունը սերտորեն շաղկապում է ժամանակի թուրքահայ հասարակական-քաղաքական և ազգային-ազատագրական պայքարի հետ, մի հանգամանք, որն, անշուշտ, ավելի է բարձրացնում գրքի արժանիքը իբրև գիտական աշխատություն: Գրքի մյուս արժեքավոր կողմն այն է, որ հեղինակը արևմտահայ թատրոնի առաջացումը և վարձագցումը չի անջատում արևելահայ թատրոնից, համարելով մեր թատրոնը մեկ ամբողջականություն, սակայն երկու հատվածների բաժանված պատմական-քաղաքական իրադրությունների բերումով, իբրև հետևանք նույն պատճառներով հայ ժողովրդի երկու հատվածի բաժանման: Հեղինակը համույժի կերպով ցույց է տալիս, որ արևմտահայ թատրոնի գործիչները սկզբից զգացել են արևելահայ հասարակական գործիչների ջերմ սերն ու եղբայրական օգնությունը: Կուսանդնուպոլիսը Կովկասին տվել է բեմական գործիչների մի փառավոր ջոկատ:

Մենագրություն Միքայել Նալբանդյանի մասին.— Մոսկվայի պետական մանկավարժական ինստիտուտը ռուսերեն լեզվով լույս է ընծայել բանասեր Ա. Խաչատրյանի արժեքավոր աշխատությունը՝ «Մենագրություն Միքայել Նալբանդյանի մասին» խորագրով:

Այս աշխատությունն անպայման որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մեր գրական և գիտական հասա-

րակության համար: Գիրքը, որն իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ նյութեր, հեղինակի երկար տարիների պրպտումների և ուսումնասիրությունների արդյունքն է:

Գրքի սկզբի մասում հեղինակը տվել է Միքայել Նալբանդյանի կյանքն ու գործունեությունը որպես լուսավորչի, որպես Արովյանի, Թաղիադյանի և Աղայանի դեմոկրատական հայացքների և ավանդությունների շարունակողի: Հետագա գլուխներում տրված է, թե ինչպես Նալբանդյանը, խորացնելով ու վարձագցնելով իր հայացքները, հանգում է հեղափոխական դեմոկրատիկ մկպունքներին: Շատ ավելի խոր կերպով տրված են Միքայել Նալբանդյանի փիլիսոփայական, գրական և գեղագիտական հայացքները:

Միքայել Նալբանդյանին նվիրված բազմաթիվ գիտական ուսումնասիրությունների թվում Ա. Խաչատրյանի սույն մենագրությունը անպայման հետաքրքրական և արժեքավոր գործ է:

Եղիշե Չարենցի երկերի գիտական հրատարակությունը.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը նախաձեռնել է Եղիշե Չարենցի երկերի գիտական հրատարակության, որը բաղկացած է լինելու 6 հատորից: Այս հրատարակությունը լինելու է Եղիշե Չարենցի երկերի ամբողջական հրատարակությունը և ընդգրկելու է հեղինակի բանաստեղծությունները, պոեմները, արձակ երկերը, գրական-հրապարակախոսական հոդվածները, կեկուցումները, ելույթները և նամակները: Ժողովածուի մեջ մտնելու են հեղինակի մի շարք անտիպ և կիսավարտ գործերը, որոնք հայտնաբերված են նրա արխիվում:


Արդեն լույս է տեսել առաջին հատորը, որի մեջ մտնում են Չարենցի վաղ շրջանի քնարական բանաստեղծությունները: Մինչև տարվա վերջը լույս կտեսնի 2-րդ հատորը:

օրերին, երբ այնքան ուժեղացել էր լատինասերների գործունեությունը: Այսինքն՝ ԺԸ դարի սկզբներին Տաթևացու նշանավոր գիրքը նորից իր դերը պիտի կատարեր, այս անգամ տպագրության միջոցով: Ի դեպ, այս փաստը ամբողջովին մերժում է նաև Աստվածատուր կաթողիկոսի լատինասիրության մասին գրականության մեջ հայտնված տեսակետը<sup>15</sup>:

Անշուշտ, «Գիրք հարցմանց»-ի հրատարակության նախաձեռնությունը արդեն ինքնուստինքյան խոսում է Աստվածատուր Համադանցու դավանական հայացքների և ուղղության մասին: Սակայն կաթողիկոսը և նրա

նվիրակը հաշվի չեն առնում Թուրքիայի պայմանների յուրահատկությունը: Ճիշտ է, այդ շրջանում թուրքական կառավարությունն ընդգծված հակակաթողիկական գիրք ուներ և «Գիրք հարցմանց»-ի հրատարակությունը հասելի պետք է լիներ նրան, սակայն «Ընդդէմ այլազգեաց» գլուխը խիստ մերժելի էր դարձնում գիրքը նաև թուրքական կառավարության համար: Եթե հաշվի առնենք այն օրերի պայքարի անմաքուր ձևերը Պոլսի հայության մեջ, արդյոք չի կարելի ենթադրել, որ միջոցների մեջ խտրություն չդնող որոշ լատինադավան հայեր են հասկացրել թուրք իշխանություններին «Ընդդէմ այլազգեաց» գլխի իմաստը և հաջողեցրել իրենց համար անցանկալի ողջ գրքի տպագրության խափանումը: Ինչևէ, ինք տարի անց, Պոլսի պայմաններին լավ ծանոթ Հովհաննես Կոլոտ պատրիարքը, նկատի ունենալով նախորդ հրատարակչի անհաջողության պատճառը, կարողանում է այնպես անել, որ գիրքը ի վերջո լույս է ընծայվում, թեև լուրջ կրճատումներով:

<sup>15</sup> «Աստուածատուրն Համատանցին նստի կաթողիկոս էջմիածնայ ամի (1717) ... որ զսլով ուղղափառ՝ գրեաց առ Կղեմես փափն զթուղթ հնազանդութեան խրոջ, և գմնծ զովասանս Սուրբ Եկեղեցւոյն Հոռմայ».—Տե՛ս «Արտ Սրբոյն Պետրոսի առաւելապետի ճիմն Եկեղեցւոյ...»: Թագրմ. և լրացումն Ա. Պաշխանի, Վիեննա, 1853, էջ 283: Այս տեղեկությունը պետք է համարել կաթողիկոսի որեէ զիմանազիտական քայլի միտումնավոր կամ անմիտում շփաղանցում:



Ամբողջ երկրի հրատարակումը նախատեսվում է ավարտել 1965 թվականին:

**Գուրգեն Մահարու 60-ամյակը.**— Հայաստանի գրական և ասարակալությունը ջերմորեն նշեց սովետաբան ակադեմիկոս գրող և բանաստեղծ Գուրգեն Մահարու (Ածենյան) ծննդյան 60-ամյակը:

Գուրգեն Մահարին ծնվել է Վանում 1903 թվականին: Ակադեմիկոս կրթությունը ստացել է Վանում, ապա Երևանում, ուր և ավարտել է Հայաստանի պետական համալսարանը: Գրական գործունեությունը սկսել է 1918—1919 թվականներին: Սակայն նրա գրական տաղանդը իր փայլուն դրսևորումն է գտել 1923—1924 թվականներից հետո, երբ նա միաժամանակ հանդես եկավ և՛ բանաստեղծությամբ և՛ արձակի բնագավառներում:

Գուրգեն Մահարին մեր սիրված գրողներից մեկն է: Նրա փայլուն տաղանդը տվել է մի ամբողջ շարք գեղեցիկ, ինքնատիպ արձակ և չափածո ստեղծագործություններ, որոնք սովետաբան գրականության լավագույն էջերի թվին են պատկանում:

Ներկայիս բազմամաստակ գրողը եռանդով շարունակում է իր գրական գործունեությունը: Նախատեսված է Գ. Մահարու գրական ստեղծագործությունների նոր հրատարակությունը մի քանի հատորով:

**Գրականության համեստ մշակը.**— Լրացավ գրող-բանաստեղծ Մ. Վեսպերի (Մարտիրոս Ղաթաղյան) ծննդյան 70-ամյակը: Մեր գրականության այս համեստ մշակը ծնվել է 1893 թվականին Վանում, մեծ եղեռնի տարին գաղթել Անդրկովկաս, հաստատվել Թբիլիսիում, ուր երկար տարիներ վրադվել է գրական և մանկավարժական գործունեությամբ: Այնուհետև տեղափոխվել ու հաստատվել է Երևանում:

Վեսպերի բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսել Թբիլիսիում՝ 1925 թվականին: Հետագա տարիներին լույս են տեսել նրա չափածո և արձակ գործերի մի շարք ժողովածուներ: Վեսպերը հիանալի վարպետ է նովելների: Սեփական բանաստեղծություններից ու պատմվածքներից բացի, Վեսպերը գրի է առել ու մշակել մի շարք ժողովրդական ավանդություններ ու հեքիաթներ, որոնց թվում հատկապես հիշատակելի է «Սասունցի Դավիթ» ավանդակների տարբերակներից մեկը՝ «Ասը Սասնարի և Բաղդասարի մասին»: Վերջերս Հայպետհրատը լույս ընծայեց Վեսպերի արձակ գործերի երկրորդ ժողովածուն, որի մեջ պետեղված պատմվածքների նյութերը առնված են աշխատավոր մարդկանց կյանքից:

Վեսպերը հիանալի թարգմանիչ է: Նա թարգմանել է ռուս, վրացի և ադրբեջանցի դասական և ժամանակակից գրողների բազմաթիվ արձակ և չափածո գործերը, որոնք լույս են տեսել թե՛ մեր պարբերական մամուլում և թե՛ առանձին գրքերով:

**«Հայ ժողովրդական խաղեր».**— Այսպես է կոչվում այն հետաքրքրական գիրքը, որը վերջերս հրատարակել է Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ժողովածուի մեջ մտել են շուրջ 1 500 ամենատարբեր տեսակի սպորտային, ծիսական, դիցաբանական, կենցաղային, տոնական, պարճության, հանելուկային և այլ խաղեր, որոնք տարածված են եղել մեր ժողովրդի մեջ սկսած հին դարերից: Դրանցից շատերը գործնական նշանակություն ունեն երեխաների համար:

Ժողովրդական այդ խաղերը հավաքել և գրի են առել Հայաստանի պետական թանգարանի ազգագրական բաժնի և Հայաստանի ֆիզկուլտուրայի ինստիտուտի աշխատակիցները մի քանի տարվա ընթացքում: Գրքում պետեղված են Արարատյան դաշտի, Աևանի ավազանի, Երիզանի, Զանգեզուրի, ինչպես նաև Սասունի և Արևմտյան Հայաստանի այլ վայրերի հայ ժողովրդական խաղերը: Գրքի տեքստը տպագրության է պատրաստել և ծանոթագրել է ազգագրագետ Վ. Բոդյանը, խմբագիրն է Մ. Հասարթյանը:

**Հետաքրքիր թվեր կրթական կյանքի վերաբերյալ.**— Հայաստանի Կենտրոնական վիճակագրական վարչության տվյալների համաձայն, հանրապետության կրթական կյանքը հետևյալ պատկերն է ներկայացնում սույն թվականի հուլիս ամսվա դրությամբ.

Բոլոր տեսակի ուսումնական հաստատություններում ընդգրկված սովորողների ընդհանուր թիվը կազմում էր 457 000 մարդ, որից 433 հազար հոգի սովորում էին հանրակրթական դպրոցներում, բարձրագույն և միջին ուսումնական հաստատություններում, իսկ 24 500 մարդ՝ երկրյան դպրոցներում, հատուկ դասընթացներում և հեռակա կերպով: Զուտ հանրակրթական դպրոցներում սովորողների ընդհանուր թիվը կազմում էր 412 000 հոգի, 41 000-ով ավելի քան անցյալ տարի:

Այս տարվա գարնանը հանրակրթական դպրոցներն ավարտել և միջնակարգ կրթության վկայական են ստացել 8 000 մարդ, որից կեսը ավարտել է երիտասարդության համար գործող երեկոյան դպրոցները: Այս թվից մոտ 2 000 մարդ, միջնակարգ կրթությունից բացի, ստացել է մասնագիտական կրթություն:

Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էին մոտ 26 000 ուսանողներ, կամ 3 800 հոգով ավելի քան անցյալ տարի: Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում (տեխնիկումներ, ուսումնարաններ և այլն) սովորում էին ավելի քան 20 000 մարդ, կամ 2 300 հոգով ավելի քան անցյալ տարի:

1963 թվականի ընթացքում, հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները կավարտեն 3 200 մասնագետներ, իսկ միջնակարգ մասնագիտական հաստատությունները՝ շուրջ 3 500 հոգի: Այսպիսով, մեկ տարվա ընթացքում Հայաստանի ժողովրդական տնտեսությունը կստանա շուրջ 7 000 հոգի բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ աշխատողներ:

**Բաղաքի բարեկարգման աշխատանքները Երևանում.**— Երևանի բարեկարգման աշխատանքներով պետեղված են մի շարք հիմնարկներ, որոնց թվում նաև «Կոմունիզմ» տրեստը, որը գործում է քաղաքային սովետին առընթեր: Ընթացիկ տարվա անցած յոթ ամսում այս տրեստը կգալի աշխատանքներ է կատարել: Նախատեսված է այս տարի քաղաքային ջրմուղի ցանցը ընդարձակել 30 կիլոմետրով, այս թվից 20 կիլոմետրն արդեն կատարված է: «Հաղթանակ» պետսպորտ կառուցված է մի նոր, գեղեցիկ ջրավազան, շուրջ 12 000 քառակուսի մետր մակերեսով, որը կհանդիսանա հանգստի և վճարճության վայր: Բաղաքի հարավային մասում կառուցվում է ավելի քան 300 մետր երկարությամբ և 26 մետր լայնությամբ անցուղի (հստակազա), որը կամուրջի ձևով միացնելու է գործարանային թաղամասը կայարանամերձ թաղամասին:

Անցած յոթ ամսվա ընթացքում բարեկարգվել և աֆալտապատվել են յոթ փողոցներ, որոնցից մի քանիսը նոր են բացված: Մոտ 400 000 քառակուսի մետր տարածություն աֆալտապատված է: Գոյություն ունեցող մի քանի առանձին աֆալտբետոնի գործարանների փոխարեն, ներկայիս տրեստը կառուցում է մեկ հատ խոշոր գործարան, որտեղ բոլոր տեսակի աշխատանքները մեքենայացվելու են և արտադրանքը ավելացվելու է:

Տրեստը մեծ ուշադրություն է նվիրում Սայթ-Նովայի անվան նոր բացված փողոցի բարեկարգման աշխատանքներին, որոնք պետք է ավարտվեն մեծ գույանի ծննդյան 250-ամյակի հոբելյանի առթիվ:

**Ապագա Դիլիջանը.**— Դիլիջանը Հայաստանի գեղատեսիլ ամառանոցային վայրերից մեկն է, ուր ամեն ամառ մեծ թվով հանգստացողներ են գալիս: Այստեղ գործում են մի քանի սանատորիաներ: Հանքային ջրերի հարուստ աղբյուրները առավել ևս կարևորություն են տալիս Դիլիջանին իբրև բուժավայրի:

Ներկայիս կազմված և հաստատված է Դիլիջան քաղաքի վերակառուցման և վարգացման գլխավոր հատակագիծը, ըստ որի քաղաքը 1980 թվականին կունենա շուրջ 30 000 բնակչություն, ներկայիս ութ հազարի փոխարեն: Փողոցի տեսակների փոխարեն կառուցվելու են արդիական խոշոր բնակելի շենքեր՝ առանձին թաղամասերով: Ամեն թաղամաս կունենա իր դպրոցը, մանկապարտեզը, խանութները, սրճարանները: Հանգստացողների համար կառուցվելու են հյուրանոցներ, պանսիոնատներ, հանգստյան տներ և տուրիստական իջևանատուն: Տնկվելու են նոր արհեստական անտառներ մշտադալար ծառերով, կանաչապատվելու են փողոցները, ստեղծվելու են ծաղկանոցներ: Կառուցվում է ստադիոն 10 000 հոգու համար: Ստադիոնին կից լինելու է մարկադար:

**Առողջարաններ Մարմարիկի ձորում.**— Հայաստանի գեղատեսիլ անկյուններից մեկն է Մարմարիկ գետակի ձորը, որն սկսվում է Հրապառի շրջանի Ունդամալ գյուղից և վերջանում է Հանքավան (Միսխանա) գյուղի մոտ: Ձորի աջափնյա լեռնալանջերը պատած են անտառներով, իսկ ձախափնյա լեռները՝ ալպյան կանաչով: Ձորը հարուստ է հանքային ջրերով, որոնք շատ նման են Հսենտուկիի ջրերին: Աղբյուրներից մի քանիսի ջրերը ծծմբային են և ունեն բնական ջերմություն: Այս ձորում տեղավորված են մանկական ճամբարներ և հանգստյան տներ, ուր ամեն ամառ հանգստանում են հազարավոր երեխաներ:

Կառավարական մարմինների որոշմամբ, Մարմարիկի ձորը դարձվելու է հանգստի և բուժման վայր բնակչության լայն խավերի համար: Այս տարվանից սկսված է մի շարք սանատորիաների և հանգստյան տների կառուցումը: Առաջիկա 1964 թվականի ամռանից դրանց մի մասը կսկսի գործել: Կառուցումները գլխավորապես կենտրոնացվելու են ձորի սկզբում: Հանքավան գյուղի շրջակայքում, ուր բացի սանատորիաներից ու հանգստյան տներից կլինեն պանսիոնատներ, հյուրանոցներ, տուրիս-

տական իջևանատներ: Ձորի կենտրոնական մասում հիմնվելու է մեծ կրոնագի, իսկ երկու տարբեր մասերում կառուցվելու են ջրավազաններ:

**Լուսավանդ ապագայում.**— Հայաստանի նոր քաղաքներից մեկն է Լուսավանդ, որն այժմ ունի ընդամենը 5 000 բնակիչ: Այստեղ կառուցված է բավականին խոշոր մի գործարան, որը թողարկում է մետաղ մշակող և հղկող հաստոցներ (ներտաշ հաստոցների գործարան): Այս քաղաքում են իրենց բնակությունը հաստատել Իրանից հայրենիք վերադարձած մեծ թվով հայեր:

Պայծառ է ու գրավիչ Լուսավանի մոտիկ ապագան: Այս տարվանից սկսվել է մի նոր արժեքավոր գործարանի կառուցումը: Առաջիկա տարիներին կառուցվելու են նաև այլ գործարաններ: Լուսավանդ կղառնա Հայաստանի արդյունաբերական կենտրոններից մեկը: Նրա բնակչության թիվը կհասնի 100 000-ի: Առաջիկա երկու տարում այստեղ կկառուցվեն մեծ թվով բնակելի շենքեր, դպրոցներ, մանկապարտեզներ, կինոթատրոն, կուլտուրայի տուն, ճաշարաններ, խանութներ: Մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդ քաղաքի կանաչապատմանը: Ոչ ֆեռու ապագային քաղաքն ամբողջովին թաղված կլինի այգիների ու պարտեզների մեջ:

**Նոր ջրհան կայաններ.**— Լոռվա սարահարթերում դեռ շատ կան ամայի հողեր, որոնք կարիք են զգում արհեստական ոռոգման: Բայց ինչպես ոռոգել այդ տարածությունները, երբ դրանք գտնվում են բարձրավանդակներում, լեռների գոգավորումներում: Վերևից հոսող գետակներ չկան, կա մի գետ միայն՝ Դեբետը, որը հոսում է Լոռվա անդնդախոր ձորով: Եվ ահա մարդկային անդուլ աշխատանքի ջնորհիվ Դեբետի ջրերը, հպոր ջրհան կայանների միջոցով, բարձրացվում են վեր՝ դեպի սարահարթերը:

Ալավերդու և Նոյեմբերյանի շրջաններում ներկայիս գործում են մի քանի այդպիսի կայաններ: Են և ճոճկան գյուղերի մոտ կառուցված ջրհան կայանների միջոցով ոռոգվում են մերձակա գյուղերի մի քանի հարյուր հեկտար հողեր: Նման կայանների շնորհիվ Նոյեմբերյանի շրջանում, բոլորովին ամայի հողերում, հիմնվել են «Ջեյթուն», «Հաղթանակ» և «Լավար» սովխոզները, որոնք պարզվում են խաղողագործությամբ, պտղաբուծությամբ և ծխապաղի մշակությամբ:

Շուտով կավարտվի Արյունի ջրհան կայանի շինարարությունը, որի շնորհիվ ոռոգվելու են շուրջ հազար հեկտար նոր հողեր:

Վերջերս Հայաստանի ջրային տնտեսության մինիստրությունը ձեռնարկել է մի նոր առավել հպոր ջրհան կայանի կառուցման Դեբետ գետի վրա, Նոյեմբերյանի շրջանում: Գետի առաջ կառուցվում է երկաթ-բետոնե պատնեշ, որով կստացվի խոշոր ջրավազան: Վերջինիս ափին կկառուցվեն չորս ջրհան կայաններ, որոնց միջոցով շուրջ կբարձրացվի դեպի սարահարթերը և այնուհետև 20 կիլոմետր երկարությամբ ջրանցքով կհոսի դեպի դաշտերը: Նոր ջրհան կայանը կռոգի մոտ 4 000 հեկտար տարածություն, այսինքն այնքան, որքան ոռոգվում է ներկայիս ամբողջ Նոյեմբերյանի շրջանում:



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ\*

№ 197

ՏՐԱՄԱՔԱՆՈՒԹԻՒՆ

Քերբեր՝ 143.—Պրակներ՝ 12, յուրաքանչյուրը 12-ական թերթից: Բ պրակը 11 թերթ է:—Մեծուքյուներ՝ 16,1×11,6×3 սմ.:—Նյութը՝ դիմացկուն սպիտակ թուղթ:—Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով ծաղիկներ և այլ դարձեր են նկարված:—Պաշտպանակներ՝ շունի:—Վիճակը՝ բավարար, սակայն սկզբից թերի:—Գրությունը՝ միասյուն:—Գտառիկ բղբեր՝ չկան:—Տղերը՝ 19:—Գծումները՝ առանց ճնշման:—Գիրը՝ նոսրգիր:—Ձառկագրություն՝ կան երկուական հաս հասարակ կիսախորաններ, լուսանցազարդեր և միացյալ ձկնազիր-զաղանազիր (թ.թ. 54ա և 77բ): Կան նաև տրամաբանության վերաբերյալ երեք տախտակներ (թ.թ. 2բ, 61բ և 69բ): Օգտագործված է միայն վարդագույնը: Վերնադրերն ու նոր պարբերությունների սկզբնատառերը զված են կարմիր թանաքով:—Գրիչը՝ Գայտասցի Մովսես:—Պատվիրատուն՝ անհայտ:—Մադկողը՝ հավանաբար նույնիսկ Մովսեսն է:—Ժամանակը՝ 1701 թ.:—Վայրը՝ անհայտ:—Մանրություն՝ սույն ձևագիրը 1961 թվականին ստացված է նվեր Քրիստիանից, Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը հանդիսանում է Արիստոտելի տրամաբանությունը, սակայն որոշ շափուվ ավելացված և պակասեցված գրչի՝ Մովսեսի կողմից: Հետաքրքրության համար ստորև տրվում են կարևոր գրվածքների վերնագրերը.

- Ք. 2ա.—Յաղագս տեսակի:
- Ք. 4ա.—Յաղագս տարբերության:
- Ք. 7ա.—Յաղագս պարզառության որ է հատոր առաջին:
- Ք. 7բ.—Վասն սեռի:
- Ք. 9ա.—Յաղագս թէ ուրանուր է սեռ:
- Ք. 9բ.—Յաղագս թէ ուրանոր է տեսակ:
- Յաղագս թէ ուրանոր է տարբերություն:
- Ք. 10բ.—Յաղագս յատկի:
- Ք. 11բ.—Յաղագս տեսակի:
- Ք. 14ա.—Յաղագս փաղ անուան:
- Ք. 15ա.—Յաղագս դաս անուան:
- Յաղագս յար անուան:
- Ք. 16բ.—Յաղագս ենթացուցական ստորագրության:
- Ք. 19բ.—Յաղագս գոյացության:

Ք. 20բ.—Յաղագս հետևման գոյացության:

- Ք. 22բ.—Յաղագս քանակի:
- Ք. 26բ.—Յաղագս հետևման քանակի:
- Ք. 27բ.—Յաղագս առնչի:
- Ք. 29ա.—Յաղագս հետևման առնչին:
- Ք. 30ա.—Յաղագս որակի և որակութեան:
- Ք. 33ա.—Յաղագս հետևման որակին:
- Ք. 34ա.—Յաղագս արարման:
- Ք. 36ա.—Յաղագս հետևման արարման:
- Ք. 37ա.—Յաղագս կրման:
- Ք. 37բ.—Յաղագս հետևման կրման:
- Ք. 38բ.—Յաղագս ուրի:
- Ք. 39ա.—Յաղագս հետևման ուրին:
- Ք. 40ա.—Յաղագս երբի:
- Ք. 40բ.—Յաղագս հետևման երբին:
- Ք. 41ա.—Յաղագս դրութեան:
- Ք. 43ա.—Յաղագս հետևման դրութեան:
- Ք. 44ա.—Յաղագս ունելոյ:
- Ք. 45ա.—Յաղագս հետևման ունելոյն:
- Ք. 45բ.—Յաղագս թէ տասունը սկզբունքս զընդինքեամբ եղելոցն ստորագին:
- Ք. 48բ.—Յաղագս հետևման տասան սկզբանց:

Յաղագս թէ ըստ որոց ասի յաւէտն, և նուազն:

- Ք. 49ա.—Յաղագս հակակայից:
- Ք. 51բ.—Յաղագս շարժութեան:
- Ք. 52ա.—Յաղագս նախկնի:
- Ք. 53ա.—Յաղագս համանգամայնց:
- Ք. 54ա.—Յաղագս շարամանութեան որ է հատոր երկրորդ:
- Ք. 55ա.—Յաղագս անուան:
- Ք. 56ա.—Յաղագս բայի:
- Ք. 56բ.—Յաղագս բանի:
- Ք. 57բ.—Յաղագս բաց երևութեան:
- Ք. 58բ.—Յաղագս բաժանման նախադասութեանց:
- Ք. 63բ.—Յաղագս հակասութեանց ճշմարտելոյ և ստելոյ:
- Ք. 67ա.—Յաղագս հանդիտութեան նախադասութեանց:
- Ք. 69բ.—Յաղագս հակադարձութեան նախադասութեան:
- Ք. 74բ.—Յաղագս եղանակաւոր նախադասութեանց:
- Ք. 76բ.—Յաղագս ստորադրական նախադասութեան:
- Ք. 77բ.—Յաղագս շարաբանութեան որ է հատոր երրորդ:
- Ք. 79ա.—Յաղագս հաւաքաբանութեան որ է տեսակ առաջին:
- Ք. 83բ.—Յաղագս առաջին ձևոյն:
- Ք. 84բ.—Յաղագս երկրորդ ձևոյն:
- Ք. 85ա.—Յաղագս երրորդ ձևոյն:

\* Շարունակված «էջմածին» ամսագրի 1960 թվականի № № Ե-ից, Է-ից, Թ-ից, 1961 թվականի № № Բ-ից, Գ-ից, Զ-ից, Ը-ից, ԹԲ-ից, 1962 թվականի № № Ը-ից, Թ-ից, Ժ-ԺԱ-ից, ԺԲ-ից և 1963 թվականի № № Բ-ից, Ե-ից և Զ-ից:

Թ. 92ա.—Յաղագս եղանակաւոր հաւաքաբանութեանց:

Թ. 92բ.—Յաղագս ստորաշրջական հաւաքաբանութեան:

Թ. 93բ.—Յաղագս մակածութեան, որ է երկրորդ տեսակ առարկութեան:

Թ. 94ա.—Յաղագս կարճաբանութեան որ է երրորդ տեսակ առարկութեան:

Թ. 94բ.—Յաղագս յարացուցութեան որ է չորրորդ տեսակ առարկութեան:

Թ. 95բ.—Յաղագս տեսակաց առարկութեան որ ըստ բաժանման նիւթոյ լինի:

Թ. 96ա.—Յաղագս թէ զի՞նչ է իմաստութիւն, և յո՞րս բաժանի, և թէ վասն է՞ր տրամաբանութեանէ մասնիկ իմաստասիրութեան և ոչ մասն:

Թ. 101ա.—Յաղագս թէ զի՞նչ է տրամաբանութիւն, և յո՞րս բաժանի:

Թ. 106ա.—Յաղագս տրամաբանութեան տեղեաց:

Թ. 108բ.—Յաղագս տեղեաց որ ի սահմանէ և ի սահմանելոյ գլուխ առաջին:

Թ. 110բ.—Յաղագս տեղեաց որ ի ստուգաբանութեան և ի ստուգաբանելոյ անուան, գլուխ երկրորդ:

Թ. 112ա.—Յաղագս տեղեաց որ ի բոլորէ, և ի մասնէ. գլուխ երրորդ:

Թ. 116ա.—Յաղագս տեղեաց որ ի պատճառէ և ի պատճառելոյ. գլուխ չորրորդ:

Թ. 118բ.—Յաղագս տեղեաց որ ի լինելութեան և յեղելոյ. գլուխ հինգերորդ:

Թ. 119ա.—Յաղագս տեղեաց, որ յապականութեանէ և յապականելոյ. գլուխ վեցերորդ:

Թ. 119բ.—Յաղագս տեղեաց որ ի կիրառութեանէ, և ի կիրառելոյ. գլուխ եօթներորդ:

Թ. 120բ.—Յաղագս տեղեաց որ ի քարշողական, և ի հետեողական պատահանց. գլուխ ութերորդ:

Թ. 121ա.—Յաղագս տեղեաց որ ի բացական և ի կցական անուանց. գլուխ իններորդ:

Թ. 121բ.—Յաղագս արտաքին տեղեաց:

Յաղագս տեղեաց որ ի մեծագունէ և ի փոքրագունէ. գլուխ առաջին:

Թ. 122ա.—Յաղագս տեղեաց որ ի հակակայէն. գլուխ երկրորդ:

Թ. 124բ.—Յաղագս տեղեաց որ ի բաժանմանէ. գլուխ երրորդ:

Թ. 125բ.—Յաղագս տեղեաց որ ի համեղականաց. գլուխ չորրորդ:

Թ. 126ա.—Յաղագս տեղեաց որ ի համեմատութեանէ. գլուխ հինգերորդ:

Յաղագս տեղեաց որ ի փորձելոյ. գլուխ վեցերորդ:

Թ. 126բ.—Յաղագս տեղեաց որ յայլ և այլ սեւից. գլուխ եօթներորդ:

Թ. 129ա.—Յաղագս պատրանաց:

Թ. 131ա.—Յաղագս հոմանուանց պատրանաց:

Թ. 132ա.—Յաղագս բաղաշրջական և բաժանական պատրանաց:

Թ. 134բ.—Յաղագս անբոլորովին պատրանաց:

Թ. 135բ.—Յաղագս համահետեողական պատրանաց:

Թ. 136բ.—Յաղագս անցական պատրանաց:

Թ. 137ա.—Յաղագս նմանական պատրանաց:

Թ. 138բ.—Յաղագս հակասական պատրանաց:

Թ. 139բ.—Յաղագս ունակական պատրանաց:

Թ. 140ա.—Յաղագս պատշաճական պատրանաց:

Թ. 140բ.—Յաղագս բաղդատական պատրանաց:

Թ. 141ա.—Յաղագս զգուշանալոյ ի պատասխանադրութեանց առաջարկութեանց և առարկութեանց ի վիճաբանելն:

ՀԻՇՍԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 53բ.—Արդ, աստանօր բազում թախանձանօք և ժտելով աղաչիմ առ ձեզ, ով սուրբ բարունապետք և հոգի ընկալ վարդապետք, որք յորժամ ընթեռնուք, կամ օրինակն առնուք, սակս օգտել ի սմանէ, յիշեսցիք զնուստ Գալատացի Մովսէս բանի սպասաւորս, միով Հայր մեղայիւ, և Աստուած յիշողացն ողորմեսցի ի միւս անգամ զալստեան:

Թ. 69ա.—Ձգժող մատենիս յիշման արժանանէք, ով ընթերցողք, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսս:

Թ. 142բ.—Եւ արդ, աւարտ եղև տրամաբանութեան, զի երեք գլուխքն, այսինքն պարզառութիւն, շարամանութիւն և շարաբանութիւն յանգ ելին:

Թ. 143ա.—Եւ գտանելի է, զի նախագաղափար տրամաբանութեանս է յԱրիստոտէլէ, բայց աժանցի այլ և այլ շարադրութեամբ, աւելորդութեամբ և պակասութեամբ, վասն զիւր ընկալութեան և պիտանաւորութեան, զի շարադրութիւն իմն անցեալ ի լեզուէ իմեքէ յայլ իմն լեզու տարաձայնութիւն ըստ շարադրութեան երևի. իսկ ըստ նոյն լեզուի շարադրեալքն, թէպէտ և դժուարք իցեն, անընտելք ոչ երևին, վասն ըստ կարի մերում շարադրեցաք ըստ լեզուի մերում հայկազնեայց. փառք արժանաւոր շրթանց յամենայն. փառք Քրիստոսի յուսոյն մերում հաւատացելոցս, որ տայ ճարտարութիւն ճշմարտաբան տրամաբանօղաց:

Թ. 143բ.—Արդ, աստանօր եղև զրաւ հոգիաբուղիս տառիս որ կոչի տրամաբանու-

թիւն, որ և ես ստրուկ և սին ծառայ Գալա-տացի Մովսէս բանի սպասաւորս փոյթ ան-ձին կալեալ սակս օգտի մտաց և ընդունակ լինել հանճարոյ գծագրեալ ձեռամբ իմով աւարտումն արարի, ՌՃՄ թուին նամսեանն մայիս և, օրն ուրբաթ: Արդ, ո՛վ ընթերցօղք, որք յորժամ ընթեռնուք, կամ ձեռն արկանէք, կամ զօրինակն առնուք, յիշեցէք միով ողորմեանյիւ զվերոգրեալ գծօղս, և ով որ որ յիշէ, ինքն յիշեցեալ լիցի և լուիցէ զայն երանալուր բարբառն որ ասէ. Եկայք օրհնեալք հօր իմոյ ծառանգեցէք զանսպառ ուրախութիւն որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Հայր մեր...:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ք. 23բ.—7 տող ոտսերեն գրութիւն:
- Ք. 24ա.—5 տող ոտսերեն գրութիւն:

№ 198

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 223:—Պրակները՝ 19 հատ, յուրաքանչյուրը 12-ական թերթից, միայն մի բանիսը թափվել և խառնվել են: ԺԱ պրակը 9 թերթ է, Ը՝ 10 ժ և ԺԶ 11, ԺԹ՝ 14, ԺԲ՝ 16:—Մեծուրյունը՝ 24×17,2×5,5 սմ.:—Նյութը՝ խունացած հասարակ մաշված թուղթ:—Կազմը՝ կաշեպատ տախտակ, քայքայված: Վրան ճնշումով խաշ և զարդեր են նկարված:—Պանպանակներ՝ սկզբից և վերջից մեկական մազաղաթ:—Վիճակը՝ անբավարար, տեղ-տեղ քայքայված: Սկզբից և միջից թերթի:—Գրությունը՝ երկայուն:—Դատարկ քղբեր՝ չկան:—Տողերը՝ 20:—Գծումները՝ ճնշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդագրություն՝ ձեռագրում երկու տեղ միայն պահպանվել է այն՝ թ. թ. 65բ և 184բ, որտեղ կան հասարակ ոճով նկարված մեկական կիսախորան, լուսանցազարդ և զարդագիր: Սրանք նկարված են Մարկոսի և Հովհաննու Ավետարանների սկզբում: Մյուսները թափվել են: Ձեռագրում տեղ-տեղ կարմիր գույնով են գրված որոշ մեծատառեր և բառեր միայն:—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատուն՝ անհայտ:—Մաղկոզը՝ անհայտ:—Ժամանակը՝ ԺԴ—ԺԵ դարեր:—Վայրը՝ անհայտ:—Մանրություն՝ սույն ձեռագիրը ստացված է նվեր կենիականից 1961 թվականին, Տ. Անդրանիկ բահանա իսկենդերյանի տիրու՛նու կողմից, ձեռամբ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյանի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Ք. 65ա.—Տէր Աստուած Յիսուս Քրիստոս; բարեխաւսութեամբ Սուրբ Աւետարանչիս Մաթեոսի ողորմեա գծողի սորս:
- Ք. 228բ.—Փա՛ռք ամենասուրբ Երրորդու-թեանն Հաւր և Որդոյ և Հոգոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից; ամէն:

(Կարմիր գույնով) Արժանի արար... մեղս հասանել ի վերջ Սուրբ Աւետարանիս:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբի մազաղաթի երկրորդ էջում)  
 Վերջին ըստացող Սուրբ Աւետարանիս յիշեցեք զտառապեալ աղախին զնանիկս, որ հալալ արդեաց իմոյ գեեցի զՍուրբ Աւետարանս յիշատակ ինձ և ծընո-ղաց իմոց՝ հարն իմոյ Քրիստոսայտուրին և մարն իմոյ Սալմին, որ առ Աստուած փոխեցան և լեղբայր իմ զՅովանէսն, և զաւակն իմ զԳրիգորն, զոր տղայ հասակ ի Քրիստոս փոխեցաւ Եւ նորայհասակ որդիս իմ զԽաչատուրն սարկաւազն, և նորայրօրբոջ Պետ-րոսն: Եւ այլ ամենայն յարեան մերձաւորս իմ յիշե-ցիք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք, կարգա-լով կամ արիեակեցիով և դուք յիշեալ լինիցիք ի Քրիս-տոսէ Աստուծոյ մերոյ, որ է արհնեալ անզրաւ յաւի-տեանս յաւիտենից: Ամէն: Ի թվ. ՌՃԸ (1659): Ամէն:

Ք. 60բ.—Դարձեալ կիրակին անգամ յիշեցէք Քրիս-տոսայտուրն և իւր կողակիցն Սալմին, և իւր որդին Յովանէսն և իւր կողակիցն Խաթուն, և իւր որդին Այ-վազն և Հայրատէտն կամ կարդալով կամ արիեակեցիով, Աստուած ողորմի ասէք, ողորմի Աստուած ձեզ, ի գա...տեան իւր: Ամէն:

Ք. 184ա.—Արհնեալ է Աստուած յաւի: Ահա:

№ 199

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (ԱՐԱԲԵՐԵՆ)

Թերթերը՝ 120:—Պրակները՝ 18 հատ: Խառնվել են իրար և այժմ ունեն անկանոն վիճակ, այսպես՝ Գ, Զ, ԺԴ և ԺԵ՝ 4-ական թերթ, Դ, Ե, Է, ԺԱ և ԺԸ՝ 6-ական թերթ, Ը՝ 7 թերթ, Ա, Բ, Թ, ԺԲ, ԺԳ և ԺԶ՝ 8-ական թերթ, ԺԷ՝ 9 թերթ և Ժ՝ 10 թերթ:—Մեծուրյունը՝ 21,1×15,7×2 սմ.:—Նյութը՝ զնդնած և կեղտոտած ողորկ հատ շիւղթ:—Կազմը՝ կաշեպատ թուղթ:—Պանպա-նակներ՝ չունի:—Վիճակը՝ անբավարար, պրակները պոկվել և մեկը մյուսից անջատվել են:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ քղբեր՝ չկան:—Տողերը՝ ձեռագրի առաջին մասը՝ Ա—ԺԲ պրակները (թ. թ. 1—81) 15-ական տող, իսկ երկրորդ մասը՝ ԺԳ—ԺԸ պրակները (թ. թ. 82—120) 21-ական տող:—Գծումները՝ առանց ճնշման:—Գիրը՝ ընթեռնելի, մաքուր և դեղիցիկ արա-բական նասախ տառեր:—Զարդագրություն՝ չունի:—Գրիչը՝ Ահմեդ իրն Ամաղեղդին:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ժամանակը՝ ԺԶ—ԺԷ դարեր:—Վայրը՝ Հի-ջազ:—Մանրություն՝ Սույն ձեռագիրը 1961 թ. ստացված է նվեր Քրիլիստից, Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Մտեփանյանի կողմից: Ձեռագրի առաջին մա-սում, 15-ական տող գրված բաժնում թողնված է մեծ լուսանցք: Գրությունը գրված է թերթի 7×14 սմ. ծավալի վրա, իսկ երկրորդ մասում, 21-ական տող գրված բաժնում թողնված է հարաբերաբար ավելի նեղ լուսանցք: Գրությունը գրված է թերթի 9,5×17 սմ: ծավալի վրա: Ձեռագրի վերջին մասում... ավելի... ջիլ:

իսկ սկզբի մասում շատ ծանոթություններ և հավելագրություններ կան գրված թերթի երկու կողմի լուսանցքներում: Երբեմն պատահում է, որ մի էջի հետասանդակներում: Երբեմն պատահում է, որ մի էջի հետասանդակում գրված հավելագրությունները ավելի շատ են, քան այդ նույն էջի տեքստը, ինչպես, օրինակի համար, թ. թ. 9ա, 52ա, 55ա և այլն:

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ**

Թ. 120բ-ում կա ձեռագրի փոքր հիշատակարանը, 10 տողով, եռանկյան ձևով գրված: Բովանդակությունն ասում է, որ ձեռագիրը գրված է Ահմեդ իբն Ամադեբդդինի կողմից Ազին-Շիրիբի դպրոցում (Հիջազում), Մալիբ Աբդել-Խալիբ թագավորի ժամանակ:

**ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Թ. 1ա.—Այստեղ կան 3—4 տող արաբերեն գրություն և երկրաչափական երկու շրջանակներ:  
Թ. 120բ.—Կա ձվաձև արաբերեն մի փոքրիկ կնիք:

№ 200

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍՏՈՒՍՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ**

Թերթերը՝ 356.—Պրակները՝ 45, յուրաքանչյուրը 8-ական թերթից, ի բաց առյալ Ա պրակը, որ 5 թերթ է և նն պրակը, որ 7 թերթ է:—Մեծուրյունը՝ 23,5×17×5,8 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հասարակ բարակ թուղթ:—Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ:—Պաճպանակներ՝ երկուական թերթ թուղթ սկզբում և վերջում:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միասույն:—Դատարկ թղթերը՝ 1, 2, 349—356:—Տաղերը՝ 30—31:—Գծումները՝ ճշշումով:—Գիրը՝ նոսրգիր:—Ձաղաղարյունը՝ լուսի:—Գրիչը՝ դպիր Սուբխա նալբանդյան արդվիճեցի:—Պատվիրատուն՝ անհայտ:—Ժամանակը՝ 1788—1790 թ.թ.:—Վայրը՝ Կոստանդնուպոլիս:—Մանրապյունը՝ Սույն ձեռագիրը ստացված է նվիր Քրիստից 1962 թվականին, Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի կողմից:

**ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

Թ. 4ա.—Նախերգանք:  
Թ. 6բ.—Յաղագս տասնարանեայ օրինացն Աստուծոյ: Գլուխ երկրորդ:  
Թ. 8ա.—Յաղագս առաջին պատուիրանին: Գլուխ երրորդ:  
Թ. 164ա:—Գլուխ Դ: Յաղագս շորթորդ պատուիրանի: Պատուեա զհայր թոյլ և զմայր քո:  
Թ. 192ա.—Գլուխ Ե: Յաղագս հինգերորդ պատուիրանի: Մի՛ սպանաներ:  
Թ. 213բ.—Գլուխ եօթներորդ (պետք է լինի՝ վեցերորդ):  
Թ. 247ա.—Գլուխ է: Յաղագս եօթներորդ և

տասներորդ պատուիրանաց: Մի՛ գողանար, և մի՛ ցանկանար ընչից ընկերի քոյ:

Թ. 312բ.—Գլուխ Ը: Պրակ Ա: Յաղագս ութներորդ պատուիրանի: Մի՛ սուտ վկայեր զընկերէ՛ք ըումմէ՛:

Թ. 340ա.—Գլուխ Թ: Յաղագս պատուիրանաց Եկեղեցոյ ի հասարակի:

Թ. 347բ.—Յանկ բարոյական Աստուածաբանութեան արարեալ ի վերայ այրուբենի:

(Վերջում երեք էջում (թ.թ. 354ա—355ա) տրվում են ընտանեկան-ազգակցական ճյուղագրական երեք ծառեր՝ պապից սեռած որդիների, թոռների, թոռնորդիների և այլ ազգակցական կապերի հարաբերությունը մեկը մյուսի հետ):

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ**

Թ. 3ա.—Բարոյական աստուածաբանութիւն ընձեռեալ զպատուիրանաց Աստուծոյ. յորս պարունակեալ պէս պէս դիպուածք պիտանիք պատկանեալք խոստովանահայրց:

Հաւաքեալ ի գրեանց բազում, և պէս պէս սրբազան վարդապետաց լատինացոց, ի դիպուածախնդիր Աստուածաբանից և եղեալք, ի մի վայր, ի լոյս և ի շաւիղ հոգաբարձութեանայից մերոց:

Օրինակեալ բազում աշխատութեամբ և ջանիք ի տրուպ դպիր Սուբխասայ նալբանդեան արդուինեցոյ:

Ի հայրապետութեան Տեառն Ղուկասու հայրց կաթողիկոսի:

Յամի Փրկչին մերոյ 1788, ի մարտի 25: Իսկ ըստ հայրց ՌՄԼէ:

Ի Կոստանդնուպոլիս, ի տան ուրումն Բալխատրէի գաղղղիացոյ:

Թ. 347ա.—Յանգ ելեալ աւարտեցաւ գիրքս այս ի 1780 (պետք է լինի 1790 շատ հավանաբար) յամի Փրկչին, ի մարտի 25, և ի տօնի Աւետման Տեառն:

**ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Թ. 356.— Началнику етъ книга Теръ Григоріе Меписову.

**ԵՐԿՈՒ ԽՈՍԷ**

Մայր Արոտի պաշտոնաբեր «էջմիածին» ամսագրում, 1950—1952 թվականների համաբնեում, լույս տեսավ Մայր Արոտ Ս. էջմիածնի վանքի ձեռագրատան նախապես ունեցած մի քանի ձեռագրերի, ինչպես նաև առավելապես 1944—1952 թվականներին հոր ստացված ձեռագրերի ցուցակը՝ ընդամենը 100 ձեռագրեր և 10 պատարկներ, 1—101 համարների տակ:

Սույն հավաքածուն կազմվեց Մայր Տաճարում գտնվող ձեռագրերի վրա ավիացնելով այն մի քանի տասնյակ արժեքավոր ձեռագրերը, որոնք Ս. էջմիածնի բերվեցին

Իրանից և Հնդկաստանից, Քեհերանի բնմի նախկին առաջնորդ հանգուցյալ Տ. Ռուբեն արհեստագործական Գրամբյանի և Իրան-Հնդկաստանի բնմի նախկին առաջնորդ հանգուցյալ Տ. Վահան արհեստագործական Կոստանյանի միջոցով, հավաքածու, որի վրա եկան ավելանալ ներհին բնմերից և եկեղեցիներից որպես նվեր ստացված բազմաթիվ այլ ձևազրեք: 1952 թվականին Մայր Աթոռի ձեռագրատունն ուներ արդեն իսկ 100-ի հասնող մի հավաքածու, որի քվում կան մի քանի շատ արժեքավոր ձեռագրեր:

Հետագայում Մայր Աթոռը նվեր է ստանում բազմաթիվ ձեռագրեր ներհին բնմերի եկեղեցիներից՝ առաջնորդների, Ս. Էջմիածնի միաբանության անդամների և քահանայապետներից, ինչպես նաև այխարհիկ անձնավորություններից միջոցով: Օրինակի համար, Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանի միջոցով Քրիստիանից ստացվել է երեք ձեռագիր, Տ. Սուրեն եպիսկոպոս Քոհոսյանի միջոցով Ռոստոմից ստացվել է երկու ձեռագիր, Տ. Հովհաննես քահանայապետի միջոցով Երևանի Ս. Զորավոր եկեղեցուց՝ երկու կտոր, Տ. Նարայր քահանայապետի միջոցով Լեհենականի եկեղեցուց՝ յոթ կտոր, դուրս-պտո՞ք. Աշոտ Աբրահամյանի միջոցով Ռոստոմի և Բակի եկեղեցիներից և Գեղարդա վանքից՝ վեց կտոր, Ռոստոմում բնակվող Տ. Մկրտիչ ավագ քահանայապետից՝ երկու կտոր, իսկ Մայր Աթոռի արխիվից հանված են մի քանի տասնյակ ձեռագրեր:

Ձեռագրերի հավաքման այս կարևոր գործը իր լուրջ և կազմակերպված փուլի մեջ մտավ այն ժամանակ, երբ ազգիս հայոց Վեհափառ Հայրապետը՝ նորին Ս. Օձնորյուն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, արտասահմանյան բնմերում՝ 1956 թվին Մեծավոր Արևելք և Եվրոպա, 1960 թվականին երկու Ամերիկաները և 1961 թվականին Քուրդիստանում Իր Հովվապետական ուղևորությունների ժամանակ, մասնավոր նվիրատուներից ստացավ բազմաթիվ ձեռագրեր և բերավ հայրենիք, կատարելով խիստ շնորհակալ մի գործ:

Վերջին ուրբ տարիներում, Վեհափառ Հայրապետի գահակալության ժամանակաշրջանում, Մայր Աթոռի ձեռագրատունն ստացել է հետևյալ կարևոր նվիրատուությունները՝ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանցից (Քրիստի) 5 ձեռագիր, Հրանտ Նախապետից (Կահիրե) 4 հատ, Սուրեն Դոկտորյանից (Ստամբուլ) 3 հատ, և ապա երկուական հատ Տ. Վահան վարդապետ Տերյանից (Երևան), Տ. Տիրայր վարդապետ Մարտիրոսյանից (Բաբու), Տ. Խաչատուր ավագ քահանայապետ Տեր-Հարությունյանից (Մոսկվա), Տ. Շավարշ քահանայապետ Պալարյանից (Ստամբուլ), Տ. Հովհաննես քահանայապետ Դանիելյանից (Ախալցխա) և Քաղեոս Պապանյանից (Կորդոբա): Բացի այդ, ստացվել են նաև այլ ձեռագրեր Երևանից, Լեհենականից, Քրիստիանից, Նյու-Յորկից, Լոս-Անջելոսից, Կորդոբայից, Ստամբուլից, Ռոմիայից, Կահիրեից, Արևելքից, Նիզոգիայից, Հայկազունից և այլ վայրերից, հայ հավատացյալների կողմից:

Մայր Աթոռի նոր ստացված ձեռագրերի ցուցակի հրատարակության շարունակության այս երկրորդ շրջանում, 1960—1963 թվականներին, «Էջմիածին» ամսագրում լույս տեսավ 88 ձեռագրի և 11 պատահիկների նկարագրությունը՝ 101—200 համարների տակ:

Հարկավոր է պահել խոստովանելից փրկել հայկական ամեն մի ձեռագիր, որ մի սրբություն է հայ դպրության և մշակույթի պատմության համար: Հայ ձեռագիրն էլ, դարերի հողովույրի հետ, հայ գաղթականի հետ զնացել է արտասահման և շրջել բազում երկրներ և օտար ափեր: Հայրենադարձի այս բախտորոշ օրերին, հայ գաղթականի հետ, հայկական ձեռագիրն էլ պետք է հայրենադարձի դեպի հայրենիք՝ իր բուն տիրոջ: Հայկական ձեռագրերը այժմ պատկանում են ամբողջ հայ ժողովրդին և Մայր հայրենիքին: Հարկավոր է դրանք հավաքել հայրենի հողի վրա և Ս. Էջմիածնի կամարների ԼԵՐԵՆ, վերջնական կորստից փրկելու համար դրանք: Հավատացյալ հայի համար չկա ավելի մեծ սրբատեղի քան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Այժմ Վեհափառ Հայրապետի իմաստուն կարգադրությամբ, Մայր Աթոռիս ձեռագրատունը վերադարձված է Ս. Էջմիածնի Հայրապետանոցի վերակառուցված նոր Վեհարանում, որամադրելով այդ նպատակի համար լավագույն հարմարություններն ու ապահովությունը:

Ձեռագրատունն հույս ունի, որ ամեն մի գիտակից հայ, որ ունի հայկական մի ձեռագիր, և նախանձախնդիր է հայկական մշակութային արժեքների պահպանման, բարի կլիներ իր լուծման մոտեցում, մտածելով այդ ձեռագրերի ապահովության, պահպանման և Վեհափառ Հայրապետի հասցենով Ս. Էջմիածին ուղարկելու մասին: Այդ ձեռագրերն այնուհետև մեր ամսագրի միջոցով հայտնի կդառնան բովանդակ հայ բանասիրության և գիտական շախարհին:

Կազմող՝ Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

